

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ



- 1.- ԵՒ. ՊՈՅԱՅՆԱՆ Իմ իրականություն (հերքում)
- 3.- » » **
- 12.- ՎԱՐԱՆԿ Միքոմ
- 12.- » Շուկայ
- 13.- » Հելլենոսի
- 14.- Լ. ՄԵԼԻՔԵԱՆ Վերադարձ տուն
- 18.- Փ. ՃԵՐԱՆՆԱՆ Անկգու երգը սիրոյ...
- 19.- Ֆ. ՔԱՖԻԱ Գիտական բժիշկ մը
- 24.- » » Վեհուլ
(Հայացուց՝ Ր. Քեպուկեան)
- 33.- Ր. ՔԵՊԱՊՅԱՆ Մտնեցում Ֆրանց Քաֆկայի
- 40.- Գ. ԶԱՆԻԿՅԱՆ Որդիմ, որ ուխտ էր եկել իմ արձանին
- 48.- Յ. ՄԱՆՈՒԿՅԱՆ Ռուբեն Մեւակ
- 65.- Դ. ՍԵԻԱԿ Կուռնեղ
- 68.- Մ. ՄԻՆԱՍՅԱՆ Հրաշեայ Անտոնի մահակները
Վիեննայի Միլիթարեաններուն
- 74.- * * * «Բարբ»ի 1986ի բովանդակութիւնը

Բարձր

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ և ԱՐՈՒԵՍՏ

ԵՂ. ՊԱՐԻ. ԲԻՒ 12 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1965 ԳԵՐԳԻՐ

ԵՂ. ՊՕԹԱՃԵԱՆ

ԻՄ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

(Քերթոված)



Եզրուարը Պոլսեանի Հետազոտ անոնի կէտը անձու գրութիւններ են, առաջինը ձեռագիր է, խորագիր ունի եւ ստորագրութիւն (Ե. Պ.), իսկ երկրորդը խորագիր չունի, ստորագրում չէ եւ կը ձգէ անաւարտ գրութեան մը տպատրութիւնը, հակասակ անոր, որ բազմացուցիչ հաստատանքը, բացի վեջիկէն, ունին աւարտուն նկարագիր:


Մեր ծանօտագր եւ ծանօտագրի կողմէ ըր բարձրը փնտրեան ենթարկող գրութիւն է ծանօտագր երկրորդը, որ բոլոր կողմերով կը պահէ իր արժէքութիւնը:

Աստղածառն՝ Հողիս, տիեզերածառն՝ Հողիս, աստղածառն՝ Հողիս,

Հողածին մըն եմ, մարդ մըն եմ, անուն մըն եմ,

Անհո՛ւն Հարստութիւն մըն եմ.

— Վասնզի ծարաւ մը, վասնզի մեծ ծարաւներու յաւիտեանական իրաւունք մը, վասնզի անհուն կարելիութիւններու անբաւածան մը: Ես հին եմ՝ հի՛ն քան Հնագո՛յնը. նոր՝ քան ապագային վերջին նո՛րը: Ես կեանքին հրաշարի մէկ յոյն եմ, թռիչքն եմ, ամենախիստ խորհուրդներէն եմ, արդարեւ արդարեւ լարուող մէջ՝ բոլորէն աւելի ծարաւը, խենթը, անհոգը:



digitised by AR.A.R. 11107-3680

Երկինքները իմ յոյսերս են, իմ կարելիութիւններս են, իմ պտոյսի վայրերս են: Երկինքները իմ մայրութիւնս են, ինձմէ դուրս նկատուած եւ գիտ կանչող առաջին եւ վերջին մարմինս են: Երկինքները իմ հարստութեանս հողն են, իմ սաճարներս են: Երկինքները անհուն խոստում են, անհուն իրականութիւն, անհուն իմ գինովութեանս անհուն ալքոյլը, իմ մեծութիւնս, իմ մահս, իմ փոշիս, գիտ լուսակերպող, արեւակերպող, վերակենսաւորող հրաշքը: Սիրելի փոքրը իրենց մէջ է, սիրելի մեծը իրենց մէջ, սիրելի անվախճանը իրենց մէջ: Երկինքները, անհունները, յաւերժները...

Բովանդակ տիեզերքին եղբայրն իմ: Աստուած Միր-կաթիններով ու անհուններով քայլ կը նետէ, եւ ես՝ ոտքերով, իմ ոտքերու անհուն ճղճիմութիւնը նոյնքան վաեմ է սակայն, քան Միր-կաթինեայ տիեզերքներու լուսամբիխառ ուսումը դէպի Աստուածը համարն ինչին: Իմ ճղճիմ մէկ քայլս նոյնքան ընդարձակօրէն սուրբ է՝ քան տիեզերքէ տիեզերք փոխանցումին անսպառ միջոցը:

Ո՞տք է ասիկա, միջոց կարո՞ղ՝ թէ հաւատքի ուխտաւոր: Աչքեր են ասոնք յօնքերուս սեւին տակ՝ թէ հաւատքի եւ սպասումի խորհրդաւոր դումարում՝ ուղեղիս կրօնք մը պարտադրող: Լեզու է իմինս՝ թէ սա մո՞թ աշխարհին դուռներուն կղպանքը բացող բանալի, Աստուծոյ ձեռքին մէջ:

Ես ոչ բերան ունիմ, ոչ թոք, ոչ ականջ, ոչ որիւէ ոչինչ: Ես չկամ, ինքնութիւն մը չեմ, Աստուծոյ տեղ մըն եմ, Աստուծոյ հրամանապահ մը: Ես ստեղծագործութեան ամէն բլթիջի մէջ, ամէն հիւլէի մէջ՝ յաւիտենական սէր մը ունիմ, յաւիտենական հաւատք մը, եղբայրութիւն մը, իրականութիւն մը: Չեմ մեռնի: Դարման եւ կեանք է ինձի ամէն ինչ: Թո՛ւրջ ու յաջողութիւն՝ ամէն ինչ: Կամք եւ անպարտելիութիւն՝ ամէն ինչ: Ես սէր եմ: Հեռեւաբար ըմբոստութիւն, ազատութիւն: Տէր եւ ոչ ստրկութիւն:

Տեսնել՝ երկինքը՝ ըսել է արդէն ըմբոստանալ եւ յաղթել: Տեսնել մահը եւ մեռելը՝ ըսել է անդին եւ վեր երթալով մահէն՝ յաղթել ու մշտնջենաւորուիլ: Տեսնել եւ զգալ՝ ձաղոխութիւնը եւ ապա մերժել՝ զայն՝ ըսել է դառնալ անդիմադրելի եւ հարուստ՝ ամէն ինչով:

Պէտք է լսել սեւ զանդը էութեան նախակիրով՝ եւ խուլ նայուն անաւոր զէնքով՝ ելլել անոր դէմ: Ատկէ ետք է, որ կարելի է լսել յաջողութիւններուն բուն զօղանջը:

Ահա երկինքներուն եւ անհետի աղքատութեան դէմ՝ պէտք է բռն գորութեան եւ բուն մեծ հարստութեան դրամ կըտորել՝ անհաշուելի թիւերով: Յուսալ, տեսնել եւ ստեղծելն է այդ բուն եւ երբեք չարժէքազրկուող դրամը: Կամքն է, որ պիտի կտորէ այդ դրամները, ընդդէմ բոյս տեսակի չքաւորութեանց: Այդ իսկապէս աստուածային դրամանիւղով է, որ պիտի գնենք աստուածութեան մեր աստուածամասը: Թող տիեզերքը իր բոլոր երկինքներով, բոլոր դժոխքներով մեր գլխուն խորտակուի, — ատիկա տղէտ չէ, եթէ մենք չենք ուզեր: Ատիկա անհուններ գնելու դրամապուրի մը վերածելն է դժբա՛ն Ես այդպէս կ'ընեմ:

Ես յիջար ինչ ընեմ: Կրնամ գրել զայն, հպատակելով սոսկայի պայծառութեամբ ճարտարապետութեան մը եւ կամ չգրել զայն, ըմբոստանալով, նորէն սոսկայի պայծառութեամբ, անկարգութեան մը բացարձակ բմբոստութեամբ: Մեծ կարգն ու մեծ անկարգութիւնը իրենց լինատուղծներով նոյնքան յաւիտենական են եւ նոյնքան շինարար:

Եթէ այրբ բուն առնականութիւն մը չընէ՝ Աստուած թերի կ'երևի. եթէ կ'երևի նուազ կնոջական ըլլայ՝ Աստուած նորէն թերի կ'երևի: Ամէն ինչ տէտօք է ձգտի ինչզինք ըլլալ, որպէսզի Աստուած առաւել չափով մը երևի եւ իրագործուի իր ստեղծած տիեզերքին մէջ:

Ե. Գ.

Արթնցած եմ որսորդական տրամադրութեամբ եւ որսորդներու արդիւնաւոր ժամուն, ազամամութիւն:

Ես թռչուն պիտի չորսամ սակայն. պիտի որսամ լոյս: Ես ու ազոս պէտք ունինք լոյսի: Ինծի եւ մարդկութեան համար ամէնէն անհրաժեշտ բանն է լոյսը: Ծառագայթէ նսպաստակ մը, ճառագայթէ արծիւ մը, ճառագայթէ փիղ մը: Կայ ամէնէն աւելի թանկագինըս — Կոյր Հոմերոսին լոյսը:

Կը իմեմ սուրճ: Ու տրամադրութեանս մէջ կայ խոռոչի թանձր մշուշ: Հասարակ կեանքը արթնցած է, հասարակ մտահոգութիւններու ոտնաձայն կայ դուրսը, փողոցի սալալստակներուն վրայ: Հացին անհրաժեշտութիւնը ոմանք հանած է անկողնէն, ոմանք դրան առջեւ հասցուցած, ոմանք նաւահանգիստ, օդակայան, որեւէ դործատեղի մը, որեւէ խանութ մը: Եւ կայի հասարակ կեանքն ու շուկայի հասարակ խեղճ մաս առ մաս կը թափին փողոց, — հեախտան, էշով, հեծիկով, թաքսիով:

Կը իմեմ սուրճ, կը նայիմ առատադին, կը նայիմ հեռաւոր շէնքերու թանձրատուեր զանգուածին: Քաղաք մը բազմանք: Քաղաք մը մտահոգութիւն: Քաղաք մը խորամանկութիւն: Քաղաք մը խաբերայութիւն: Եւ հազարաւոր քաղաք այսպէս, եւ մի-իմեաւոր դիւղ այսպէս: Անցեալ մը այսպէս, ներկայ մը այսպէս: Մոլորակի մը կենսադրութիւնը՝ — հաց, դրամ, դիւղ: Իերասանութիւն, խաբերայութիւն: Իրբեւ թէ մոլորակները կը դառնան արեւին շուրջ, լոյսի մը շուրջ: Մո՛ւտ: Մեր մոլորակին համար կ'արձանագրեմ: — Կը դառնայ երկիրը ուրիշ բանի մը շուրջ: Մութ բանի մը շուրջ: Անարդար ու խաւար բանի մը շուրջ: Եւ իր շուրս եղանակներն են՝ կերքը, նախանձը, ոճիրը, յափտակութիւնը: Եւ իր ու իր վրայ լինակողներուն մէկ կողմը անօթի է մէշտ, ինչ վարչածեւ այ իշխէ իր վրայ:

Ուրիշ ամէն բան որսալով՝ անօթի մնաց մարդկութիւնը: Միտն ու բոյները անօթի ձգեցին դինք, պտուղները անօթի ձգեցին: Մարդասպանութիւնը անօթի ձգեց, գողութիւնը՝ անօթի, ստախոսութիւնը՝ անօթի: Առեւտուրն ու դրամը չկատարուցին գինք. անոնք յաճախ անօթութեան ծաւալը ընդլայնեցին միայն:

Եթէ այսքան է միայն մարդկութիւնը՝ ոչինչ տուէք իրեն:

Ո՛չ պզտիկ մոմ մը, ոչ ալ ամենակարող Աստուած մը: Ոչ մէկ գաղափար: Ոչ մէկ վարչաձեւ: Եթէ այսքան է միայն մարդկային կարելիութիւնը, բոլոր հետորները թող պոռան, թէ ամէնէն համով միտը կոկորդի միսն է, եւ թող մարդիկ իրարու կոկորդ ուտեն: Թող խօսքի բարձրագոյն արտայայտութեան բոլոր պատրիարքները բսնն, որ եղբօր արիւնն է ամէնէն քաղցր ըմպելին, եւ մարդիկ գիմացիներն արիւնը ծծելով բնաջինջ ընեն իրար, բնաջինջ ըլլան:

Կը ծխեմ սուրճին հետ ու կը նայիմ հետզհետէ լուսցող քաղաքին, ուր եկեղեցիի զանգակատուն ու մզկիթի մինարէ կայ, ուր ընտանեկան յարկ, ուխտատեղի եւ դատարան կայ: Ո՛չ, այս չէ եւ այսքան չէ միայն մարդկութիւնը: Մարդկութիւնը տարբեր է եւ աւելի: Այդ «Տարբեր»ը եւ «Աւելի»ն մարդկութեան չգտնուած լոյսն են, բուն մարդկութիւնն են, անոր հիմնական, յաւերժական մասը: — Կոյր Հոմերոսին լոյսը:

Միտի եւ ոսկիի որսորդութեան շրջանը անցած է: Կը յայտնեմ, որսորդութեան հերոսական շրջան պէտք է ըլլայ հիւլէական ուժի եւ հրթիռներու այս շրջանը: Մեր հայրենական, հին, աղամական մոլորակէն դուրս յորդումի այս հրաշալի ժամանակը՝ մարդկութեան հոգիին համար պէտք է այլեւս ճակատագրական դարձակէտ մը ըլլայ. մակրնթացութիւն մը՝ դէպի բարին, դէպի սէրը, դէպի կապոյտն ու վսեմը, դէպի մեծն ու նուիրականը, դէպի կատարեալն ու աստուածայինը: Ծամբորդութիւն մը այլ խօսքով՝ դէպի մարդկային զեռ շանդրադարձուած կարելիութիւններուն աղամանդեայ դօտին, բանաստեղծներուն մարդաբէսցած Լուսեղէն Գալիբը:

Գիտութիւն, արուեստ, կրօնք՝ կրնան եւ պէտք է համերաշխին սակէ ետք մարդուն հոգիին մէջ, մարդկութեան աստուածաբեալ դէմքին վրայէն վերցնելու համար տգիտութեան եւ տղեղութեան ժամանակներուն յոռի դիմերը, բոլոր աններդաշնակ արտայայտութիւնները:

Մակրնթացութիւն՝ դէպի երկինք, ո՛չ միայն մարմնով, այլ մա՛նուանդ հոգիով: Համաշխարհային մտքի բոլոր պայպերն ու մեծ կաթողիկոսները պէտք է յայտարարեն այս ճշմարտութիւնը: Հոգիին ու Արուեստին ծայրը հասած բոլոր վսեմախոհ լամաները պէտք է հրամանադրեն հոգեկան մեծ տեղաշարժի մը անհրաժեշտութիւնը: Իբրեւ երկրի բնակիչ, ա՛լ ապրիլ կ'ուզենք եւ ոչ թէ վախնալ: Հողիի, արդարութեան եւ արժանապատուութեան վայել արարքներ կ'ուզենք՝ մեծերուն կողմէ փոքրերուն համար, բախտաւորներուն կողմէ անբախտներուն համար, հարուստներուն կողմէ չքաւորներուն համար: Այսքան յառաջդիմութենէ ետք, դէպի մեծագոյն Տարածութիւնը ուղեւորութեան այս շքեղ ժամանակներուն մէջ՝ կ'ուզենք որ խղճերը, լեզուներն ու անձին սեփական հաւատքը ոչ մէկ պետութեան եւ ոչ մէկ վարչակարգի կողմէ մաքսային արգելքներու չհանդիպին, վիճաներու դժուարութեան սխալներին չբախին, ջմահանձոյքներու եւ քաղաքակրթութեան երեսէն շման իրենց բանտին մէջ, ու չստրկանան ու չմեռնին այնտեղ: Կ'ուզենք որ ամէն մարդու իր իրաւունքը արուի, ամէն ազգի

էր հայրենիքը յանձնուի: Ազատութեան եւ իրաւունքի այս ինչ քարանձիւն է, սփռութիւններու շրջանցիչ յաղթարչաւի այս արշալոյսին:



Կ'ելլի՞մ պատշգամ:

Տուները ծածկուած են արգէն արեւի սպիտակ սաւաննե-րով: Թաղարներու մէջ ծաղիկներ կան: Թեթեւ մշուշ մը կը սահի տանիքներու միջքէն, արծաթազոյն յամանդաղ մը: Անշուշտ, այս մեծ նաւահանգիստին քով ծով մը կայ, որ ինքզինք կը նորոգէ. անոր ալիքները արթնցած են գիշերուան խորունկէն արթնցող մարդոց պէս, եւ հիմա իրենց անսպառ ծովուն գեղեցկութիւնը կը յարդարեն, հեւալով, դռաւով, մռնչելով, ուռչելով ու փլչելով շարունակ: Մտեղծուելով ու քայքայուելով, ոմանք ծովուն բացե-րը, ուրիշներ՝ ծովափի ժայռերուն միայն:

Ու նաւահանգիստի ետին կան լեռներ, որոնց դոյնը կը թըր-թըռայ հիմա անթիւ երանդներու մէջ: Հոն ալ բան մը կը նորոգ-ւի նորէն, հոն ալ գեղեցկութիւն մը կը յարդարուի, անտառներն ու պայծառութիւնները խորհրդակցութեան մէջ են:

Կեանքին ուժերը դադանի նիստի մը մէջ որոշումներու կը յանգին: Մահուան ուժերը նոյն ժամուն կը յանգին այդ որոշում-ներու հակառակին:

Եւ մարդոց թիւը կ'աւելնայ ահա փողոցին մէջ. կ'աւելնայ ծուկներուն մէջ անապարանքը, կ'աւելնայ յոգնութիւնը: Կ'աւել-նայ քունքերու ետին խոհր, կ'աւելնայ ջղայնութիւնը:

Եւ ահա ստախօսութեան քանակը աւելցաւ բերաններուն մէջ, ինչպէս եւ որակը: Աւելցաւ տխրութիւնը խարուած մարդոց նայուածքին մէջ:

Երկու մարդիկ կը նային իրարու: Այս քաղաքին մէջ, ու-րիշ քաղաքի մը մէջ, ամէն քաղաքի մէջ, ամբողջ կեանքին մէջ: Պոսին կամ յուն՝ իրենց յայտնել չուզածն է, որ կը կրկնեն յա-ճախ, իրենք իրենց համար:

Միկը.— Իրաւունքը իմա է. խարեցի գինք. ես հիմա քայլ մը առաջ եմ, քան ինք. միլիոն անգամ խարեմ՝ միլիոն քայլ առաջ եմ: Երբ ես կամ, նախ ես իրաւունք ունիմ. կեանքին իրաւունքը ինձմէ կը սկսի եւ հարապատներէս դէպի անհարապատնե-րը երթալով կը կորսուի անորոշութեան մէջ:

Միկը.— Ահա անիրաւութեան տիպար մը. կեանք առ-նկյու իրաւունք չունեցող մը. զիս խարելով քանի մը բաներ պիտի յիշեցնէ ինձի. խիղճս, միտմտութիւնս, իշութիւնս: Երեք ժամ չեղաւ արեւը ծագելուն՝ երեք իրեն պէս խարեբայի հանդիպեցայ եւ երեսուն խարեբայութեան: Մինչեւ իրիկուն՝ որքան պիտի շատ-նան ստախօսները, խօսուած սուտերը: Ընթարտութիւնը փողոց ի-ջաւ, բոյորը կը հաւաքուին կը ծեծեն գինք. դուն տուն գնա կ'ը-սեն: Տունիդ մէջ քիչ մը հանդուրժելի էտք գինք, կ'ուզեն որ եր-թայ եւ սրտիդ մէջ առանձնանայ. ամէնէն շուտ քնացող անգամը ըլլայ ընտանիքին եւ ուշ արթնցողը, եթէ չի կրնար մեռնիլ:

Նորէն Առաջին Անձը.— Պիտի ըսէ՞ մարդկութիւնը՝ այս Հացը քուկդ է, այս սունը քուկդ է: Գարուններ անցնին՝ մարդկութիւնը քեզի ծաղիկ մը չի տար: Արդէն որքան կը ցաւի, որ դուն ալ կաս, ծնած ես եւ շուտ չես մեռնիր, Հաց կ'ուտես, իբրեւ մարդ բարեւ մը կը ստանաս: Կը մտածէ Առաջին Անձը Հետեւաբար: Անշուշտ Աստուծոյ ընտրեալը ես եմ: Ինծի Հետ ծնած մարդիկը իմ սնունդիս ճամբաներն են, ստամոքսիս գործաւորները, փտաքիս բանուորները, աթոռիս խոնարհ երկրպագուները: Եթէ ինծի Հետ ծնածները պիտի չկրնամ գործածել, ալ ինչո՞ւ անոնք իմ ժամանակներուս մէջ ծնան. թող անցեալին մէջ ծնէին, թող ապագային մէջ ծնէին: Աս մարդուն պէս դառնո՞ւկ ըլլամ շուկային մէջ, եղնի՞կ ըլլամ, է՞չ ըլլամ: Քսակիս մէջ ի՞նչ կը մտնէ: Քրիստոս, Կարլ Մարքս, պարապ բաներ, ուրկէ՞ ալ երբեմն կու գան, կը խաչուին, կ'անարգուին, նորէն իրենց պէս մը կ'ելլէ. ձգէ որ աշխարհին յիմարը չի պակսիր: Փառք Տիրոջ, սակայն: Մարդկութեան Շուկայ ըստած անըբ յէպլէպի մը կ'ըլլու պէս քանի՞ Քրիստոս կ'ըլլեր է, քանի՞ մարդարէ, քանի՞ Կարլ Մարքս: Մէկ բան ճիշդ է, կ'ըսէ Առաջին Անձը ինքի իրեն: — Առտու արեւը ծագեցա՞ւ՝ մարդ մը խտրէ, ա՛լ ուրիշ խօսքի չհաւատաս. Աղամէն առդին եւ քեզմէ անդին Հացին կանոնը այդ է, փառաւորութեան կանոնը՝ այդ:

Երրորդ Անձը յստակ չէ առաջինին պէս, ուժգին չէ ու մեծամանութիւն չէ: Պերճախօս ալ չէ բնաւ: Իր մտածումները վերան կիրարկելով կրնան դարձեալ խարել գինք. իր դաւանանքով իսկ կը պատժեն դինք իրաւունքի Հին կողոպտիչները: Երբ ճար չկայ՝ տնեցի կ'ըլլան եւ իբրեւ տնեցի կը խեղդեն իր դոյութիւնը: Երբ ճար կ'ըլլան է չարը, որովհետեւ ու վերացական է բարին վաստիւ: Ու կայ դեռ ամէնէն կարեւորը. դպրոցը շուկային արդիւնքն է եւ շուկային գէնքը: Երբ դպրոցը իր սերունդը, իր մարդկութիւնը կարենայ ստեղծել, անարդարութեան յարձակողականը կը սկսարանայ, կրնայ նոյնիսկ կասիլ: Հացին վրայէն արատը կը վերնայ: Այն ատեն է միայն, որ մարդը առանց ամչնալու կրնայ արթննալ, առանց կարմրելու եւ ուրախ դիտել ծագող արեւին ըսքանչիւ լոյսը, երբ իր Հացին վրայ արատ մը չկայ: Պէտք է արդարութեամբ պետենք մարդկութեան մէջ ծնած ուրիշ մէկը, Հանդիպինք անոր արդարութեամբ, իբրեւ մեր «ԵՍ»ին արտացոլացումը մեղմէ դուրս պտնուող աշխարհին մէջ: Մեր քաղաքակրթութեան արժանատի ներկայացուցիչը պէտք է դառնանք իբրեւ անհատ եւ իբրեւ Հաւաքական միաւոր:

**

Իմացականութիւնը կը սպասէ արեւածագի: Բան մը պիտի յօղանջէ քիչ ևտք, բան մը պիտի ծաղկի, բան մը պիտի ըլլայ: Մարդկութիւնը մեծ է, անհուն է, ծայրէ ծայր կարելիութիւն է: Ան կրնայ յոյսալ, շողալ, շողալ: Լուսնայու կախարդական կարելիութիւն է մարդկութեան միտքը, մարդկութեան Հոգին, մարդկութեան թաղուած ու թաքնուած աշխարհը: Քանի մը տաս-

նեակ զիւօ կշռող զիմեական բաղադրութիւն մը չէ քարայր մը գտնող, տուն մը շինող, տանար մը կառուցանող մարդը: Երկու տաքով անասուն մը չէ շքեղ ու սլացիկ այս կենդանին, որ դառու կրակը եւ զայն կառավարեց, որ երկրի վրայ ճամբայ գտաւ համաձայն երկինքը լեցնող աստղերուն, որ աչքը եղաւ քաղաքներու եւ քաղաքակրթութեանց: Հերոսը՝ ամեհի ովկիանոսին: Հերոսը՝ անմատչելի լեռնազաւթներուն: Եւ այսօր հերոսը՝ մեծագոյն տարածութեան: Եւ սուրբ՝ որովհետեւ խաչուեցաւ: Աուրբ՝ որովհետեւ ստեղծեց գիրքը, ստեղծեց երգը, նկարը, արձանը: Կրցաւ լալ՝ հալածանքի տոնն, ժպտիլ՝ յեղափոխութիւններու տոնն: Բզիկ-բզիկ ըլլալ Ազատութեան համար:

Հակառակ իր վերջին ու խաւարին, մարդկութիւնը կարելիութիւն է շարունակ: Իր ուժերը համախմբած է ցարդ քարայրին, ովկիանոսին ու մեծագոյն տարածութեան դէմ: Հարկ է, որ այդ ուժերը համախմբուին այլեւս՝ նուաճելու համար մեր ներքին յոռի տարածութիւնները: Մինչեւ այդ արարքը չկատարուի՝ վըտանգաւոր են գիտական ու քաղաքակրթական միւս բոլոր արարքները: Վտանգաւոր է առանց այդ հիմնական արարքին՝ կրօնքը: Վտանգաւոր է՝ յեղափոխութիւնը: Վտանգաւոր է՝ արուեստը: Նաեւ ընկերային ամէն վարչակարգ: Նաեւ քաղաքական կամ տրնտեսական ամէն կառույց: Պէտք է հակել առկէ ետք հոգիին վրայ, մարդկային ամբողջ ուշադրութեամբ, մարդկային ամբողջ լըջութեամբ: Բուն հիւանդը ան է, հինէն ի վեր անտեսուածը՝ ան:



Մարդիկ կ'անցնին: Կ'անցնին, կ'անցնին:

Տես, անցնող ամէն անձ անտեսական բանաձեւ մըն է մըտքիդ մէջ, մտահոգութեան խորհրդանիշ մը, զգացումներու զարթոյցի մը: Կա՛մ պիտի տեսնես գինք, որովհետեւ կրնայ գէշ ըլլալ եւ ոճիւր մը գործել այսօր, վաղը կամ օր մը եւ կամ սիրել, որովհետեւ կրնայ շքեղ արարք մը գործել այսօր, կիծի մը, նախանձակէց մէկը, ռի ճարակոյ անասուն մը: Կը բռնես թիթիւ: — Կըրնայ գիտի բուրող անբարոյական մը ըլլալ, այդ թէ կին, ցոփութեանց կազմակերպիչ ծայրաստիճան լիբր գոյութիւն մը, գիւտարար մը եւ բեմադրող մը ահաւոր մտութեանց, անլուր գաւաճանութիւններու:

Բայց նաեւ հիացումով կը դիտես գինք: Կրնայ ճշմարտութիւն մը պոռալ, սրիկայ մը ապտակել, անարգար մը ճգմել: Բոլոր աղտերուն մէջէն կրնայ նայիլ արեւին: Բոլոր ցեխերուն մէջէն կրնայ արձակել իր ոսկի նկարագրին փայլը:

Եւ դուն կրնաս տակաւին անցորդին վրայ լալ: — Կրնայ չքաւոր մը ըլլալ, կեանքին անհամար կոխկրտուածներէն մէկը, անտեսուածներէն մէկը, լքուածներէն մէկը:

Մարդիկ իջած են քաղաք եւ կ'անցնին, կ'անցնին, կ'անցնին:

Անպատեհութիւն չկայ. թող կարճ ըլլան, երկայն ըլլան,

զէր ըլլան, նիւար ըլլան: Բարեճեւ թէ տձեւ՝ մարմինը բան մը չէ, գոնէ այս յօդուածին մէջ: Եթէ ողնին եւ խնայափառը ընկերային ցաւ մը ունին եւ սեփական կեանքի տրամ մը՝ կարեւորը կեանքին մէջ ողնին եւ խնայափառն են: Եթէ օձին սիրան է, որ կը մխայ շարունակ կեանքին բարդ ու բազմազան հարցերուն առջեւ, կ'արժէ խաչուիլ օձերուն համար, իժեհուն համար: Կարեւորը կոյր Հոմերոսին սքանչելի լոյսն է, կարեւորագոյնը Պրոմէթէոսին գողցած օստուածային կրակն է: Ո՛չ երկիրն է կարեւորը, ո՛չ երկինքը. այդ երկուքն ալ նոյնքան պարապ են, որքան որ պարապ մը կրնայ պարապ ըլլալ: Լեցուն են ու կը մնան լեցուն՝ երբոր կըրնանք այրիլ անոնց մէջ՝ Չարէն ու ոչնչութենէն մենք զմեզ ազատելու համար: Ըլլալու եւ ստեղծելու համար:

**

Կեանքը կ'եռայ, քայաքը կ'եռայ. ծովերուն շուրջ եւ մեծ ցամաքամասերու տարածութեանց վրայ կեանքը կ'եռայ: Կը դիզուի ինքնիւր վրայ, կը թափի ապա ամէն կողմ: Կ'ողողէ ամէն ճակատ, ամէն կուրծք, շնչելու ամէն հնարաւորութիւն:

Որտորդութիւն: Մութ դարաններու ետեւէն, զգացական թաւուտներու ետին պահուրսած, Հայոց Գրականութեան զէնքը ձեռքիս՝ պիտի կրակեմ տիեզերքի լոյսին վրայ, եթէ չկրցայ այդ լոյսը բռնել ողջ: Գոնէ այդ մեծագոյն լոյսին փետուրը բերեմ ձեզի, հին ժողովուրդ եղած հայեր, լուսակրօն հայեր: Յուսեալն պարագային՝ բերեմ որսացուած լոյսին գիտիք, մոմիան: Լոյսէ անգղ մը, լոյսէ առիւծ մը: Օ՛, կ'ուզեմ սակայն, որ հայուն տունը բերուած լոյսը ողջ ըլլայ: Ողջ, հզօր, կենսաշող:

Հայուն փնտած լոյսը բերել՝ կը նշանակէ բերել մարդկութեան բան մը, որ ան շունի տակաւին, որուն անհրաժեշտութիւնը կենսական է սակայն: Հայուն փափաքած, հազարաւոր տարիներ ուզած լոյսը: Որուն համար թափառեցաւ, որուն համար լեռնաշղթաներէ անցաւ, գետերէ անցաւ, թերակղզիներէ, ծովեզերքներէ եւ նեղուցներէ անցաւ: Որուն համար խոկաց, արիւն թափեց, իր մեծամասնութիւնը կորսնցուց եւ եղաւ փոքր ազգ:

Արիւնով, բնազդով ու գիտակցութեամբ՝ կը վազենք մեծ լոյսի մը ետեւէն, շքեղ պատրանքի մը ետեւէն: Կը վազենք հազարամեակներէ ի վեր: Եւ աւելի կանուխէն: Պատմութեան հեռաւոր արեւածագէն սագին: Ու մարդկութիւնը երբ զանգուած առ զանգուած, ցեղ առ ցեղ կը քնանար ցուրտ հարթափայրերու վրայ, լեռներուն ստորոտը, անյայտ ու վիխանտներու ափին՝ առանց ոչ մէկ երագի, միայն խաւարով, անասով ու վայրենութեամբ պարուրուած՝ հայերը սեւան մարդկութեան լոյսին գեղեցիկ երազը: Արթնցան շուտ ու ճամբայ ելան կանուխ: Աշխարհը կը քնանար, եւ իրենք կը վազէին բարձրագոյն դադափարներուն լոյսը որոսյալ: Մտոջ էր եւ իրենք կը վազէին: Յուրտ էր եւ իրենք կ'անցնէին ցուրտէն: Լոյսին համար՝ անցան փտանդաւոր հորիզոններէ, փտանդաւոր դեպիներէ, մահացու կիրճերէ: Չար էին իրենց շուրջ բոլոր սոսճերը, արիւնարբու՝ բոլոր սոսճապետներ:

րը: Մտլորակին վրայ՝ մահուան գործիքներու պէս էին ամէնքը, ամէնքը: Հարաւէն եկողն ու հիւսիսէն խուժողը. արեւելքի վրայ յայտնուողն ու արեւմուտքը սահմանին մուայլ ամպի նման կուտակուողը:

Ս՛, քսաներորդ դարու լոյսին գիժաց թարթիչ բացող հնարմատ հայեր, երկիրներու եւ հրկինքներու առաւելագոյն կեանքին լոյսը պէտք է բերել ձեզի: Քայնցիք, յոգնեցաք, կոտորուեցաք: Քայնցին նաեւ ուրիշներ: Անցած են հիմա աւելի առաջ: Աճօթ է սակայն չքայլը, չվազելը, չառաջնորդելը: Երազը մեծ տեսանք: Ու տեսան զայն մեր մասին: Մենք պիտի մեկնաբանենք մարդկութեան լոյսին երազը, որպէսզի մեկնաբանութիւնը ըլլայ գեղեցիկ, ճիշդ, հաւաստի: Փրկութեան նաւը Արարատի վրայ կանգ առաւ. ըստ տեսնուած երազին: Ջրհեղեղ՝ կը նշանակէ ամէն տեսակ վայրենութիւն, ամէն տեսակ նենգութիւն, ամէն տեսակ անբարոյութիւն: Ու բարձրագոյն դազաթի մը վրայ կանգ առնող տապանը լոյսին տապանն էր, զադափարական վեհութեան նման էր: Իսկ Արարատը՝ հայուն Հոգին, այդ հոգիին նիւթական պատկերը:



Սա քաղաքին արեւը ծագած է ու ծագելէն ասդին անցած են քանի մը ժամեր: Տեսած եմ այդ արեւը շատ, քսան տարի. կը տեսնեմ միշտ. փիւնիկեան արեւ մըն է: Առեւտրական արեւ մը: Արդէն, շատ մը երկիրներու արեւը փիւնիկեան արեւ մըն է հիմա, առեւտրական նախասիրութեամբ. իր լոյսին լաւագոյն մասը կը դնէ վաճառականներու գլխուն վրայ եւ ոտքերուն առջեւ: Յետոյ՝ խանութպաններու վրայ, յանձնակատարներու վրայ, լուսալսափոխներու վրայ: Այլիւրի տոսյրակներու վրայ, ձէթի տիկերու վըրայ, իւղի տակաւններու եւ օճառի դիզուած կաղապարներու վըրայ: Կը սիրէ աւելի պաղարը, դրամատունը, աղտերու եւ լուսանքներու մէջ կորած նաւահանգիստը, արիւնի բարկ եւ վատաւուող հոտեր արձակող սպանդանոցը:

Արեւը քսաներորդ դարու մեծ քաղաքին, բազմազգ ու բազմապիղծ: Հազիւ սրբատեղիի մը բարձունքին հպած՝ ամբողջ պայծառութեամբ կը խուժէ փողոց, կ'ողողէ մարդկային մեծ խաբարայութեան շուկան, շահագործումի բազմանուն ու բազմաճիւղ հաստատութիւնները, նենգութեան եւ ստոր նկատումի անհայելի գրասենեակները, կրպակները, անբարոյութեան կապելաները, յայտնի առուններն ու անյայտ հաւաքովայրերը: Քանի մը տասնեակ գրատունի ապակեփեղկին վրայ հազիւ կը ցոլայ, քանի մը դըպրոցի վրայ հազիւ, քանի մը հիւանդանոցի վրայ հազիւ, որբանոցի վրայ հազիւ: Կը շառայէ ինքզինք ալլուր, գեղեցկութենէ հեռու, արդարութենէ հեռու, եղբայրութենէ հեռու: Կարծես կ'ուզէ օժանդակել սուտին, առաջնորդել զայն:

Լաւ չէ այսպէս, ճիշդ չէ այսպէս: Մինչեւ որ լաւին համար մէկ անգամ ծագի, գէշին համար ծագած կ'ըլլայ շորս անգամ: Ու կը մարի ուշ, ո՛ւշ: Գրեթէ չի մարի. օրինակ, մեծագումար դրամատունի մը վրայէն: Ու կը տարուէ մտածել մարդ. — Հիմալա-

յա՞ն է միթէ բարձրագոյն պագաթը այս մոլորակին, թէ Ուոլ
Սթրիթի դրամատուներու հսկայական վայրը, օրինակ:

Մեծ քաղաքակրթութիւն, մեծ քաղաք, մեծ անարդարու-
թիւն: Մինչեւ որ մտածումը չյարգուի, մինչեւ որ անհատներու
եւ ազգերու արդար զգացումներուն վրայ մարդկութեան, այսին-
քը՝ պատմութեան արեւը իր լաւագոյն լոյսը չսփռէ՝ տաքնապ է
ամէն կողմ, խռովք է ամէն դի եւ աշխարհաւեր պատերազմ:

Արեւի արդար բաշխում՝ հողերու, իրաւունքներու եւ ար-
տօնութիւններու արդար բաշխման հետ: Գրիչն ու բերանը քանի
որ հոգեկան էակի մը կը պատկանին, պէտք չէ ըլլան պետութեան
մը, վարդապետութեան մը կամ որեւէ հաւաքական դրութեան մը
հրամանին տակ: Պէտք է պարկեշտօրէն կատարեն սեփական մտքի
մը հրամանը, ըլլան հարազատ զգացումներու թարգմանը: Անոնց
հրամանը բարձր դաստիարակութիւն տեղած բարոյականէ մը պի-
տի դալ, ազատութեան մոլի սէրէ մը եւ ուրիշներու հանդէպ խոր
իրաւաճանաչութենէ մը:

Բարձր գիտակցութեան եւ նոյնքան բարձր պատասխանա-
տրութեան համար են այսքան յոռաջայտելի գիտութիւն, այսքան
նրբացեալ քաղաքակրթութիւն, այսքան լայն մշակոյցի: Ամօթ,
քանի որ այդ բոլորը կը գործածուին հակառակ իրողութիւննե-
րու օգտին: Արեւը եւ արեւին հետ նաեւ լուսինն ու աստղերը՝
միայն կամ առաւելարար առեւտրական պիտի չըլլան, պէտք է ըլ-
լան նաեւ գիտութեան, արուեստի եւ սիրոյ պայծառութիւններ,
եղբայրութեան յոյսեր: Հողեկան վերելքի առաջնորդ ճաճան-
չաւորումներ: Լեռան կողէն ծագող լոյսին հետ պէտք է խղճի մը
պագաթէն ծագի նոյն ատեն արդարութեան լոյսը:

Բայց...

Ահա զօրաւորներ, ահա երկրային կեանքի ամենակարողներ
եւ ահա... քառսը:

Մագած է արեւը, ճափոնական, չինական, հնդկա-իրանեան
ու արարական արեւը: Պիտի մեկնի Եւրոպա, ինչպէս Փան-Ամե-
րիքանի որեւէ օդանաւ, ինչպէս որեւէ օդանաւային ընկերութեան
որեւէ օդանաւ: Այս, կարծես թալտէի օդակայանէն թռիչք առած
է, կտրել-անցնելէ ետք դարերու թմրելի արթնցող Ասիան, երկ-
րագունտին այդ մեծ ննջարանը, ուր հարիւրաւոր տարիներ երազ,
կիրք եւ հոգի՝ մտած էին խոր քունի մէջ, տգիտութեան պորը ու
զեղին ծածկոցներու տակ:

Պահ մը կանգ առնելէ ետք Ասիոյ այս արեւմտեան եզերա-
հողին վրայ, օդաչու եւ հոքեալ փոխելէ եւ թալտէի մեքենադէտ-
ներուն կողմէ մաքրուելէ ետք, այս արեւ-օդանաւը, յաւիտենա-
կանութեան այս խորհրդաւոր գեր-օդանաւը՝ պիտի անցնի յունա-
կան կղզիներուն վրայէն եւ կամ Ափրիկէի եզերքներէն, բախտով
այս անգամ գուռը կամ բազմաթիւ պատուհաններէն մէկը մարդ-
կային պատմութեան ուրիշ մէկ ննջարանին, ուր քնանալէն, ու-
կիանոսներու օրօրէն եւ անօրինակ ջերմէ մը, անօրինակ տգիտու-

թենէ մը՝ սեփեր են մարդիկ: Ուր գաղաններ արթուն են շարունակ, իսկ մարդիկը մերկ ու խեղճ կը ննջեն: Մերկ ու խեղճ՝ մասնաւորաբար իմացականութեամբ, մասնաւորաբար հոգիով, գիտակցութեամբ: Գոյութիւնը առաջնայն հիւանդութեամբ մը վարակուած մարդ էակի անոնց հոգին մուրի մէջ թաթխուած, իր խոր նիւրհին մէջ կը զտանցէ միայն, կը ճշայ միայն: Մարդկային ազգակիցով մը միայն կապուած է իր քաղաքակիրթ եղբայրներուն, քաղաքակիրթ մարդկութեան: Մերկ ու խեղճ է անոնց զիտակցութիւնը՝ ածուխի պէս, որ չէ կրցած այրել, կարմըրել, շիկանալ ու շիկանալէն ճերմկիլ: Ո՞ր ժողովուրդը ածուխի այր սեւ գոյնը պիտի չունենար, եթէ ունոր գիտակցութիւնը հանքածուխի խորանարդ կաղապարի մը պէս չվառէր ու շիկանար կեանքի հնոցին մէջ, մաքի քաղաքակիրթութեան մը եւ հոգեկան մշակոյթի մը մէջ:

Տարօրինակ, տարօրինակ. բոյսերը այդքան արագօրէն աճեցնող Ափրիկէն, ինչո՞ւ կը դժուարացնէ իր մէջ մաքին աճումը, հոգիին թոխչքը, երազին ծնունդը:

Կարելի չէ, կարելի չէ բնաւ այս վիճակը, բոլոր օդանւերուն, բոլոր շարժող, յառաջացող եւ թռչող բաներուն նախատիպար արեւը պիտի արթնցնէ նաեւ մարդկութեան սեւ եղբայրները, ամէն օր բախելով անոնց ննջարանի դրան կամ պատուհաններուն փեղկերը:

* *

Մաղած է արեւը եւ կարծես կէսօրուան պահէն քանի մը քայլ ասդին է: Քաղաքին մէջ խորը կեանք կայ, ահադին կեանք: Կենդանութիւն, աղմուկ, եռուզեռ: Մեծ ու պզտիկ ձուկերու ահռելի խորքն սուր հոտ մը անշուշտ, ամէն մարդու ունեզերը գրգռող, տարածուելու համար արեւին օժանդակութիւնը վայելող: Ու կայ, քաղաքին մէջ, այդ հոտին չափ բարկ հաշիւ: Շահամբոյթիւն, Շահերու տեղատուութիւն, տեղ մը: Շահերու մակընթացութիւն, ուրիշ տեղ մը: Շահերու բախում, ամէն տեղ:

Եւ այսպէս, հրապարակէ հրապարակ, փողոցէ փողոց, խանութէ խանութ: — Շահ, կորուստ: Տնտեսական ոստում, տնտեսական կործանում, սնանկութիւններ: Շուկայ մը եւ սակարան մը, որոնք ժպիտ կը բաշխեն, արցունք կը բաշխեն:

Քաղաք: Մարդիկ: Կիրքեր: Դրամներու եւ դրամանիշի ջրդային տեղափոխութիւն մը, անընդհատ հոսում մը, խենթ, ծիծաղելի եւ ողբերգական բան մը: Շուկային մէջ ամէն մարդ նետած է ձկնորսական իր ուռկանը: Շուկան պղտոր ջուր է եւ ունեզեր գրգռող ձուկի հոտ, անհամար շահերու ծովեզերք մըն է, ծովածոց մը:

ԵՂՈՒԱՐԴ ՊՕՅԱՃԵԱՆ

Մ Ի Ր Ա Ժ

Ձեմ իմանում այստեղ ինչ շեմք է լինելու

հագար տարի յետոյ,
 Բանիսի՞ն է անճրել տեղալու կածոնի կանաչութեան վրայ,
 Բայց գիտեմ՝ կ'արիւնի, աշունհա՛ր, դաշունհա՛ր կարօտը քո,
 Ինչպէս մայրամուտ կրծքիս ամայ...

Հրապարակից մինչեւ ձեր տան տարածութիւնը

որքան որ կայ —
 Ձափում է միայն չարչարական, խոնու, խոնարհ քայլերով-
 Այդպէս մուգ-կապտան է բացակայ,
 Երբ քափառում են շէկ հովիւները

լոյս, կամարակապ վայրերով :

Բացկեռասագոյն ժպիտներդ քաց — չորցած ծփածք յատակին —
 Արդեօ՞ք կը քայլե՞մք, շուքոյ վրաս,
 Կը բացուեն բոսոր վարագոյրները եւ վիթրինները անապակի-
 Տժգոյն վարդերից գոյներ կը ըլնեն, գմերն պիտ' սղեն համապագ :

Ամբիջը բիրտ է, ահեղի,

Ձի գթայ անգամ «հասարակագէտ» այս ոչ հասարակ աղբիւն,
 Հաւատա՛՛ք երա փրկարար անձը, սիրահարը սնկարիլի,
 Մի անբողջ սիրտ է, սկանակիտ է, սակայն... անմիտ է

Եւ էլ չի՛ գայ :

84-3-12

Շ Ո Ւ Կ Ա Յ

Նկուզ... կուտակե՞մք; Աղմուկ... Անցուղի...

Մըգի դէզերը՝ սերկելիլ, ապար...

— Ասա ինձ, գերուիշ, այս ֆանդուած ճիւղին
 Ինչո՞ւ է տերել կանաչել մի օր...

Բանի՛ր դալար սէր ծախուել է փողով,

Բանի ցանկութիւն ու շշուկն է՛մքոյդ.

Իսկական բերկրանք՝ սկիւ կեղծ շոգով,

Խոտտովանեմքներ ծախուել են անա՛ծ :

Մետաքում, սաս՛,

Բանի որդ-շերամ՝

Թիքեա դառնալու դեռ հաճախելուսին.

Մամակալը սառն

ի՞նչ բեռ է սեղմած

ի՞ր այսչափ երբին ու բարակ ուտին :

digitised by A.R.A.R.®

Դանձակ կիճօ, — խաւար տաղաւար,
 Դրան մօտ՝ լուցկի, ծնառ, ամելի...
 Կաշի է բուրում խորշը ու տաւար.
 Դեղեր, սրուակներ եւ օժանկիւք...

Կաւի գանգուածը
 ստացաւ մեծ հաք,
 Դաւաթը դարձաւ յոռուցք մեռեալի —.
 «Թէ ինձ մէջ պիտի գիմի յայտար տաք՝
 մի օր վառուել է
 արիւմ քսելիլի...

Արիւնից՝ գիմի, մի՞թէ սա չէ քո
 պատասխանը, ո՛վ
 պոետ յուսարեկ.

Ամէն ինչ բողբօւմ կերպը անցեալի,
 Սակայն չի փոխում իմաստը երբեք»:

84-3-12

Հ Ե Լ Լ Է Ն Ո Ւ Հ Ի

(ԵԳԷԱԳԱՆ ԵՐԳ)

Եւ ինչու եմ չեզ պատկերել հիմա՝
 Մոխրաբայր ծովի
 Լուսնդ աւազում.

Եթէ ցրմորք ես ցալացի՛ր, գնա՛,
 Եթէ իրակամ՝ մտնեցի՛ր, — հասա՛մ...

Թողարձակուած ու
 վարդապըտուկ ծիծ,

Ջուրի փոխարէն հո՛ւրն է վարարում.

Մոխրագոյնի մէջ վառ կամայ մի գիծ,
 Հրկիզեալ կայմի կտոր՝ հոպերում...

Կանայն շողն է մոխրաբայր աչքիդ,
 Հիր առագաստը՝ քո փէշը ճեղքուած.
 Մի երկար ալիք — որ չնահանջի —
 հասել է միջեւ սրունքներդ բաց:

Ո՛չ, քանգահելը էլ կարելի չի, —
 Խ՛մ աստուածուհի, այնքա՛ն անասուած...

ՎԱՐԱՆ

85-3-19



Լ. Մ Ե Լ Ի Ք Ե Ա Ն

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ա

Տ Ա Ի Ն

Տիկին Մորլին բոսոր ծագիկներով ծագիուն արագլածաղիկների ու խոր- դենիների կուէ ծագիւմանները շարեց իրենց անակի արևոտ պատի շրթին ու յայտարարեց ամուսնունն.

— Բորբոթ Մորլի, վստահ եղիր, որ այս ամանները մինչև մի շաբաթ ներս տարուն, այլապէս աշան ցրտից կը մեռնեն խորդենիները:

— Օ. Բէյ, Օ. Բէյ, — փնթփնթաց պարոն Մորլին, իրեն միշտ ընկերացող «Բըզվալըը» զարեջրի թիթեղատուփը նետելով ազրաման եւ մի շրացուած գարեջրի տուփ բայելով, — ամէն տարի, քառասուն տարի է, որ ամէն տարի աշանամուսին նոյն փոթէ ես կը դում:

դէ', 40^օ ապուշ չեմ, ի հարկէ քո ինամած խորդենիները, աղանակուցներն էլ, բոյոր ծագիւմաններդ էլ ներս կը տանեմ: Մովն այսօր այնպէս հանգիստ է. դեռ նոյնեմբերան քամիները չին ըսկըսուել... հոգ մի' արա, այ կին: Միթէ՝ ամէն աշուն ես չեմ, որ անում եմ էդ բաները:

— Մոռանում ես երբեմն պատուէրներս, — ասաց տիկին Մորլին՝ թեքթեք դիտելով մի պահ ամուսնունն ու նրա մեռքի զարեջրատուփը եւ շարունակեց իր շրացած տերեւների աւելումը երկար փայտեայ պուշով յարդետոյ աւելով: — Կարծեմ մի քանի ծառ էլ կտրենք, այ, էն մեր ետեւարակի ծախ կողմի երկու կաղնիներն այլեւս փոռել են. կտրենք ու վառենք էս մտեւ: Չայնասիլուն յայտարարեց սաստիկ ցուրտ է լինելու: Քարիւղը սուղ է, էդ դու գիտես արդէն:

— Լաւ, լաւ: — Մերացող պարոն Մորլին շոյեց իր հաստ բերիկն ու վառեց իր թնդահոտ «Քամըլ» գլանիկը, որի կապտաուն ծուխը խուսացած ու լորաների վերածուելով՝ մի հեշ տատանուց միջոցի նօսը թափանցիկութեան շերտերում ու յետոյ տարածուեց, անյայտացաւ տիկերակսն, անհունութեան մէջ: — Վերջերս շատ ես մտահոգում: Այսքան տարի ուղրել հնք եւ պիտի աղրենք մի մեւով: Հօ քաղցած չենք մնայու: Տղաներն արդէն փերջացրին համալարանը: Լուրջ աշխատանքի կանգնեն. կը տեղափոխուեն իրենց բընտկարաններն ու ես ու դու էլ կենսաթոշակով նոյա կը գնանք:

— Ատուած տար, ես էլ կարողանայի քեզ նման մտածել, Երեւի զարեջրուն է քեզ լաւատես դարձնում...

Երկուն էլ նստակեաց հողմոյթից դէրացած, երկուն էլ կապուտայնայ ու միւսաներմակ մաշկով՝ մկնորական Բէլիները ճերմակած մազերին եւ ամերիկեան անխուսափելի համազգեստով զրուցում են մըրթ-

մըրթալով, յուզած մարդկանց իւրայա-
տուկ ճարճքած շնչոով ու կէտ դար
կրկնուած, հնամաշ բառերով:

— Ասիր, ծովը հանդարտ է. չե՛ս
լսում իր դաւադիր աղմուկը: Ինչ է. էս
չիլնք փոթորիկ է լինելու: Գնամ ներս,
իտզի խորովածը սառնարանից հանեմ:
Ընթրիքին տղաները սուկը պիտի ուտեն:
Մերին պիտի դա՛յ արդեօք մեզի: Կի՛նի
գնեցի՛ր:

— Որ մէկ հարցիդ պատասխա-
նեմ: — Քահ-քահում է պարոն Մորին
զուարճապահ: — Մի բան հարցրու, ըս-
պառիր պատասխանիս, յետոյ միւս հար-
ցըք նետիր: Գինին զննի եմ. Քայիֆոր-
նիայի կարմիրը: Թէ՛ ածա՛ն է եւ թէ՛ հա-
մեղ: Բեռնասարի մէջ թողի: Դու զնա՛
խոհանոց. ես էլ զնումների գոմրիդը
ներս կը բերեմ, բայց որտեղի՞ց իմանամ,
թէ Դանիի նշանածը կը դայ մեզ հետ ու-
տելու, թէ ոչ... Ես հօ՛ մարդսրէ չեմ:
Արդէն փերիքս, Դանին էլ, Մարոն էլ
տարօրինակ ձեւեր են ընդունել: Կար-
ծում ես մարաւետ՝ են ծխում, թէ հո-
փային...

— Օ՛հ, բաւական է. կանգ առ: Մեր
որդիները էդ գործերի մէջ չկան ու բնա-
չնն էլ լինելու: Որտեղի՞ց են քոքային
ձեռք ձգելու... Գիտես էդ ինչքա՛ն թան-
կարժէք ծիւղիք է... էդ հարուստների
զաւակներին է յատուկ... Հեքիաթներ
մի հիւսեր, Օ. քէ՛յ:

Աւ, զանազորէն, իրեն վատակ-
եալ, երկարավիզ հին աւելն էլ ծաղկա-
մանների կողքին պատին յենելով, իր
հնամաշ հողաթափերը ջուտացնելով
քայլում է տիկին Մորլին պարսիղակից
դէպի իրենց հիւղակը:

Իսկ Առլանտեան ովկիանոսի այն
փոքրիկ ըրթմասը, որ Մորլիններին է
պատկանում, իր մերձակայ այիջներով
պալիս է, շայում, կործնեալ ամէնօրեայ
իր քարեւն» է սառւած նրանց ու չքունը-
ւող, չարճճի աղայի նման հեռալուով
փախում է դարձեալ դէպի հեռուները
սնծայրածիր ջրերի... դէպի Եւրոպա:

— Դասաւանդութիւններդ վերջա-
նալու վրայ են արգէն, — ընթրիքից յե-
տոյ տիկին Մորլին դատում է իր կըրտ-

ներ որդուն՝ Դանիին: — Ինչո՞ւ ես այս-
քան մտածկոտ, մաապրաղ, սիրելիս: Եր-
տով աշխատանքի կ'անցնես, ընտանիք կը
կազմես, Մերին այնքա՛ն սիրում է քեզ,
անուշիկ աղջիկ է: Այնքան օրինակելի
մայր կը դառնայ զաւակներիդ...

— Ինչե՛ր ես խօսում, մայրի՛կ:
Դուք բոլորդ էլ միբճուել էք այս ցնցող
ցնորամտութեան մէջ: Մի՞թէ չէք լսում
ամէնօրեայ մարգարէութիւնները մեր
նախագահի: Մի՞թէ հայրիկն ու դու
պատկերասփիււ չէք դիտում...

— Դիտում ենք, որդիս, բայց այդ-
քան յոռի չենք տեսնում ամէն երեւոյթ,
ինչպէս դու եւ քո ընկերներն էք տես-
նում: Փոխիր ընկերական շըջանակդ,
Դանի:

— Իսկպէս, իմ անման ծնողնե-
րս... մեր մէջ դեռես նկատելի է այն
խելյալ խանդավառութիւնը, որն ու-
նեցել էք մեր անցեալ կեանքի ընթացքին:
Բայց այժմ ժամանակները տարբեր են...
ինչո՞վ էք այդքան խոնդալտուած...
որ հրթիռների միջոցով ամբողջ երկրա-
գունաը պիտի դիտայտակ փուլ դայ...
որ քոլորս էլ մի քանի մոմենտում պիտի
ոչնչանանք... կամ մենք եւ կամ էլ սո-
վետները շուտ թէ ոչ կը սեղմեն կո-
ճակն ու... այլեւս ինչո՞ւ ընտանիք կազ-
մել... տներ շինել...

Դանիի բարալուկ ու գունատ ըրթ-
ները գողում են իր ներքին յուզումից:

Ծրկայնահասակ, նիհարկիկ, սուղը-
րոտ իր կառայքը ողնայարից թեքուած
է մի քիչ՝ ոնց որ ստպատուօրի, եւ կար-
ծեա թէ համակ մարդկութեան գոյու-
թեան կամ լղոյութեան թնճուկն է, որ
բեռնել է ուսին:

— Հը՞... զաւակներ ունենայ...
մամի, այդ բոլոր փիլիսոփայութիւնը
հայրիկի ու քո սերնդի համընթաց դա-
դափարներ էին. այսօր այլեւս չկան դը-
րանք:

Տիկին Մորլին լացալուծած դիտում
է իր դեղաղէմ ու յոփազանց հաստ ար-
պակիներով սկնոցներ կրող որդուն, Դա-
նիին:

— Ապա ինչո՞ւ ուրեմն այսքան տա-
րիներ աշխատեցինք, ձեզի սառած սալու



Համար, գովել ուղարկեցինք: Գուցէ աւելի նպատակալարմար պիտի եղած լինէր, եթէ Իրլանդիայից ներդադրած շատ սուրիշ քնտանիքներէ նման, Հայրեկոզ ու ես, մեր աշխատածը վասնէնք մեր ժամանցները գոհացնելու: Այդ էր երեւի մեր ցանկացածը, Հա՛:

— Մայր, խնորում եմ նստես, աւաւաւսիկ, մի բաժակ գարեջր՝ ևր կ'ուզես, թէ գինի. Հանգստացիր, որպէսզի կարողանանք փոխարարեցի: Ես անպատճառ ուզում եմ, որ դուք Հասկանաք ինձ: Դուք կառչում էք մեր անցեալին. իսկ մենք, այսօրուայ երիտասարդներս, պարտաւոր ենք տեսնելու իրականութիւնը, թէկուզ այնքան դառն ու անհանդուրժելի: Վաղն արդէն մի սեւ, զորշ պատաստէ: Ոչինչ սեննեք չաճելու վաղուամից:

Տէր եւ տիկին Մորլին Միացեալ Նահանգներ են գաղթել շուրջ կէս դար առաջ քրեկն Դենդալայր Իրլանդիայից՝ Համեմատաբար աւելի բարեկեցիկ կենցաղ մեք բերելու Նոր Միասնի մէջ, Բայց Հիմա, ի տես իրենց զաւակների մտափոխութեան՝ անտառի մէջ կորցրած երկու անգոր մանուկներէ պէս նախում են միմեանց:

— Դանի, — Թախանձագին ստում է պարոն Մորլին իր խորացած կնճիռների միջից ու իր ծխամորճը դանդաղօրէն հանում բերանից, — ենթադրենք, թէ մասամբ էլ մեր կարծածը իրականութիւն լինի, բայց ինչո՞ւ մեր մեռեցիքը ծալած սպասենք, որ պէտք է բոլորին ոչնչացնեն Հրթիռներով: Արդեօք աւելի խելացի չէ՞ր լինի, որ դոնէ մինչև այդ անուշիկ օրը ապրենք մեր քնականոն կենցաղը, աշխատենք, Հե՛մենք մեր աշխատածի արդիւնքն՝ ինչպէս մեր մայրն ու ես արինք այսքան երկար տարիներ...:

— ...Գուցէ մեր տղաներին չպիտի թոյլ տայինք, որ Բրաուն Համալսարանը սովորէին, — պիտիը կախած սեղանին ու իր արտասուաթոր աչքերն յամառօրէն մի անորոշ կէտի յառած մրմնջում է տիկին Մորլին, — այդ Համալսարանն է պատճառն այս դժբախտութեան:

— Ո՛չ, Հազար անգամ ոչ, — դո՛չում է երիտասարդ Դանին, — ես մտնում եմ

թէ դու ինքդ, քո մեռեցիքով եւ միւս իրլանդացի նորագաղթողների օգնութեամբ ինչպէս կատուցեցիր այս մեր տնակը, — աւելացնում է տղան եւ նախում սեննակէ շորս բոլորքն ու դառնում դէպի պատուահան, ուր ճեփ-ճերմակ աւազների եղբին ջրերն են կարծես միտումնաւոր զրդիւնով չփում ծովափն ու աւազուտը, լիւզելով ովկիանտի խորերը: — Սակայն իմ եւ իմ եղբոր մէջ չկայ այդ երազը, մենք առեն չենք շինելու... մեր երազներն սպանուեցին այս անընդհատ կրկնուող, սարսափելի ահազանկերից: Եթէ նոյնիսկ պատկերասփիւռի ու ձայնասփիւռի միջոցով մեզ Հաղորդածի կէտն է, ճիշդ է՝ ուրեմն ոչնչանալու ենք բոլորը... շուտ թէ ուշ:

Դանին այնքան Համոզուած է իր դադափարին մէջ, որ այլևս ծնողները թեւաթափ են լինում. մանաւանդ մի ուժեղ յետմիջօրէ իր Հետ արամարանկուց յետոյ. Դանին մտնում է անվարան, ասելով՝

— Մայքն ու ես որոշել էինք մի օր մեզ Հետ բացատրուել, իմ սիրելի Հայրիկ ու մայրիկ: Դէ՛, այսօր առիթն Հանդիսացաւ: Թէ՛ Մայքն ու թէ՛ ես տխրում էինք մեր ծրագրերից... ուզում եմ ասել՝ այն ծրագրերից, որ դուք մեր մտքի մէջ ունէիք մեր կեանքի Համար:

— Իսկ Մերի՞ն, — Հաղիւ արտասանում է տիկին Մորլին յուսակուտօր:

— Մերին եթէ ցանկանայ, կարող է դաւակ ունենալ առանց ամուսնանալու: Այդ արդէն նրա մարդկային իրաւունքն է: Ես ինքս ոչ մի ցանկութիւն ունեմ Հայրութեան...:

— Երկու զաւակ տուեցինք այս երկրին, — յեղում է տիկին Մորլին՝ իր դողդոջուն մեքը սահեցնելով նստած ամուսնու թիկունքին, — այժմ մնացինք ես ու դու:

— Հող մի արա, — ծերացող մարդը շոյում է իր ետին կանգնած ծերացող կնոջ այնքան շարալար աշխատած Հաստը, — եկանք այստեղ,

հերկեցինք այս հողը, ազարակներ մշակեցինք հարուստներին, այդ բուրբին է դիմաց ստացանք նիւթական մի որոշ արտադրութիւն՝ Սոշլի սէքիւրիքի... կը գնանք մեր իրական տունը, Իրլանդա:

— Հապա՞ մեր խրճիթն այստեղ...
— Կանչիր Ամադանդէթի լրատուն: Վաճառքի դիր:

— Թոռներ չենք տեսնելու:
Այլեւս ինքն իրենից հլած պտտակնոջ հնձկտուքն է թափուտ միջոցի մէջ, մինչ նոյն պահին էլ ձայնասփիւռը Սառազաթէի ճերմորդ անդալուզանս վարսն է փոփոկում:

— Ես այնպէս սպասում էի Մայքէին պսակելու:

— Ի՞նչ, այս այսպէս պիտի լինէր: ձակասազիր: Գոնէ Իրլանդիայում կ'ուսնենանք մեր ազգականներն ու նրանց թոռնիկները: Մի լացիր, կին, հեանքը շատ է կարճ... Մեր տնակի փոխարժէքն էլ բաժանենք մեր երկու սրբիներին միջոց: Ի՛նչ, ի մերջոյ Դանին ու Մայքէր մեր երջանկութիւնից ծնած տղաներ են... այնպէս չէ՞:

— Այլպէս է, այո՛, — իր համակ կենսունակութիւնից դատարկուած՝ փա-

րում է ամուսնուն տիկին Մորլին, — մեր զաւակներն են վերջապէս...: Թող իրենք էլ վայելեն մեր աշխատանքի մի մասը...:

— Գիտէի, որ ու՛րտի հասկանալիք գրուիլինները: Եկ, միասին մի բաժակ յարեջուր ըմպենք: Գողնոցը քակիր: Բա՛ն է աշխատես: Այսուհետեւ միայն ձկնորսութեան կ'երթանք եւ կը հանդուստնանք...:

Եւ Մորլինների տառապանքի զեղեցկութիւնը զմուսում է Ամադանդէթ պիւղակի ծոյսփին, ուր նրանց վաղեմի երջանկութիւնը մնում է փակուած առ յուսէտ, նրանց անպաճոյճ տնակի շորս պատերի մէջ:

— Նաւով եկանք յիսուն տարի առաջ, — յուսարեկ յառւում է Հայնացքը Ասլանտեանի կանաչ, սղմուտ ջրերին, — ի՞նչ չար է երկունս այս ովկիանոսը... յայտ, ինչքում եմ օգնեալով վերադառնանք Իուրլին: Օ. քէյ: — Օ. քէյ: Օ. քէյ:

ԱՌՒՍԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ



ԱՆԼԵՁՈՒ ԵՐԳԸ ՍԻՐՈՅ...

Դարերու քանցքին բացուած,
Քարեզէն հայեացք,
Դէմքերու ուղեկորոյս տեւաւմով՝
Քնատօրէն կը նայիս...

Մինչ ժամանակն
Իր մտտերով կաւեզէն,
Լաւաքեանց կտակն վրայ
Դարանինչ հետքերու յուշարար բեկորներով՝
Օրերու անդրադարձը կ'անսդմագործէ:

Դուն,
Անկեզու երգն ես սիրոյ
Վառուած ժայռի շարքերուն.
Հեռացումն ես անընդհատ,
Ու յիշատակ մշտանորոգ մտնեցման.
Մայրամուտին,
Տուներու սպիտակ լաւաքիւնը ծածկող՝
Վերջին շողն ես դուն անտուն:

Քանի՛ եկուոր,
Լաւաքեանց անձանօք հայեացքին մէջ՝
Իրենց երբեմնի հուրիները փնտռեցին.
Ու հեռացան,
Առուի ցամբած ափերում՝
Ոտնսնհետքերուդ խոնաւ մեղեդիներն ունկնդրելն...

Հագար ու մէկ հեֆիաքներէդ,
Մնաց գիշեր մը սիայն,
Ուր ծաղկամանն իր բազմերանց խոսերով
Դեռ կը սպասէ,
Գարնան բոլոր ծաղիկներէն աւելի,
Ծաղիկը՝ որ գիշերիդ մէջ կը բացուի:

ՓՈՆՈՍ ՃԵՐԱՆՆԱՆ



Յ. Բ Ա Յ Ք Ա

Հետադարձ էջերը մեկտեղում են՝ պզտիկ գուգիւր մը տալու համար Տրոնցի Բաժնարանի մասին, որ կը համարուի զանազան գործու համարձակութեան գրականութեան արտակարգ զեմքերէն մէկը: Բաժնարան, Տոտոտեակէի տեղ՝ հեղանջի մայրամիջեց մահուանը զոյապաշտ փրկութեան բուն եւ արդէն այս վերջիններէն էին, Աւագու Գառնի եւ միւսները, որոնք կրօնքին իր իրական արժէքը եւ արտօնքին համարուի:

Երկուսն ալ բնիկ մը պատմութեամբ Բարձրահասակ է գեղեցիկ երիտասարդներուն կողմէն, իսկ Վերջին Բարձրահասակները եւ Բաժնարանի կեանքին ու գրականութեան վրայ տեսուած ազդարկը արդիւնք են մեր աշխատակիցներէն Բաժնարանի Բեկապեղեանի ջանքերուն:

Գ Ի Ի Ղ Ա Վ Ա Ն Բ Ժ Ի Ծ Կ Մ Ը

Մեծ շիրքի մէջ էի: Աւտո էր որ անյետագոյնի համարողութեան մը սկիւղի: Տասը մոտն հեռաւորութիւն ունեցող դիւղի մը մէջ ծանր հիւանդ մը կը սպասէր ինձի: Ձիւնի լայն սաւան մը յիշուցած էր մեր միջեւ տարածուող միջոցը: Յիշող մեր ճամբաներուն յարմար՝ մեծ անիւններով քեթիւ կառք մը ունէի: Գործիքներուս պայտասակը բռնած, մուշտակներու մէջ փաթաթուած, բակին մէջ կայնած էի արդէն. ճամբորդելու պատրաստ: Սակայն ձի չկար: Իմ ձիս, ձմրան խտուրտեամ չդիմանալով՝ շուրջը փչած էր նոյն գիշերը: Հիւանդ, սպասուիկս կը վազվզէր գիւղին փողոցներուն մէջ, ձի մը փոխ առնելու մտնով: Սակայն գիտէի, որ անյոյս էր: Ես առանձին կեցած էի բակին մէջ, մինչ ձիւնը ասիկ կը թանձրանար մրսա եւ հետզհետէ անկարող կը դառնայ շարժելու: Աղջիկը դուրսի դրան առջեւ երեւցաւ առանձին ու շարժեց լազտերը: Տարօրինակ շէր: Ո՞վ պիտի յօժարէր նման ժամու մը այնպիսի ճամբորդութեան մը համար ձի փոխ տալ: Անգամ մը եւս սկսայ քաշել բակին մէջ. որքէն լուծուի չէի գտնիր: Շիրքաւոր յուսախաբութեան մէջ հարուածեցի տարիներէ ի վեր մտորուած խոզանոցին հնամաշ գուռը: Բացուցաւ յանկարծ եւ շարունակեց ետ-առաջ շարժիլ: Թեթեւ շուրքի մը հետ՝ ձիս հոտ մը առի: Պղտոր լոյսով լայտեր մը կախուած էր ներքը: Ձիւնակ մը, սողալով, պարզեց իր կատուատանջայ դէմքը:

— Լծե՛մ, — հարցուց, շարունակելով սողալ ցած երգիչիմ տակ: Զգիտցալ, թէ ինչ պէտք է բռնմ, տեսելու համար, թէ տակաւին ինչ կար ներքը: Սպասուիկս մօտս կայնած էր:

— Ձեռ գիտեր ինչե՛ր կրնաս դռնել քու սեփական տանդ մէջ, — բռաւ եւ երկուքս ալ խնդաղիմք:

— Նայէ, եղբայր, մայէ, քոյր, — կանչեց մարդը, եւ երկու ձիեր, հսկայական արաքածոներ՝ ճակատներն իրենց իրանին սեղմած, վայելչատես գլուխներով եւ աչտերու պէս գլխահակ, մեծ ճիգերով յաջողեցան դուրս սը- պորոյի դրան բացուածքէն, զոր ամբողջութեամբ գրաւած էին: Սակայն շու- տով ոտքի ելան, իրենց երկայն սրունքներով եւ թամբը շագի արձակող իրան- ներով:

— Օգնէ անոր, — ըսի, եւ աղջիկը յօժարութեամբ վագեց մարդուն կողմը՝ լծելու գործադասեան օգնելու համար: Սակայն հագիւ մօտեցած էր, նրբ մարդը գրկեց զինք, եւ անոր դէմքը սեղմեց իր դէմքին: Աղջիկը ճշաց ու շտապեց մօտս: Անոր այտերուն վրայ երկու շարք ակամներու կարմիր ետու- քեր կային:

— Անասնի, — պռտացի, — մտրակուի՞լ կ'ուզես, — սակայն մայն վայրկեանին անդրադարձայ, որ մարդը օտարական մըն էր եւ չէի գիտեր ուրկէ եկած էր, եւ թէ՛ իր ազատ կամքով յօժարած էր օգնել ինձի, երբ բոլորը մերժած էին զիս: Կարծես մտածումներս կասկեմալով՝ չվիրաւարուե- ցաւ սպառնալիքէս, շարունակեց գրադիլ ձիերով ու, ինձի գտնուելով՝ ըսաւ.

— Մտիր:

Իրապէս որ ամէն բան պատրաստ էր: Ձեռք մը օճանչելի ձիեր, որոնց նմաններով լծուած կառք մը նստելու առիթը ընտել չէի ունեցած: Ուրախու- քեամբ հանգչեցայ մէջը:

— Բայց ես պիտի էջեմ, մամբան չես գիտեր, — ըսի:
— Անշահչտ, — ըսաւ, — յամենայնդեպս, եետոյ պիտի չգամ: Հաս, մտգին հովը պիտի մնամ:

— Ո՛չ, — ճշաց Ռոզ ու փախաւ տուն: Իր մակատագրին անխուսա- փելիութեան արդարանալի նախագագումը ունենալով:

Լսեցի դրան շօթայիմ ձայնը: Լսեցի բանալիիմ ձայնը: Եւ տակաւիմ տեսայ, որ մաստիս սրահիմ լոյսերը մարեց ու ապա մարեց բոլոր սենեակ- ներուն լոյսերը, որպէսզի հետքը կորսնցնէ:

— Հետս պիտի գաս, — ըսի մարդուն, — այլապէս պիտի չերթամ, եսկառակ անոր, որ կարեւոր է համարողութիւնս: Ձեմ կրնար աղջիկը իբրեւ գին վճարել քեզի:

— Դեհ, առաջ, — պռտաց ան, ծափահարեց եւ կառքը ջուրի ետ- քանքի մը մէջ մնացած փայտի կտորի մը պէս՝ սուրաց: Կրցայ լսել դրան խորակման ձայները. կտրցած ու խլացած էի խուժող յարձանքէ մը, որ հետեւողականօրէն կ'ապտակէր բոլոր զգայարաններս: Սակայն ասիկա հա- գիւ վայրկեան մը տեսեց, որովհետեւ արդէն երանգին դրան տոջեւ էի: Կար- ծես հագիւ քայլ մը անդին եղած ըլլար ան: Ձիերը համդարտօրէն կանգ ա- ռած էին: Փոքրիկը կանգ առած էր: Ձորագին յուսնի լոյս կար: Հիւսանգին ծնողքը տունէն դուրս վագեցին եւ, անոնց ետեւէն՝ լոյսը: Համարեա՛ շա- րակներու վրայ դուրս բերին զիս կառքէն: Անոնց տակնուվրայ պռայտուե- ցերէն ոչինչ հասկցայ:

Հիւսանգին սենեակիմ մէջ օդը գրեթէ անշնչելի էր: Մտնուած վառա- քանը կը մխար: Ուրեցի պատուհանը բանալ: Սակայն մախ պէտք էր հիւսան- ցին մայլի: Նիհար, ոչ պար, ոչ տաք, արտայայտութենէ զուրկ աչքերով, առանց շապիկի երիտասարդ մը քարճրացաւ անկողնէն, քառակները նետեց վիզիս շուրջ ու ակամջիս փախաց:

— Տաքար, ձգէ ար մեռնիմ:

Նայեցայ սենեակին չարս կողմը: Ո՛չ ոք լսած էր: Մնագը լուսութեամբ

կը սպասէին վնիսիս: Քոյրը աթոս մը բերած էր պայուսակիս համար: Բացի գայն եւ խառնեցի գործիքներս: Տղան կը շարունակէր մխտել զիս՝ խնդրանքը յիշեցնելու համար:

Ունելի մը հանեցի, քանցի մտին լոյսին տակ, ապա նորէն գրի տեղը: «Այո, — խորհեցայ մեղանչող տրամադրութեամբ մը, — այսպիսի պարզազաններու աստուածները օգտակար են, պէտք եղած ժին կը զրկեն, երկրորդ մըն ալ կ'աւելցնեն անապարտղներուն համար եւ, ամէն ինչ յաջողութեամբ պակելու համար՝ նոյնիսկ քամրոյ մը կը հայթայթեն»: Այդ պահուն նորէն յիշեցի Ռազը. ի՞նչ պէտք էր ընէի, ինչպէ՞ս կրնայի ազատել զինք, ինչպէ՞ս կրնայի փրկել զիսպակէն՝ տասը մզոն հեռաւորութենէ մը, իմ կամէն անկախ շարժող ձեռքով: Ձիերը ձեռով մը սանձերը կտրած էին հիմա ու, չեմ գիտեր ինչպէս, պատուհանները դուրսէն բացած էին: Եւրաբանչիքը իր գըլուխը պատուհանէ մը ներս մտցուցած, ընտանիքին սարսափելի ձիշերուն տնշարժացած՝ կը դիտէին հիւանդը:

«Աւելի լաւ կ'ըլլայ, եթէ անմիջապէս վերադառնամ», մտածեցի. կարծես ձիերը կանչած էին զիս՝ վերադարձի նամարդութեան համար, սակայն նոյն ատեն արտօնեցի հիւանդին ջրաջրը, որուն այնպէս մը բաւացած էր, թէ մերսի տաճարի մը գլխապետոյտ մը պատճառած էր ինձի, որ մաշտակէ վերադարձու հանէ վրայէս: Գուաթ մը ռոտ լեցուեցաւ ինձի եւ ծերունին ձեռքը ռակա գրաւ: Մտիկութիւն մը, որ կ'առաջարկէր իր շնորհած գանձով: Դէմքս ժխտական շարժեցի: Մերունիին մտածումներուն անակութիւնը հիւանդացուց զիս: Ատիկա խմիչքը մերժելուս միակ պատճառն էր: Մայրը, անկողինին մօտ կայնած՝ կը հրաւիրէր զիս դէպի հիւանդը: Ընդառաջեցի, եւ մինչ ձիերէն մէկը բարձրաձայն կը խրխիջար առատազն ի վեր, գլուխս դիւր սգուն կարծիքն, որ դողողաց խմուս մօրուհիս տակ: Հաստատեցի այն՝ որ արդէն գիտէի: Տղան բաւական առողջ էր, պզտիկ խաղաղութեան ուժեր արեան շրջանառութեան մէջ, եւ մօրը պնդումներուն տակ՝ սարժով յագեցած էր: Սակայն լաւագոյնը իրեն համար անկողինէն դուրս ելլելն էր: Ես աշխարհը բարեկարգող մը չեմ, այնպէս որ՝ պիտի ձգեմ, որ ստէ: Ես շրջանին բժիշկն էի ու լրիւ կատարեցի պարտականութիւններս, պէտք եղածէն շատ աւելի խղճմտութեամբ: Շատ խեղճ կերպով կը վարձատրուէի, սակայն միշտ ալ օգտակար ու առատաձեռն եղած էի ազգակներուն նկատմամբ: Տակաւին պէտք էր, որ Ռազին ապահովութեան վտանհ ըլլայի, եւ այն ատեն տղուն մեռնելու փափաքը կրնար իրականանալ: Ես ալ ուզեցի մեռնիլ: Ի՞նչ գործ ունէի հոն, անծայրածիր ճիւղին մէջ: Ձիս մեռած էր եւ զիւրին մէջ ոչ ոք կ'ուզէր իւր ձիին ինձի փոխ տալ: Ստիպուած էի ձիերս հանել խոզանոցէն: Եթէ պատահէր, որ անոնք ձիեր չըլլային, ստիպուած պիտի ըլլայի խոզերով ճամբորդել: Պարագան այդպէս էր: Ու գլուխս հաստատական շարժեցի դէպի ընտանիքը: Անոնք ոչինչ գիտէին ամբողջ պատմութեան մասին, ու եթէ նոյնիսկ լսէին, պիտի չհաւատային: Ինչպէզ որ գրեցի դիւրին էր, բայց մարդոց հետ հասկացողութեան գալը՝ դժուար: Ուրեմն՝ այցելութեան վերադարձութիւնը այս ըլլալու էր, անգամ մը եւս պէտք չեղած տեղը կանչուած էի: Վարժուած էի ստոր, ամբողջ շրջանը կեանքս չարչարեմքի մը վերածած էր գիշերուան գանգալս, սակայն այն իրանկանութիւնը, որ ստիպուած պիտի ըլլայի Ռոզն ալ գոհել այս անգամ, գեղեցիկ ազդիկը, որ այդքան տարինս հետոս սպրած էր ու ես չէի նկատած գայն — այդ գոհը շատ մեծ էր եւ պէտք էր այս ընտանիքէն ձեռով մը փախչելու մասին մտածելի, որովհետեւ հաս մնալով երբեք յուս չկար, թէ կը յաջողէի ազատել Ռազը: Առ-

կայն երբ պայուսակն գոցելով ձեռքս երկարեցի վերարկուիս, ինչ քանի կանգնած ամբողջ ընտանիքը տեսայ. հայրը, ռուսի գաւաթը բռնած, դանդաղօրէն կը խմէր. մայրը, ըստ երեսօյքին, յուսախար էր ինձմէ — ինչո՞ւ, մարդիկ ի՞նչ կ'ակնկալեն — արցունքաւ աչքերով եւ շքթունքները խածած. հայրը՝ աշիւնաթաթախ տնտեսաց մը կը շարժէր եւ ես կարծեա սկսայ հանդուրիչ, որ տղան իսկուպէս կրնար հիւանդ ըլլալ: Մտեցայ իրեն եւ ան զիս ընդունեց ժպիտով մը, որով պիտի ընդունէր տնակ մը ապուր բերող մը: — Ո՞ւ, հիմա երկու սիներն ալ կը վրնջէին, եւ կ'ընթացնէր ձայնը երկինքէն զրկուած էր՝ հիւանդին վրայ կատարելիք բնութիւնս դիւրացնելու համար: — Եւ այս անգամ տեսայ, որ տղան իսկապէս հիւանդ էր: Անոր աջ կողմը, յետոյքին մօտ, ափիս մեծուքեամբ վերք մը բացուած էր: Վարդագոյն ու կարմիր վերք մը, շա՛հերու այլազանութեան մը մէջ. խորունկ մասերը մուշ, եզերքները աւելի բաց, լեյզացած արեան գնդիկներով խորտաբորտ դարձած բաց վերք մը: Այդպէս երեսուս ինծի հետուէն: Սակայն մանրակրկիտ բնութիւն մը նոր բարդութիւններ երեւան հանեց: Ձկրցայ գոպնի գարմանքի կարն ստուց մը: Հիւանդ մատիս լայնքն ու երկայնքն ունեցող որդեք, վերքին գոյնով, արհունաթաթախ՝ արագ-արագ կը գալարուէին վերքին մէջ, կ'ուզուէին դէպքի լայք, պզտիկ ու մերմակ գլուխներով եւ բազմաթիւ մանր ստեղծով: Խեղճ սողայ, քեզի օգնել... հնարաւոր չէ այլեւ: Գոտայ քու մեծ վերքը...: Կողիդ վրայի այս բացուածքն էր քեզ հիւժուղը: Ընտանիքը գահ էր: Ձիս գրադած տեսան: Գոյրը մօրը բաւ, մայրը՝ հորը, եւ հայրը՝ զանգամ հիւրեքու, որոնք, իրենց մատներուն վրայ քայելով եւ իրենց հաւասարակշռութիւնը լայնարաց ձեռքերով պահելով՝ լուսնի լոյսին տակ կը մտնէին բաց դուռնէն ներս: «Պիտի ազատն՝ զիս», փսփսաց տղան հառաչանքով մը՝ վերքին մէջ կենսառակութեամբ կուրցած: Մեր շքթանի մէջ այսպէս եւ մարդիկ: Միշտ անկարելին կը սպասեն բժիշկէ մը: Իրենց կին հաւատարմութեամբ կորսնցուցած են: Կողիկանը տուր կը նստի եւ իր հանդերձանքը մէկ առ մէկ կը հանէ վրայէն: Սակայն բժիշկ մը, իր վիրաբուժի գոթոս ձեռքերով՝ անհնազանդ գործութիւններ ունենալու է: Լա՛ւ, քող ըլլայ այնպէս՝ ինչպէս իրենք կ'ուզէին: Իմ ծառայութիւններս չեմ պարտադրած անոնց: Եթէ իմ ծառայութիւններս չարաշահեն սրբազան նպատակներու, այդ եւս կ'աղտոնեմ: Ուրիշ ի՞նչ կրնար փափաքիլ սպասուելին կորսնցուցած գիւղական բժիշկ մը: Եւ եկան, ընտանիքն ու գիւղին մեծահարուստները ու հագուստներս հանեցին վրայէս: Դպրոցական երգչախումբ մը, ուսուցիչի մը ղեկավարութեամբ, տան առջեւ կեցած, չափազանց պարզ եղանակով մը այս բառերը երգեց:

*Հանեցէք հագուստները, ու պիտի բուժէ մեզ,
 Եթէ չբուժէ՝ սպաննեցէք զինք,
 Միայն բժիշկ մը, միայն բժիշկ մը:*

Յետոյ հագուստներս հանուեցան ու ես, գլուխս մէկ կողմ ծռած՝ լուսնայեցայ մարդոց, մատներս մօրուքիս մէջ եւ գլուխս մէկ կողմ հակած: Անբողբութեամբ ինքզինքս էի, ու հաւասար՝ կացութեամս, ու այդպէս մնացի, հակառակ անոր. որ ոչ մէկ օգուտ ունէր ինծի: Գլուխէս ու ստեղծու բռնելով՝ զիս տարին անկողին: Դրին հոն, պատին ինչ, վերքին կողմը: Յետոյ՝ բոլորը զգեցին սենեակը: Դուռը բացուեցաւ, երաժշտութիւնը դադարեցաւ: Անպեր ծածկեցին լուսինը: Անկողինը տախուկ էր. ձեռքուն գլուխները մեծ շա՛հերու պէս շարժեցան բաց պատուհանէն: Քիտն՝ս, — ըսաւ ձայն մը անհնայ, — շատ էիք վստահութիւն ունիմ վրայ. դուք պարզապէս թխմուս-

ցար հաս, քու կամօժող չեկար : Փոխանակ ինձի օգնելու, մահուան անկողինս կը նեղցնես : Անէնէն աւելի ուզած բանս այժմերդ փոքրին է :

— Ճիշդ ես, — ըսի, — մեծ ամօք մըն է : Սակայն հակառակ ասոր ես բժիշկ մըն եմ : Ի՞նչ կրնամ ընել : Հաւատա՛, ինձի համար ալ ջիւրին չէ :

— Կը սպասես, որ բաւականանա՞մ այս չհմեղանքով : Օ՛, պէ՛տք է որ բաւականանամ, ուրիշ ձեռ չկայ : Միշտ պէտք է որ յարմարիմ՝ երեսայթեթաւ : Աշխարհին սքանչելի վերջ մը կրցայ բերել միայն : ատիկա իմ միակ իրագործումս էր :

— Երիտասարդ բարեկամս, — ըսի, — քու սխալդ այս է : Լայն տեսանկիւն մը չունիս : Ես հեռուոր բոլոր հիւանդներուն սենեակներուն մէջ նստած եմ, ու կ'ըսեմ ինչի. քու վերջդ այնքան ալ ծանր չէ : Բազմաթիւ մատուցումներու կողքին՝ մարդ հազիւ կրնայ լսել կացինի ձայները անտառին մէջ, աւելի նուազ, երբ այդ ձայները կը մտնեն :

— Այդպէ՛ս է իսկապէս, թէ կը ջանաս յարել զիս :

— Իսկապէ՛ս որ այդպէս է, ընդունէ պաշտօնական բժիշկի մը պատուայ խօսքերը :

Ընդունեց ու հանդարտեցաւ : Սակայն ա՛լ ժամանակը եկած էր, որ սկսէի մտածել փախչելու մասին : Ձիերը տակուին հաւատարմութեամբ կայանած կը մնային իրենց տեղերը : Հագուստներս, մուշտակէ վերարկուս, պայտասկա արագօրէն հաւաքեցի : Զուգեցի հագուելով ժամանակ վատնել : Եթէ ձիերը վերադառնային այն արագութեամբ, որ եկան, պարզապէս այս անկողինէն իմ անկողինս պիտի ցատկէի :

Ձին հնազանդութեամբ քաշուեցաւ պատուանէն : Երարս նետեցի կառքին մէջ : Վերարկուն շեղեցաւ նպատակակէտէն ու, երկաթի մը անցնելով՝ թեւէն կախուած մնաց : Վնաս չունէր : Ինչքինքս ձիուն վրայ նետեցի : Սանձերը թուրօրէն կախուած էին, ձիերը հագիւ թէ իրարու կապուած էին ու կառքը դէպի ետ կը տանէր :

Վերարկուս մեծ մասը ձիւնին մէջ թաղուած կը մնար :

— Դեհ, առաջ, — պահացի, — տակայն վազ՛ չկար : Գանդազօրէն, ձերունիններս պէս առաջացանք ձիւններուն վրայէն : Երկար ժամանակ մը մեր ետեւէն արձագանգեց մանուկներուն նոր, այլ սխալ երգը .


*Ուրախացէ՛ք, բոլոր հիւանդներ,
Բժիշկը ձեր կողքին՝ անկողին դռուած է :*

Այս քնքարով քնաւ տուն պիտի չհասնիմ : Բարգաւան գործունէութիւնս արարած է : Յաջորդս կը կողոպտէ զիս, սակայն թ գտր, որովհետեւ քնաւ պիտի չկարողանամ տեղս գրաւել : Տանս մէջ, գգուելի տրամը կը տեւեւուող անոր գոնն է . չեմ ուզեր այլեւս այդ մասին մտածել : Մերկ, սառայցին հեթակայ, այս ամենազոքախոս ժամանակներուն, երկրային կառնով, աներկրային ձիերով, ծեր վիճակովս կը թափառիմ անպատակ : Վերաշկուս կառքին ետեւ կախուած է, չեմ կրնար հասնիլ անոր : Եւ իմ առջեւը եղող հիւանդներէս ոչ մէկը կ'ազնէ օգնել ինձի :

Գաւառանուած : Գաւառանուած :

Գիշերային սահազանգին սխալ կանչին հետեւեցայ — այլեւս քնաւ կարելի չէ շտկել սխալը, երբե՛ք :

ՅՐԱՆՑ ԳԱՆՔԱՎ



Կիրակի առաւօտներէն մէկն էր՝ զարնան լաւազոյն շրջանին: Գէորդ Պենանձանն, երկուսարդ վանառական մը, կը նստէր իր սենեակը՝ առաջին յարկը այն ցած ու թեթեւաշէն շէնքերէն մէկուն մէջ, որոնք դեռին երկայնքն ի վեր կ'երկարէին եւ իրարմէ զրեթէ կը զանազանուէին միայն իրենց բարձրութեամբ եւ դոյնով: Քիչ առաջ աւարտած էր նամակ մը՝ արտասահման գտնուող իր մանկութեան մէկ ընկերոջը: Զայն պահարանի մը մէջ դրաւ մտազբաղ դանդաղութեամբ եւ արժուկովք սեղանին կռթնելով՝ պատուհանէն դուրս նայեցաւ, դէպի գետը, կամուրջը եւ հանդիպակաց բարձունքները՝ իրենց մտազաշ կանանչով:

Կը խորհէր, թէ իր այս ընկերը, ինչպէս տարբեր տառջ, զրեթէ փախած էր Ռուսաստան, դժգոհ ըլլալով իր այստեղի կեանքէն: Հիմա Ս. Պետրոսբուրգի մէջ խանութ մը կը բանեցնէր, սկիզբները դորձերը յաջող կ'երթային, վերջին շրջանին սկսած էին կազալ, այսպէս կը դանդաւտէր իր ընկերը՝ հեազհետէ հարուստէպ դարձող այցելութիւններուն ընթացքին: Այնպէս որ՝ ան օտարութեան մէջ վասն ոչինչի կ'աշխատէր, խորթ թուացող մօրուքը հազիւ թէ կը ծածկէր իր մանկութենէն ի վեր քաղանքանօթ երեսը, որուն գեղնաւուն գոյնը կարծես հեազհետէ վարդացող հիւանդութիւն մը կը մատնանչէր: Ըսածին համաձայն՝ բառին բուն իմաստով յարաբերութիւն չունէր իր ազգակիցներուն հետ, բացի ասկէ՝ զրեթէ կապ չէր հաստատած տեղացի ընտանիքներուն հետ եւ կը պատրաստուէր ցկեանս ամուրի մնալ: Մտրդ ի՞նչ կրնար զրեւ այսպիսի մէկու մը, որուն կեանքը փաստօրէն

ձևախառն էր: Կարելի էր ցուակցել տնոր, բայց ո՛չ օգնել: Իրեն առաջարկէ՞ր, որ տուն վերադառնայ, վերակառուցէ՞ր կեանքը հոս, վերամշակէ՞ հին բարեկամութիւնները — բան մը, որ առանց սրեւէ զօտւարութեան կարելի էր իրականացնել — եւ սակէ գոտ՝ վստահել ընկերներու օգնութեան: Բայց աւիկա իրեն համար թերեւս թէ՛ շատ նուրբ եւ թէ՛ շատ կոպիտ ձեւով իր ցարգը բնած փորձերուն ձախողած ըլլալը կը նշանակէր, թէ՛ աւելի լաւ կ'ընէր անոնց պոչը ձգելով, առն վերադառնալով եւ իրրեւ վերջնականապէս վերադարձող մէկը հանդուրժելով բոլորին իրեն զարմանքով նայիլը, թէ՛ միայն իր ընկերները պիտի կարենային ըմբռնել եղածները, թէ՛ ինք մեծ երեխայ մըն էր, որ պէտք է հնազանդէր իր ընկերներուն, որոնք տունէն չէին հեռացած եւ յաջողած էին: Բայց վստահ կ'ընա՞ր ըլլալ, որ այս բոլոր տանջանքները, որոնց ան պիտի ենթարկուէր, սրեւէ նպատակի մը պիտի ծառայէին: Թերեւս բնաւ կարելի պիտի չըլլար զինք դէպի տուն առաջնորդել — ինքն իսկ կ'ընէր, որ չէր ըմբռնիր հայրենիքի իրազրութիւնը — եւ ան, հակառակ ամէն ինչի, պիտի մնար օտարութեան մէջ՝ դառնացած իրեն տրուած խրատներէն եւ աւելի հեռացած իր ընկերներէն: Իսկ եթէ իսկապէս թելաբոսութիւններուն անտար եւ ճգմուէր — ոչ թէ՛ դիտակցաբար անշուշտ, այլ պարզապէս իրրեւ հետեւանք եղելու թիւններուն — ընկերները չհասկնային զինք եւ ինք չկարենար կողմնորոշուիլ առանց անոնց օգնութեան, տառապէք ամօթէն եւ շունենար ո՛չ հայրենիք եւ ոչ ալ ընկեր, այն տտնն աւելի լաւ պիտի չըլլա՞ր, եթէ մնար օտարութեան մէջ՝ եղածին պէտս: Հաւանակա՞ն էր, որ ան այս պայմաններուն մէջ յաջողէր հոս:

Այս պատճառներուն բերմամբ մարդ իրեն — պայմանաւ որ չուզէր խզել գրաւոր կապերը — սրեւէ լուրջ տեղեկութիւն չէր կրնար փոխանցել, ինչպէս անվարան կարելի էր ընել ամենահոռու բարեկամի մը պարագային: Ընկերը աւելի քան երեք տարի հեռու մնացած էր հայրենիքէն եւ ան իր այս բացակայութիւնը ոչ շատ համոզիչ կերպով կը բացատրէր, զայն համարելով հետեւանքը Խուսափանի քաղաքական խախուս կացութեան, որ իրեն պէս պղտիկ վաճառականի մը ամենակարճ բացակայութիւնն իսկ չէր թուրտրեր, երբ նոյն տտնն հարիւր հազարաւոր ռուսեր ամենայն խաղաղութեամբ կը շրջէին աշխարհի չորս կողմը: Բայց այս երեք տարիներուն ընթացքին Գէորգին համար շատ բան փոխուած էր: Գէորգին մօրը մահուան լուրը՝ գրեթէ երկու տարի առաջ, որմէ հոգ ան իր տարիքուտ հօր հետ միասին կ'ապրէր, իր ընկերովը անձանթ չէր մնացած եւ ան իր ցուակցութիւնը յայտնած էր պաշ կերպովով մը, թերեւս անոր համար, որ օտարութեան մէջ այս տխուր դէպքին պատճառած կոկիծը անկարելի էր երեւակայել: Այդ դէպքէն ի վեր, Գէորգ ամէն ինչի եւ նաեւ իր գործին աւելի մեծ կորովով փաբած էր: Մօրը կենդանութեան օրօք թերեւս հայրը արգելք հանդիսացած էր իր ծրագրերներուն, կամ մօրը մահէն ետք, հակառակ անոր, որ հայրը գործէն չէր քաշուած, աւելի շրջահայաց եղած էր, թերեւս — բան մը, որ շատ հաւանական էր — բախտաւոր դիպուածներ կարծուածէն աւելի մեծ դեր մը խաղացած էին: Ամէն պարագայի, վերջին երկու տարիներու ընթացքին գործը անակընկալօրէն զարգացած էր, ստիպուած էին անձնակազմը կրկնապատկել, շրջանառութիւնը հնգապատկելն հասած էր եւ կը սպասուէին ուրիշ զարգացումներ:

Բայց ընկերը այս փոփոխութիւններէն տեղեկ չէր: Աստիճան, այդ ցուակցական նստակիւն մէջ, թերեւս վերջին անգամ ըլլալով խրախուսած էր,

որ Ռուսիա դաղթէ, նկարագրելով ախ լայն Հորիզոնները, զորս Գէորգ իր ասպարէզին մէջ պիտի ունենար, Ս. Պետերբուրգ: Աննչան էին անոնք՝ բազմաթիւ Գէորգի գործին ներկայ ծաւալին: Բայց Գէորգ իր վերջին յաջողութիւններուն մասին ընկերովը գրել չէր ուզեր եւ կթէ հիմա նման բան մը ընէր՝ իսկապէս տարօրինակ պիտի թուէր:

Այնպէս որ՝ Գէորգ իր ընկերովը միայն անկարելոր դէպքերու մասին գրելով դուռացաւ, որոնք կը համախմբուին յիշողութեան մէջ առանց կարգ ու կանոնի, կթէ մարդ կիրակի օր մը հանդիսաւ զլուսով խորհի: Միակ նպատակը շխաթարել էր ծննդավայրի այն պատկերը, որ իր ընկերը երկար բացակայութեան ընթացքին պահած էր իր յիշողութեան մէջ եւ հաշտութեամբ անոր հետ: Այնպէս որ՝ Գէորգ անտարբեր մարդու մը նոյնպէս անտարբեր մէկ աղկան հետ նշանուիլը երեք անգամ յիշած էր՝ մեծ ընդհատումներով զբոլած նամակներու մէջ, մինչև որ ընկերը օկոսած էր հետաքրքրուիլ այս տարօրինակ երեւոյթով, բան մը, որ հակառակ էր իր նպատակներուն:

Աւելի կը սքսէր ասոր նման բաներ գրել, քան թէ խոստովանիլ ամիս մը առաջ մի ոմն օրինոր Յրիտա Պրանտենֆելտի հետ նշանուած ըլլալը, զուտորը ունեւոր ընտանիքի մը: Նշանածին հետ յանախ կը խօսէր իր այս ընկերովը եւ իրենց յատուկ թղթակցութեան մասին: «Այսինքն՝ ան մեր հարսնիքին պիտի չգա՞յ, — ըսաւ օրինորը, — ես իրաւունք չունիմ քու բոլոր ընկերներուդ հետ ծանօթանալու»: «Ձինք անհանգիստ ընել չեմ ուզեր, — պատասխանեց Գէորգ, — սխալ մի հասկնար ըսածներս, թերեւս կու գայ, առեւտարն կը հաւատամ ասոր, բայց թերեւս ստիպուի եւ նոյնիսկ վերադառնալով պիտի նախանձի ինծի եւ ատանձին վերադառնայ իր տեղը, անպայման դժգոհ եւ անկարող այս դժգոհութիւնը երբեքից յազթաւարելու: Առանձին. գիտե՞ս, թէ ի՞նչ կը նշանակէ ստիկա»: «Ա՛յ, չի՛ կրնար մեր ամուսնութեան լուրը ուրիշ մէկէ մը լսել»: «Սա ասոր ատաղջը չեմ կրնար առնել, բայց հաւանական չէ իր կենցաղը ունեցող մէկու մը համար»: «Եթէ դուն այսպիսի ընկերներ ունիս, Գէորգ, երբեք պէտք չէ նշանուէիր»: «Այո՛, ստիկա մեր երկուքին յանցանքն է, բայց ես գոհ եմ վիճակէս»: Եւ երբ Գէորգին համբոյճներուն պատճառով ան արագօրէն շունչ առնելով, հեւ ի հեւ ըսաւ. «Բայց ասիկա ինծի համար վերաւորական է», ան արդէն լիովին համոզուած էր, թէ անմիաս էր ընկերովը ամէն բան գրել: «Ընկերս գիտ պէտք է ընդունի ախպէս՝ ինչպէս որ եմ, — ըսաւ ինքն իրեն, — անկարելի է, որ ինձմէ կերտեմ մէկը, որ ինձմէ աւելի յարմար ըլլայ՝ իրեն հետ ընկերութիւն ընելու համար»:

Եւ այդ կիրակի առաւօտ, երկար նամակով մը իր նշանուած լուրը հաղորդեց հետեւեալ բառերով. «Նշանուածին նոյնութիւնը պահեցի մինչև նամակիս վերջաւորութիւնը: Նշանուեցայ օրինոր Յրիտա Պրանտենֆելտի հետ, զուտորը ունեւոր ընտանիքի մը, որ քու երթալէդ բաւական ետք, հոս հաստատուեցաւ, այնպէս որ՝ քեզի ծանօթ չեն անոնք: Յարմար առիթով մը քեզի մանրամասն տեղեկութիւններ կու տամ նշանածին մասին. այսօր զոհարար գիտնալով, որ ես բաւական երջանիկ եմ եւ միակ վտանգութիւնը մեր երկուքին միջև պիտի ըլլայ ա՛յն, թէ դուն վտանակ սովորական ընկերով մը՝ պիտի ունենաս երջանիկ ընկեր մը. ասկէ զատ՝ յանձին իմ նշանածին, որ որտանց կը բարեւէ քեզ եւ առաջին առիթով քեզի անամբ պիտի գրէ, կ'ունենաս անկեղծ բարեկամուհի մը. բան մը, որ ամուրիի մը համար որոշ նշանակութիւն ունի: Գիտե՞մ, կարգ մը պատճառներ արգելք հանդիսացան,

որ մեզի դաս, բայց չէ՞ս կարծեր, որ իմ հարսնիքս լուսադոյն առիթը պիտի ըլլայ այս բնութիւնը խորհրդանշանները յաղթահարելու համար: Ինչեւիցէ, շարժէ այնպէս՝ ինչպէս կ'ուզես, առանց որեւէ նկատառումի:

Ձեռքը այս նամակը բռնած, Երեսը դէպի պատուհան դարձուցած՝ երկար ատեն նստած մնաց գրասեղանին դուրսը: Բարեկամի մը բարեկին, տըրւած փողոցէն անցած պահուն, փոխադարձեց ցրուած ժպիտով մը:

Նամակը վերջապէս գրպանը դրաւ եւ անցնելով իր սենեակէն՝ նորանցքէ մը մտաւ հօրը սինեակը, ուր ամիսներէ ի վեր ոտք չէր կոխած: Պէտք աչ չէր զգացած, որովհետեւ հայրը շարունակ խանութը կը տեսներ, միտքին կ'ուտէին ճաշը՝ ճաշարանի մը մէջ, եւ թէեւ իրիկունները իրենցմէ իւրաքանչիւրը ինքն իրմով կը զրազէր, բայց շատ անգամ միտքին կը նստէին հիւրասենեակը, եթէ Գէորգ իր ընկերներուն քով չերթար — բան մը, որ յաճախ կը պատահէր — կամ իր նշանածին շայցելէր, որոշ ատեն մը կարգաւորով իրենց թերթերը:

Գէորգը զարմացաւ, թէ իր հօր սենեակը որքա՞ն մութ էր՝ նոյնիսկ այս արեւոտ օրը: Ըսել է՝ այն հսկայ պատը, որ նեղ բակէն անդին կը բարձրանար, ասանկ շուք մը կը նետէր: Հայրը կը նստէր պատուհանին մօտերը, անպուշեալ մօրը յիշատակներով զարդարուած անկիւն մը եւ թերթ կը կարդար, դասն քէչ մը շիջ բռնելով, փորձելով հարթել աչքի ամէն տկարութիւն: Սեղանին վրայ էր նախանձաշին աւելցուցը, որմէ դրեթէ բան մը չէր պակաս:

— Ա՛խ, Գէորգ, — ըսաւ հայրը եւ անմիջապէս մօտեցաւ իրեն: Քաշած ասենը գիշերանոցը բացուեցաւ: Մայրերը էր շուրջը կը ծածանէին: «Հայրս դեռ հսկայ մըն է», խորհեցաւ Գէորգը:

- Հոս անտանելի մութ է, — ըսաւ յետոյ:
- Այո՛, իսկապէս մութ է, — պատասխանեց հայրը:
- Պատուհանն ալ դոցեցիք:
- Այս ձեւը աւելի կը սիրեմ:
- Բայց դուրսը շատ տաք է, — ըսաւ Գէորգ իր խօսքը շարունակելով եւ նստաւ:

Հայրը ժողովեց նախանձաշին պնակները եւ զանոնք դրաւ սնտուկի մը վրայ:

— Ես քեզի միայն կ'ուզեմ ըսել, — շարունակեց Գէորգ, ինքնամոռաց հետեւելով հօրը շարժումներուն, — թէ նշանուղիս լուրը հիմա Ս. Պետերսբուրգը հաղորդեցի:

- Ապա նամակը գրպանէն մասամբ մը դուրս հանեց եւ վար սահեցուց:
- Ս. Պետերսբուրգ, — հարցուց հայրը:
- Իմ ընկերոջն, — ըսաւ Գէորգ եւ փնտռեց հօրը աչքերը: «Պանութը շատ աւելի տարրեր է», խորհեցաւ, «նայէ, տե՛ս, ինչպէս բազմած է եւ թեւեւերը խալածեալ կուրծքին վրայ»:
- Այո՛, ընկերոջդ, — ըսաւ հայրը շեղուակի:
- Հայրիկ, դիտես, որ ես նախ չէի ուզած նշանուղիս լուրը իրեն իմացնել: Փափկանկատութենէ զատ ուրիշ ոչ մէկ պատճառ կար: Գիտես, ան դժուար մէկն է: Խորհեցայ, որ նշանուղիս լուրը ուրիշ տեղէ մըն ալ կրնայ առնել, որքան ալ իրեն պէս մեկուսացած մէկու մը համար անհուանական թուի ասիկա, բայց ինձէ պէտք չէ որ առնէր:
- Եւ հիմա կարծիքդ փոխեցի՞ր, — հարցուց հայրը, ապա թերթը

պատուհանին ներքնատախտակին վրայ դրաւ եւ անոր վրայ ալ՝ իր ակնոցը, զոր հիմա մէկ ձեռքովը կը ծածկէր :

— Այո՛, վերստին խորհեցայ ասոր մասին : Եթէ ան իմ մտերիմ ընկերս է, ըսի ես ինծի, իմ նշանակիտ պէտք է ուրախացնէ զինք : Եւ այս պատճառով ալ շփարանեցայ լուրը հազորդել : Այսուհանդերձ, նամակը զրկելէ առաջ ուսգնցի քնդի տեղեկացնել :

— Գէորգ, — ըսաւ հայրը եւ իր անատամ բերանը լայն մը քայտաւ, — լսէ՛, դուն այս խնդիրին համար եկար հետո խորհրդակցելու : Անտարակոյտ, ասիկա պատուարեր է քեզի համար : Բայց ոչինչ կը նշանակէ, եոյնիսկ ոչինչն ալ աւելի դէշ է, եթէ ինծի ամբողջ իրականութիւնը չպատմես : Ես հոս հին հաշիւներ մէջտեղ հանել չեմ ուզեր : Մեր սիրելի մօրը մահէն ետք կարգ մը ազնւոյ վէպքեր պատահեցան : Թերեւս տնոնց ատենն ալ պիտի գայ եւ թեթեւ մեր կարծածէն աւելի շուտ : Խանութր կարգ մը բաներ աչքէս կը վրիպին, հաւանարար ինձմէ բան մը չի պահուիր — նման բան մը հիմա ենթադրել անգամ չեմ ուզեր — ուժս տեղը չէ, յիշողութիւնս հետզհետէ կը տկարանայ եւ աս' ինչ որ շուրջս կը դատնայ, այլեւս չեմ կրնար նշմարել : Ասիկա նախ եւ առաջ ընտելան ընթացքն է, եւ յետոյ՝ մեր սիրելի մօրը մահը զիս հոգեպէս շատ աւելի ցնցեց, քան քեզ : Բայց քանի որ խօսքը հիմա այս խնդիրին այս նամակին մասին է, խնդրեմ, մի խաբեր զիս : Ձեզին քան ժըն է, վրան կենալ անգամ չ'արժեք, արնպէս որ՝ մի խաբեր զիս : Դուն իսկապէ՛ս ընկեր մը ունիս Ս. Պետերսբուրգ :

Գէորգ ամշկոտ օտքի ելաւ :

— Ձրօսինք ընկերներու մասին : Հազար ընկեր իմ մէկ հատիկ հօրս տեղը չի բռնէր : Գիտե՛ս ինչ կը խորհիմ : Պէտք եղածին շարի դուն հոգ չես տանիր ինքիքիդ : Բայց տարիքը իր տուրքը կը պահանջէ : Խանութրն մէջ ջուր եկրկայտելով անհրաժեշտ է, դուն ալ շատ լաւ դիտես ասիկա, բայց եթէ զորքը ջուր ասողութիւնը վտանգէ, վաղն իսկ վերջնականապէս կը փակեմ դայն : Ասանկ քան չ'ըլլար : Քեզի համար ուրիշ ապրելակերպ մը պէտք է գտնենք : Հիմնովին նոր ապրելակերպ մը : Հոս մութին մէջ նստած ես, բայց հիւրասնեակը շատ աւելի լուսաւոր է : Նախանշին հազիւ պատահաւ մը կ'ուտես, փոխանակ լաւ մը ուտելու : Պատուհանը դոց կը նստիս, մաքուր օդը որքա՛ն լաւ պիտի զար քեզի : Ո՛չ, սիրելի հայրիկս, ո՛չ, ես բժիշկը պիտի կանչեմ եւ մենք իր ըսածները բառ առ բառ պիտի զործադրենք : Սենեակները պիտի փոխենք, դուն ստջեի կողմի սենեակը պիտի երթաս եւ ես հոս պիտի գամ, Քեզի համար բան մը պիտի չփոխուի, ամէն ինչ պիտի տանինք նոր տեղը : Բայց այս թոյլը ժամանակի կը կարօտի, հիմա քիչ մը երկնցիք, անսլալման հանգիստի պէտք ունիս : Եկուք, օգնեմ, որ հանուխս Պիտի տեսնես, որ կրնամ ընել : Կամ հիմա կ'ուղե՞ս ստջեի կողմի սենեակը երթալ եւ արժամեայ երկննալ անկողինին վրայ : Ասիկա շատ խնայեք բան մը կ'ըլլայ :

Գէորգ իր հօրը շատ մօտը կը կենար, որ իր ճերմակ, շաւնարուած մտազերով զլուխը վար կախած էր :

— Գէորգ, — ըսաւ հայրը մեղմ, ատանց շարժելու :

Գէորգ անմիջապէս ծունկի եկաւ իր հօրը կողքին, տեսաւ անոր չափազանց մեծ բերքերը յոգնած երեսին մէջ՝ աչքերուն մէկ ծայրէն իրեն ուղղուած :

— Դուն Ս. Պետերսբուրգ ընկեր յունիս : Դուն միշտ կատակասէր եղած ես, եոյնիսկ ինծի հետ : Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ դուն հոն ընկեր մը կ'ուտենաս : Ատոր չեմ կրնար հաւատալ :

— Խորհէ՛ անգամ մը, հայրիկ, — ըսաւ Գէորգ, հայրը բազմաթուռէն վեր քաշեց եւ հանեց անոր գիշերանոցը, զանի որ ան ուժաթափ կը կենար, — ան ծեղի վերջին անգամ գրեթէ երեք տարի առաջ այլեցած էր: Եստ լաւ կը յիշեմ, իրմէ շատ չէիր ախորժած: Սակայն առնուազն երկու անգամ անգիր-տացար իր ներկայութիւնը, հակառակ անոր, որ իմ սննեակս նստած էր: Կը հասկնայի, թէ իրմէ ինչու չէիր ախորժեր, ընկերս իւրաքանչիւ սովորութիւններ ունէր: Բայց վերջը իրեն հետ շատ լաւ գրուցեցիր: Ես այն ատեն շատ հպարտ էի, որ դուն անոր մտիկ կ'ընէիր, կը համաձայնէիր ըսածնե-րուն՝ դուրսը շարժելով եւ իրեն հարցումներ կ'ուղղէիր: Եթէ քիչ մը խորհիս, պիտի յիշես այս բոլորը: Անհասարակ բաներ կը պատմէր Հոկտեմբերեան Յեղափոխութեան մասին: Օրինակ, գործով ճամբորդութեան մը ընթացքին, Քիւրէի մէջ, երբ ամբարձր սիրտը կ'այլեկոծէր, պատշաճի մը վրայ հոգե-ւարական մը տեսած էր, որ դահակով լալն խաչ մը բացած էր ուփին մէջ եւ յետոյ կոշ ուղղած ամբարձր: Դուն իսկ այս պատմութիւնը հոս ու հոն պատ-մած էիր:

Մինչ այդ, Գէորգ յաջողած էր հայրը նստեցնել եւ հանել քրիճոյէ այն տարատը, որ ան բամբակէ ներքնազգեստին վրայէն սովոր էր հաղուիլ, նաեւ՝ գուլպաները հանել: Ի՞ տես փոխնորդին, որ շատ ալ մաքուր չէր, մե-ղադրեց ինքզինք՝ հօրը հանդէպ ունեցած իր անտարբերութեան համար: Ան-տարակոյտ, ասիկա իր պարտականութիւնն էր եւ ինք պէտք է հոգար, որ հայրը նոր սրտնորոգը ատենին հագուէր: Բառին բուն իմաստով՝ իր նշա-նածին հետ դեռ չէր խօսած, թէ ինչպէս պիտի ձեւաւորէին իր հօրը ապա-զան, որովհետեւ լուկայն ենթադրած էին, որ ան հին տունը մնալ պիտի ուզէր: Իսկ հիմա ամենայն վճռակամութեամբ որոշեց գինք նոր տունը տա-նել: Մտանք դիտելու պարտադրին գրեթէ այնպէս կը թուէր, թէ այն խնամ-քը, որ պիտի տարուէր անոր, կրնար շատ ուշ հասած ըլլալ:

Գրկեց հայրը եւ անկողին տարաւ: Սարսափեցաւ զէպի անկողին քա-լած ատեն, ժամացոյցին շղթային հետ հօրը խաղալը տեսնելով: Ամբիշա-պէս չկրցաւ անկողին տեղաւորել հայրը, որ կը շարունակէր այնքան ամուր բռնել ժամացոյցին շղթան:

Հապիւ անկողին մտած էր, երբ իրեն թուաց, թէ ամէն ինչ արդէն վերազանց էր իր բնական ընթացքը: Անձամբ ինքզինք ծածկեց եւ յետոյ վեր-մակը ուսերէն բաւական մը վեր քաշեց: Ապա, հայեացքով մը, որ սիրալիբ կրնար նկատուէր, Գէորգին նայեցաւ:

— Սկսար յիշել, այնպէս չէ՞, — հարցուց Գէորգ եւ զլուրը շարժեց հաստատական շեշտով մը:

— Վրաս լաւ մը ծածկուած է, — հարցուց հայրը, կարծես ինք չէր կրնար տեսնել ոտքերուն ըստ բաւականի ծածկուած ըլլալը:

— Ըսել է կ'ախորժիս անկողինէն, — ըսաւ Գէորգ եւ վրան աւելի լաւ ծածկեց:

— Լաւ մը ծածկուած եմ, — հարցուց հայրը անգամ մը եւս, եւ այն-պէս կը թուէր, որ ան յատուկ ուշադրութեամբ կը պատէր պատասխանին:

— Վտտահ կրնաս ըլլալ, վրադ լաւ մը ծածկուած է:

— Ո՛չ, — պտտաց հայրը եւ պատասխանն ու հարցումը իրարու զար-նուեցան:

Ապա վերմակը ուժով մը վրայէն այնպէս մը նետեց, որ օդին մէջ ամ-բողջութեամբ տարածուեցաւ, եւ ան կանգնեցաւ անկողինին վրայ: Միայն

մէկ ձեռքով թեթեւ մը կը դպնար առատադին՝ հաւատարակչութիւնը պտ-
հելու համար:

— Դուն վրաս ծածկելի կ'ուզէիր, առիկա գիտեմ, անպիտան, բայց
դեռ ծածկուած չեմ: Վերջին ուժս անգամ կը բաւէ քեզի, նոյնիսկ շատ է:
Անշուշտ կը ճանչնամ ընկերդ: Ինծի վայել վաւակ մը կրնար ըլլալ ան: Անոր
համար դուն գինք տարիներ շարունակ խաբեցիր: Ուրիշ ի՞նչ պատճառ կար
որ: Ձե՛ս գիտեր, որ ես անոր համար լացի: Այս պատճառաւ ինքզինքդ գրա-
սենեակը կը բանտարկես. ո՛չ ոք անհանգիստ պէտք է ընէ քեզ, «պիտը գրա-
քած է», որպէսզի դուն քու կեղծ նամակներդ կարենես դրել ընկերոջդ, Բայց,
փա՛ռք Տիրով, իմ ազուն հուժեան մէջ թափանցելը հօր մը սորվեցնելու
պէտք չկայ: Ինչպէս դուն ցարդ կը հաւատայիր, թէ յաղթած ես այլեւս,
այնպէս մը յաղթած ես, որ դուն կրնաս նստիլ անոր վրայ եւ ան չի կրնար
շարժիլ տեղէն, եւ այն ատեն է, որ ամուսնութեան որոշումը տուաւ իմ յար-
գելի դաւակն:

Գէորգ հօրը սարսափազուտ կերպարանքին նայեցաւ: Գետերտուրդի
ընկերը, որ հայրը յանկարծ այսքան լաւ կը ճանչնար, խոռվեց հոգին, ինչ-
պէս երբեւիցէ: Լայնատարած Ռուսոյոյ մէջ կորուսած տեսաւ զայն: Գողպ-
տըւած, պաս-պարապ խանութին առջեւ: Քանդուած դարակներուն, բզկտը-
ւած ազրանքներուն, տասպալած լապտերներուն մէջտեղը ան հազիւ թէ տա-
քի կը կենար: Ինչո՞ւ այսքան հետունքը դաշած էր:

— Բայց ինձի նայէ, — գոչեց հայրը եւ Գէորգ գրեթէ ինքնամոռաց
վազեց դէպի անկողին. ըմբռնելու համար ամէն ինչ, յանկարծ կեցաւ ճամ-
բուն մէջտեղը:

— Որովհետեւ փէշերը վեր հանեց, — սկսաւ լինալու հայրը, — ու
որովհետեւ իր փէշերը վեր հանեց, նողկալի սազը, եւ որպէսզի ներկայա-
ցընէ լապիկը վեր քաշեց ու առանցիկ դարձաւ իր գիտօն վրայի պատե-
րագծի մէկ վէրքը, — որովհետեւ ան փէշերը ասանկ եւ ասանկ եւ ասանկ
վեր հանեց, դուն անոր հետեւէն վազեցիր, եւ որպէսզի առանց խանդարումի
գոհացում գտնես, անարդէցիր մեր սիրելի մօր յիշատակը, մատնեցիր ըն-
կերդ եւ հայրդ անկողին խթեցիր, որպէսզի տեղէն չշարժի ան: Բայց ան
կը շարժի դեռ, այնպէս չէ՞:

Հիմա, ան բուրբոբին մերկացած կը կենար եւ սրունքները օդը կը նե-
սէր: Երեսը իմաստութիւն կը սփռէր:

Գէորգ անկիւն մը կը կենար՝ կարելի եղածին չափ հեռու հօրմէն,
Բաւական ատեն մը առաջ որոշած էր ուշադրութեամբ նայիլ իր շուրջը, որ-
պէսզի որեւէ կողմէ՝ ետեւէն կամ վերէն անակնկալի մը չենթարկուէր: Վեր-
ջիւնց երկար ատենէ ի վեր մոռցած այս որոշումը եւ մոռցաւ զայն վերստին,
ինչպէս մարդ գերձանի կարճ կտոր մը ասեղին ծակէն կ'անցընէ:

— Բայց ընկերդ վերջ ի վերջոյ չէ մատնուած, — բացազանչեց հայրը
եւ իր աջ ու ձախ շարժող ցուցամատով ընդդէմ: — Ես անոր այստեղի ներ-
կայացուցիչն եմ:

Գէորգ շիրջաւ զսպիլ ինքզինք, «զիրաւան», բացազանչեց, յետոյ զգա-
լով պատճառած վնասը իսկոյն խոժաւ մատը՝ պէտք եղածէն աւելի ուշ աչ-
քերը քարացան եւ ցաւէն զրեթէ ծռնկիլ եկաւ:

— Այո՛, անշուշտ թատրոն խաղացի, թատրոն: Լաւ խօսք: Ուրիշ ի՞նչ
մխիթարանք մնացած էր ծեր հօրդ: Ընէ՛ ինձի — եւ պատասխանին տեւո-
ղութեան եզեր դուն ի՞մ կենդանի դաւակն — ուրիշ ի՞նչ կը մնար ինձի ի՞մ

եսեւի կողմի սենեակի մէջ, հալածուած անհուատարիմ ծառաներու կողմէ, ծերացած մինչև ոսկորներու ծուծը: Եւ իմ մանչս ուրախ-զուարթ կը շրջէր աշխարհը, գործեր կը տեսնէր, զորս ես պատրաստած էի, ցնծութիւնը չափ ու սահման չէր ճանչնար եւ հորը առջեւէն աղնուականի անհաղորդ երեսով կ'անցնէր: Կը կարծեո, թէ քեզ չե՞մ սիրած, ե՞ս՝ որմէ դուն կը սիրես:

Հիմա դէպի առջև պիտի ծոփ, խորհեցաւ Գէորգ, ի՞նչ կ'ըլլար, եթէ վար իշնար եւ ջախջախուէր: Այս բառը կայծակի պէս անցաւ միտքէն:

Հայրը դէպի առջև ծոնեցաւ, բայց չիմկաւ: Քանի որ Գէորգ իրեն շօտեցաւ, ինչպէս ան կ'ակնկալէր՝ վերստին ոտքի ելաւ:

— Տե՛ղը կեցիր, ես քեզի պէտք չունիմ: Դուն կը կարծես, թէ դեռ հաս դալու համար ուժ ունիս եւ կը կենաս տեղդ, որովհետեւ դուն այսպէս կ'ուզես: Զըլլա՛յ որ սխալիս: Ես դեռ քեզմէ շատ աւելի ուժով եմ: Առանձին թերեւս ստիպուած ըլլալի նահանջիլ, բայց մայրդ ինձի իր ուժը փոխանցեց, քու ընկերովդ հետ փառաւոր մը դաշնակցեցայ, քու յաճախորդներդ զբաղուիս մէջ ես:

— Նոյնիսկ չապիկին մէջ ալ դրպան ունի, — ըսաւ Գէորգ եւ կարծեց, թէ իր այս արտայայտութեամբ զայն կը խայտառակէ բոլանդակ աշխարհի առջև:

Միայն ակնթարթի մը համար խորհեցաւ, որովհետեւ ամէն ինչ ընդմիշտ մտցաւ:

— Նշա՛ւած իւր թեւը անցիր եւ փորձէ արգելք հանդիսանալ ինձի: Կ'առնեմ ձեռքդ եւ մէկդի կը շարտեմ աշիպէս մը, որ չես հասկնար, թէ ինչպէս պատահած է:

Գէորգը կը ծամածռէր երեսը, կարծես չէր կրնար հաւատալ այս բաւրբին: Հայրը, զիսու շարժումով մը, դէպի Գէորգին գտնուած անկիւնը կը հաւաստէր իր ըսածները:

— Զիտ որքա՞ն զուարճացուցիր այսօր՝ դալով եւ հարցնելով, թէ ընկերովդ հաղորդես նշանուքիդ լուրը: Ան ամէն բանէ տեղեակ է, այսմամբ տղաս, ան արդէն ամէն բանէ տեղեակ է: Ես իրեն դրեցի, որովհետեւ դուն չխորհեցար թողթ-մատիտը ձեռքէս անել: Անոր համար տարիներէ ի վեր չի գար, ամէն ինչ քեզմէ հարիւր անգամ աւելի լաւ գիտէ, քու նամակներդ ձախ ափին մէջ կը հմտօթկէ առանց կարդալու, իսկ իմ նամակներս ալ ձեռքը կը բռնէ կարդալու համար:

Ապա, թեւը ոգեւորութեամբ վեր հանեց.

— Ան ամէն ինչ հազար անգամ աւելի լաւ գիտէ, — բացազանչեց:

— Տասը հազար անգամ, — ըսաւ Գէորգ, հայրը նեղացնելու համար, բայց իր բերնին մէջ բառը դեռ լուրջ շեշտ մը նոր ատած էր...

— Տարիներէ ի վեր կը սպասեմ, որ ինձի այս հարցումը ուղղես: Կը կարծես, թէ ես ուրի՛շ բանով կը հետաքրքրուիմ: Կը կարծես, թէ ես թե՛րթ կը կարդամ: Ահաւասի՛կ, — եւ ան թերթի մը մէկ էջը նետեց Գէորգին, որ ձեռով մը անկողին տարած էր: Հին թերթ մը, Գէորգին բոլորովին անծանօթ անունով:

— Ետտ երկար տատամնեցար՝ մինչև որ հասուցար: Մայրդ մեռաւ, չկրցաւ վայելել այս ուրախ օրը, ընկերդ կը փնտնայ իր Ռուսաստանին մէջ, երեք տարի ատալ արդէն դեղնած էր՝ նետուելու աստիճան, եւ իմ վիճակս յայտնի է քեզի, կը տեսնես: Այլ ունի՛ս տեսնելու համար:

— Ըսել է դուն զիս դարանակալեցիր, — բացազանչեց Գէորգ:

Հայրը գթասիրտ շեշտով մը ըսաւ .

— Հաւանարար աւելի առաջ կ'ուզէիր ըսել ասիկա, բայց հիմա բնաւ յարմար չէ :


Եւ աւելի բարձրածայն .

— Հիմա գիտես այլեւս, թէ քեզմէ զատ ուրիշ ինչ կար, մինչև հիմա զուն միայն քեզմով զրադած էիր : Իսկապէս անմեղ տղայ մըն էիր, բայց հիմա հոգեւորն աւելի սաստեայ : Ասոր համար գիտցիր . ես քեզի խեղճամահութեան կը դատուարտեմ :

Գէորդ ինքզինք սննեակէն վարտուած զգաց, հօրը անկողինէն ինկած աստեղ հանած ձայնը զեռ կը հնչէր ականջներուն մէջ : Աննդուինն վրայ, որուն աստիճաններէն զտիւփարի մը պէս վար սահեցաւ, յանկարծակիի բերաւ սպասուհին, որ այդ պահուն վեր ելլելու վրայ էր՝ տունը կարգի դնելու համար : «Յիսուս Քրիստոս», բացազանչեց եւ երեսը ծածկեց իր գոգնոցովը : Բայց ան արդէն կորսուած էր : Դուռնէն դուրս ցատկեց, փողոցէն անդին՝ գէպի ջուրը, կարծես կը հալածէին զինք : Արդէն ճաղերը կը բռնէր իր ուտելիքին կառչած ոտխաբարի մը պէս : Վրայէն ցտակեց ճիշդ երեսասարդ եղած տանն ըրածին պէս, երբ լաւ մարդիկ մըն էր՝ հպարտութիւն պատճառելով ծնողքին : Դեռ կը բռնուէր հետզհետէ ակարացող ձեռքերով, ճաղերուն հտեւէն նշմարեց հանրակառք մը, որ թերեւս իր անկումին ազմուկը պիտի խեղդէր, մեղմ ձայնով մը բացազանչեց . «Սիրելի ծնողքս, ես ձեզ մէջտ սերեցի», եւ վար ձգեց ինքզինք :

Այդ պահուն՝ կամուրջին վրայէն կառքերը անվերջ կը տողանցէին :

ՏՐԱՆՑ ՔԱՆՔԱՆ



Բ. Ք Ե Պ Ա Պ Ճ Ե Ա Ն

Մ Օ Տ Ե Յ ՈՒ Մ

Ֆ Ր Ա Ն Յ Բ Ա Ֆ Բ Ա Յ Ի

Ձկայ արդի գրող մը, որուն մասին գրուած ըլլան անթիւ-անհամար ուսումնասիրութիւններ ու ակնարկներ, չկայ գրող մը, որուն մասին արտայայտուած թեր ու զէժ կարծիքները իսկական լարբերինթոս մը կազմեն՝ իր մահէն աւելի քան 60 տարիներ ետք, ինչպէս պատահած է եւ դեռ կը շարունակէ պատահիլ Քաճառի պարագային: Ան աշխարհի ամէն կողմը իր երկրպագուները ունի. Կեղրոնական Եւրոպայէն մինչեւ Հեռաւոր Արեւմտան, յիտառայական Արեւմտանը՝ ինչպէս կը տեղեկացնէր չինացի փրոֆեսոր մը, վերջերս Կէոթթիկէնի մէջ կայացած դերժանագումներու միջազգային համագումարին ընթացքին: Վերի տողերէն ետք ընաւ պարմանիլի պէտք չէ թուի, որ սոյն համագումարին կեղրոնական նիւթերէն մէկը... Քաճառի գրականութիւնն էր:

Ուրիշ գրողներու պարագային այնքան ալ կարեւոր կրնայ չըլլայ կենսագրականը, սակայն Քաճառի պարագային անհրաժեշտ է, քանի որ իր գրականութեան կարգ մը երանգները, աւելի ճիշդ՝ հիմնական եղբւրքը հոնիկ կու գան:

Յրանց Քաճառ կը ծնի 7 Յունիս 1883ին եւ կ'ըլլայ աւագ որդին վաճառական Հերման Քաճառի եւ անոր կնոջ Եւլիէ Քաճառի (ծննալ Լէոֆի՝ երկուքն ալ հրեայ ծագումով): Իր ծննդաւայրը՝ Փրահը, Աւստրո-Հունգարական կայսրութեան գլխաւոր քաղաքներէն մէկն էր, ուր գերմանախօսներուն թիւը երեսուն հազարը չէր անցնէր — մեծ մասամբ հրեաներ: Հայրը, որ աշխուժ եւ գործունեայ անձ մը եղած էր, իր ազագուն տղուն վախի եւ յարգանքի գրադրումներ ներշնչած էր եւ ցկանն ստորագրատութեան բարդոյթով բովանդակէր: Քաճառ ղիպուկ մտաւորական մըն էր, թերեւս մօրը բնուանիքին բարունական աւանդները դէր մը խաղաղած ըլլան հոս: Ուսանած է Իրաւաբանութիւն, յետոյ աշխատած է ազահոլադրական ընկերութեան մը

մէջ, ինչ որ իրեն գրելու ազատ ժամեր կը ձգէր: Գրելը, ըսած է անգամ մը, ինծի համար տեսակ մը պաշտամունք է: Ամուսնանալ կ'ուզէր, կամ այնպէս կը խորհէր, թէ պէտք է ուզէր նման բան մը, բայց հօրը ազդեցութեան տակ՝ իր սեռային ինքնավատահաճութիւնը կորսնցուցած ըլլալ կը թուէր: Կը նշանուի Ֆէլիք Պրասուէր անունով ազդկան մը հետ, սակայն հինգ տարուան աստամոտմէ մը ետք ամուսնութիւնը անկարելի կը դառնայ, սրովհետեւ ան, ըստ իր արտայայտութեան, դիտակցաբար թողախտի կը բռնուի: 36 տարեկան հասակին աւելի քան հարիւր էջոց նամակ մը կը գրէ հօրը եւ ընտանի զրկեր զայն (աւելի վերջը պիտի անդրադառնանք ատոր): Կը մեռնի 3 Յուլիս 1924ին՝ 41 տարեկան հասակին:

Քաճառի գրական կտակը, զոր պէտք է գործադրէր իր մտերիմը՝ Մաքս Պրոտ, կը պարունակէ հետեւեալ նախադասութիւնները.

«Միրելի Մաքս, վերջին խնորամբ մը. այն բոլորը, որ պիտի գտնես (...), օրագիրներս, ծնագիրներս, ճամբարներս՝ իմ գրած և ուրիշներէ ըստացածներս, գծադրութիւններս, եւայլն, ամբողջութեամբ եւ անտես կարգապարտ ոչ չիս:»:

Մաքս Պրոտ իր ընկերոջ այս վերջին խնորանքը ո՛չ միայն չի գործադրեր, այլեւ աւելին՝ գրեթէ ամբողջութեամբ կը հրատարակէ անոր երկերը: Գործելի չէ կասկածիլ Քաճառի խնորանքին լրջութեան մասին, բայց ճանչնալով իր ընկերը՝ Մաքսը, Քաճառ վստահ կրնար ըլլալ, որ ան պիտի անտեսէր իր կտակը: Հոս կը տեսնենք իրեն համար դիպուկ կեցուածք մը՝ պատասխանատուութիւնը ձգել ուրիշին. բան մը, որ կը վերաբերի նաեւ իր հինգ տարի տեսած նշանուածութեան շրջանին:

Անտարակոյս, Քաճառ իր մշակած գրականութիւնը չէր ստորագրանք: Օրագիրին մէջ կայ 19 Փետրուար 1911 թուակեր հետեւեալ արձանագրութիւնը. «ՅՅԷ՛ որով նախադասութիւն մը գրեմ, օրինակ՝ «Պատուհանէն դուրս նայեցաւ», ամիկա արդէն կատարեալ է»: Եւ եթէ յետ-մահու ձգուելով կ'ուզէր իր գրածները, տարիկա իր կրօնական ոգեւորութեան մէջ հետեւեալն էր պարզապէս, ինչպէս պատահած էր Իսահակին հետ: Նշանուած եղած շրջանին ալ կեանքի բնագիւղի եւ աստուածավախութեան միջեւ դոյութիւն ունեցող հակասութիւնը լուծած էր ի նպաստ վերջինին՝ բացասական կեցուածք բրտնելով, գործնական դետնի վրայ խուսափելով անձնական որոշումէ, որոշումը ձգելով ուրիշին:

Անտեսելով Քաճառի կտակը, Մաքս Պրոտ հրատարակեց անոր նըշանուոր երեք վէպերը, որոնք իրականութեան մէջ անաւարտ էին եւ իր ձեռքը անցած էին իրրեւ բեկորներ: Գլուխներուն վերջնական դասաւորումն ան ըրաւ. բան մը, որ ստորկութիւններու տեղի տուած է յառաջիկային: Լոյս տեսան «Բառավարարութիւնը» (1925, գրուած՝ 1914-15ին), «Եղիակը» (1926, գրուած՝ 1922ին) եւ «Ամերիկացին» (1927), որուն գլուխներէն մէկը՝ «Հնոցապանը», աւանմինն հրատարակուած է 1913ին: Կենդանութեան օրօք միայն պատմուածքները տպուած են հատորիկներու ձեւով: Իր երախայրիքը՝ «Քննարկումներ» (տպուած՝ 1912ին) կը բաղկանայ 18 կարճ գրութիւններէ, կը յաջորդէ «Հնոցապանը» (1913ին) եւ նոյն տարին ներկայացուած «Վիթըր», յետոյ՝ «Փոխակերպումը» (1915ին), «Անվի արուեստագետ մը» (1922ին), «Ուղիղ գաղութիւն մէջ» (1919), որ մէկ տարբերակն է «Բառավարարութեան»:

Քաճառ քանի մը երկերութիւն ունեցած է Փրակի մէջ, իսկ եզակի ընթերցումը տեղի ունեցած է 1916ի Նոյեմբերին, Միւնխի մէջ: Արձագանգը-

ներք շատ հետև էին գոհացուցիչ ըլլային: Կարգացած է հատուածներ «Լիզ-
վիչ գաղութին մէջ»էն: Մամուլը արտասայտուած է հետեւեալ ձևով: «Բա-
վանդակութիւնը զգուելի է», «Սարսափի հեշտատերը», «Գրաւիչ ըլլալէ հե-
ռու»:

Մաքս Գրոտ ո՛ր միայն դասաւորեց եւ հրապարակեց Քաֆքայի երկե-
րը, այլեւ եղաւ անոր առաջին մեկնարանը: Ան անոր գրականութիւնը «Բարգ-
մանեց» աստուածարանութեան, փիլիսոփայութեան եւ Հոգեբանութեան
լեզուին. աշխատանք մը, որ միշտ չէ որ նպաստեց Քաֆքայի գրականու-
թեան:

Անտարակոյս, Քաֆքային ծանօթ էր Ֆրէյտայի տեսութիւնը. ան քանի
մը անգամ արտայայտուած է այս նիւթին շուրջ: Մանաւանդ հօր եւ դասկի
փոխադարձութիւնները, ըստ Ֆրէյտայի տեսութեան, իրեն անծանօթ չէ
եղած: Իր նշանաւոր «Նամակ հօրը» խորագրեալ երկարունջ գրու-
թիւնը, որ 1952ին կը հրատարակուի Գրոտի կողմէ, ոչ լման ձեւով, իրրիւ
մէկ մասը Քաֆքայի գրական ժառանգութեան, յաւազոյնս կ'ապացուցէ, թէ
ան ծանօթ եղած է Հոգեբանութեան վերլուծական դարձանուծի եղանակնե-
րուն: Այս գրութեան մէջ, տնտեսապէս անկախ Յիսթորի իրաւաբան մը կը
փորձէ իր հօրը բացատրել, թէ ինչու կը վախնայ անկէ: Եւ բացատրելով չի
կրնար ձեռքազատուիլ այդ վախէն, ա՛յն կապէն, որմէ իր անասճման ուժին
րեքմամբ կը վախնայ, միտմանակ թէ՛ սիրելով եւ թէ՛ ստեղծելով հայրը: Ի-
րենց յարաբերութիւնը, գրելու արարքին ընթացքին, պարզուելու փոխարէն
աւելի կը բարդանայ, եւ Քաֆքա իր գրելը կ'որակէ «գիտակցաբար երկարա-
ձգուած բաժանում մը» նոյն ատեն թմրանելով, որ պիտի չկարենայ բաժ-
նելի հօրը ու ժառանգէն: «Երբեմն աշխարհի քարտէսը առջեւ բացուած եւ
քեզ ալ անօր վրայ տարածուած կ'ընդունանք», կը գրէ հօրը:

Հօրը հետ այս աստիճան բարձր յարաբերութիւններ ունեցող մէկու մը
համար արտասովոր պէտք չէ նկատուի, եթէ ան գրի առնէ հաս ներկայաց-
ւած «Վեխոք»: Իր օրագրիին մէջ 23 Սեպտեմբեր 1912 թուակիր արձանագ-
րութիւնը կը սկսի հետեւեալ տողերով: «Այս պատմութիւնը՝ «Վեխոք», 22
Սեպտեմբեր 23ին կապուղ գիշերը՝ իրիկուան ժամը 10էն մինչեւ առտուան
նը, մէկ շունչով գրեցի...»:

Եւ աւելի վարը.
«Միայն այսպէս կարելի է գրել... մարմինը եւ հագին ամբողջութեամբ
բամալով»:

Իսկ ուրիշ տեղ մը.
«Եւ այդ երկար գիշերուան ընթացքին վերքը բացուեցաւ»:

Ինչպէ՞ս ըմբռնել այս պատմութեան վերջին մասը, իրապաշտ գրա-
կանութեան յատկանիչներէն բուսական հետու մօտեցումը: Հոգեբանական
տեսանկիւնէ դիտուած Գէորդ Պենտեմանի նշանուիւր ձեւով մը հօրմէն ձեռ-
բաղատուելու եղանակ մըն է, «հայրը մեռցնելու» եղանակ մը: «Նամակ հօ-
րը» նշանաւոր գրութեան մէջ արտայայտուած է նաեւ ա՛յն գաղափարը, թէ
հօրմէն ձեռքազատուելու համար պէտք է ինք հայր դառնայ: Փոխանակ
հայրը մեռցնելու՝ պատմութեան մէջ ան հօրը գոհր կը դառնայ, որով նա-
հապեհական ուժը կը ներկայանայ իրրեւ ընկերային ատեն: Հոս նաեւ կա-
րելի է աստուածաբանական եզրեր տեսնել: Սոյնորական հայր մը Աստծոյ
նման ամենազօր եւ ամենապէտ է: Կը պահանջէ իր կեանքը՝ արարելի մը պէս
եւ ազան կ'ընդունի աստուայնային այս որոշումը: Արդեւ տեղ մը կը կար-

գանք ուրիշ մեկնութիւն մը. Հայրը խննթ մըն է եւ խննթութիւնը իրեն ուժ կը պարգևէ: Մարմնով եւ Հոգիով Հիւանդ Հայրը այս ձեւով կը տիրապետէ իր տղան: Իր տկարութիւնը տեսակ մը թաքուն ուժ մըն է, իսկ խննթութիւնը՝ տեսակ մը զերիբական իմաստութիւն: Մէկ պատմութեամբ՝ էրեք տարբեր մտեցում, որոնք ո՛չ մէկ բան կ'աւելցնեն եւ ոչ ալ բան մը կը պակսեցնեն, Գրութիւնը կը մնայ այնպէս՝ ինչպէս որ է:

Հողերանական՝ Փրէօյտեան մտեցումները յեն պակսիք նաեւ Քաֆքայի թերեւս ամէնէն նշանաւոր պատմութեան՝ «Փոխակերպութեան» պարզային ալ, որ կը սկսի Հետեւայ նախադասութիւններով.

«Երբ Գրիգոր Սամա առաւօտ մը անհաճգիտս երագներէ ետք արքունցաւ, ինքզինք անկողնին մէջ առնելի մակարոյծի մը վերածուած գտաւ:

Հոս կարելի է տեսնել Գէորգի ըմբոսացող անդիտակցութիւնը, ներքին բողբոջ փոխակերպութեան միջոցով: Նաեւ Խօտիփուսի դրութիւնը, սղուն՝ Սամայի կեցուածքը Հօրը եւ ընտանիքին միւս անդամներուն նկատմամբ կարելի է ներառնել այս մեկնաբանութեան ծիրին մէջ: Այս վարկածները նոյնիսկ կարելի է շփոթել մէջըներմերով: Միայն սխալ պիտի ըլլար Քաֆքան իբրեւ Յրէօյտի ուշիմ մէկ աշակերտը տեսնելու նիգր, որովհետեւ ան Յրէօյտէն Հագիւ սերունդ մը ետք Համարձակած է Աստուայ տայ ա՛ն Հանգամանքը, որ Ան ունի բաւ Հաւատքի սկզբունքներուն, այլ խօսքով՝ չբնաճանկնով Աստուծոյ զաղափարը Հօր մը կերպարանքով, ինչպէս Յրէօյտ է՛րնէր:

Բայց իւրաքանչիւր մտեցում ունի իր ընկերային արժանեքը: «Այնքանից» մէջ որդեգրուած մտեցման զարգացումը ասոր լաւագոյն ասպարջն է: «Եղեմակի» անդիքէն թարգմանութիւնը 1930ին յոյս տեսաւ Մ. Նահապետեան մէջ. «ԵՆՆՂԵՆ» է եւ շնորհիւ Յարգելի պէս կ'իւր ունեցող Հանդէսներ վերապահութեամբ մտեցան անոր: «Իտալական» Հրատարակչութեան մէջ ետք միայն, 1937ին, Քաֆքայի Համակիրներու թիւր դպրոցին աւելցաւ: Այդ օրերուն, Հողերանական վերլուծումը ընկերային կեանքին մէջ արդէն լուրջ դեր սկսած էր խաղալ: Երիտասարդ մտաւորականները դիմաւ նոյնացան Քաֆքայի նէօթիկ Հերոսներուն Հետ: Մանաւանդ խափնուածի շարժառիթն էր, որ կը քաշէր դիրենք: Յուսախաբ Ռուսաստանէն, որ մաքրագործութեան յրճան մը կ'աղբէր, Քաֆքայի յուսախաբ, պատրանքէ դուրկ եւ իրականութենէ Հեռու Հերոսներուն մէջ անոնք վերապտան իրենք դիրենք:

Բուռն մէծերու առիթ տուած է Քաֆքայի երկերուն աստուածաբանական մտեցումը, յատկապէս «Եղեմակը» վէպի կապակցութեամբ: Այս գործին մէջ Ք. անունով երկրաչափ մը գիւղ մը կ'երթայ: Ան կանչուած է գուրսի մը կողմէ, որ իր ղղեակը կը բնակի եւ սեփականատէրն է մերոյիչեայ դիւղին: Երկրաչափ Ք., իր բազմաթիւ ղուգարիպութիւններուն կարգին, կը փորձէ նաեւ ղղեակ երթալ, տեսնելու Համար այն անձը, որուն Հրուէքով կը դանուի այդ օտար վայրը: Իր բոլոր շաները ապարդիւն կը մնան: Բնաւ չի Հասնիր Հոն.

«Եւ Յարեմ դէպի առաջ շարժեցաւ, բայց շատ երկար ճամբայ մըն էր: Որովհետեւ ճամբան, մայրուղին դէպի գղեակին գտնուած կատարը չէր տաներ, միայն կը մտնէր անտ, բայց մեռչր, կարծես գիտակցաբար, կը քեֆէր եւ եթէ չէր հեռանար դիւղէն՝ չէր մտնեար այ տնոր»:

Պրոտ դղեակը կը նոյնպէս ստուգանքանական զողորմութեան» հետ, որիչ մեկնաբաններ, մանաւանդ կաթողիկէ տւանդի հետեւորդները, երկրաչափ Ք.ի դէպի գղեակ երթին մէջ կը տեսնեն դէպի փրկութիւն, դէպի զարմութիւն քալող հրեան, որ զերծ կը մնայ փրկութենէ, որովհետեւ ան չ'ընդունիր Փրկիչը:

Անտարակոյտ, Քաֆքայի ոճը իրապաշտ ոճ մըն է՝ բեռնաւորութեամբ խորհրդանիշներով: Եւ այդ խորհրդանիշներն են, որ քաղաղական ուժով մը կ'առնինքեն մեկնաբաններն ու բանասէրները: Բայց իր խորհրդանիշները շատ տարբեր են դասական գրականութեան ծանօթ խորհրդանիշներէն, ուր իրականութիւնը պատկերներով կը տրուի: Քաֆքայի պարագային չկան առանձին խորհրդանիշներ: Ընդհանուր առմամբ՝ իր մշակած իրապաշտութիւնը զերիբականը մատնանշող իրապաշտութիւն մըն է, զոր ան ո՛չ բացառաբար կ'ուզէ եւ ոչ ալ կրնայ: Որովհետեւ զերիբականը անմեկնելի է: Եւ կիսէ Քաֆքայի իրապաշտութիւնը զերծ է մասնաւորող խորհրդանիշէ, ան խորհրդանիշն է ընդհանուրին: Փյուպէր առիթով մը ըսած է, թէ «ճեղքերէն տեսանիշ կը դառնայ անդունդը»: Քաֆքայի իրապաշտութեան ճեղքերէն իրբի նմանագացում կը պսպղայ ա՛յն յոյսը, որ մեզի համար չէն:

Այսպէս Քամիւ զՅոյսը եւ անհեթեթը Քաֆքայի երկիմ մէջ» իր ելանաւոր յօդուածով կ'արտայայտէ հետեւեալը.

«Կան երկիր, որոնց եղիւթ-խիւնները ընթերցողին շատ բնական ըլլալ կը թուին: Ուրիշներու պարագային — ասոնք շատ աւելի հագուազեայ են — հորաբը իր գլխու կ'եկամները շատ բնական էր ճկասէ: Չարմամալի, բայց քաջայայտ տալօրիմակութիւն մը. որքան անբնական ըլլան հերոսի մը արկածախնդարութիւնները, այ՛նքան զգալի կը դառնայ զատմամբիմ բնականութիւնը: Ան կը համապատասխանէ այն զգալի հեռաւորութեան, որ գայտըթիւնումի մարդու իր կեանքի օտարութեան եւ այս օտարութիւնը ստանձնելու աւեր պատրաստակամութեամբ միջու: Ասիկա կը թուի ըլլալ Քաֆքայի բնականութիւնը»:

Ձեռն պահած եւ հուանաբար ալ պիտի չպահուին Քաֆքայի գրական որոշ հոտանքներու մաս կազմել տալու — այս բոլորը անշուշտ յետմահու — եւ կամ ընկերային ու փիլիսոփայական որոշ մտեցումներով ըմբռնելու, ուսումնասիրելու փորձելու: Բաւական ուշ սկսած են մարքսեան մտեցումով կատարուած ուսումնասիրութիւնները՝ ընկերավարական իրապաշտութիւնը որդեգրած երկիրներու, այսինքն՝ Արեւելեան Եւրոպայի եւ Ռուսաստանի մէջ: Հոս յատկապէս հետաքրքրական է Ձեխտալովաքիոյ կեցուածքը՝ իբրեւ Քաֆքայի նախնիքը: Մինչեւ ՅՄԱԿԻ թուականներու սկիզբը անոր մշակած գրականութիւնը մաս կը կազմէր այսպէս կոչուած ճանկումային գրականութեան», եւ այս թուականէն ետք է միայն, որ կատարուեցան լուրջ մտեցումներ՝ մարքսեան գիտնի վրայ, յատկապէս անոր երկը նաեւ քննարկին եւ պատմական գործօններու օգնութեամբ ուսումնասիրելու ուղղութեամբ: Այս մտեցումին սահմանափակումը կը պատճառարանուէր ճեղքին ըննադատութեան անբաւարարութեամբ:

Քաֆքա կ'ապրէր եռակի ճառանձնաթաղի: մը մէջ՝ զերմանական, հրէական եւ քաղցրեմական: 1900ին, Փրակի մէջ կային աւելի քան 400 հասարակական, որոնց միայն 30 հազարը զերմանախօսներ էին՝ մեծ մասամբ հրեայ ծագումով:

Փրակ քաջայման ընթացքին մէջ գտնուող Աւարո-Շուրաբակուն կայսրութեան կարեւոր քաղաքներէն մէկն էր, նաեւ եկեղծը չեխ ազգայնա-

կաններուն: Կեդրոնախոյս օւժերուն կողքին նաեւ գոյութիւն ունէր Հասարակական յեղաշրջումի ստուերը: Ըստ մարքտեան տեսութեան՝ այս շրջանը նաեւ լատինան էր ազատամտութեան, զոր փոխարինելու կոչուած էր գաղութարարութիւնը: Բայց այս վերջինը կը սպառնար Հրեաներուն, ինչպէս պատմութիւնը պիտի ապացուցէր քանի ժր տասնամեակ ետք: Այս սպառնալիքը կ'աշխուժացնէր մշակութային գործունէութիւնը Փրակի Հրեաներուն, փոքրամասնութիւն մը, որուն ծոցէն ծնունդ առած է նաեւ մեզի լաւ ծանօթ Յրանց Վերֆէլը: Այս մտեցումը անշուշտ ունի Հետաքրքրական որոշ կարեր, բայց կերպով մը չի կրնար բացատրել, թէ նոյն միջավայրին մէջ ապրող Հրեայ ծաղումով տասնեակ մը զրոշներէն ինչո՞ւ միայն մէկը՝ Յրանց Կաֆքան մշակած է նման գրականութիւն մը:

Փորձուած է Քաֆքան ներկայացնել իբրեւ կեդրոնական մէկ ղէժժը արտայայտուած գրականութեան: Արտաքնապէս Համոզիչ փաստեր կան այս ուղղութեամբ: Քաֆքայի կենդանութեան օրօք լոյս տեսած բոլոր գործերը Հրատարակուած են «Բուրթ Վոլֆֆ» Հրատարակչատունէն, ուր կարելի էր դռնել սոյն շարժումին բոլոր գլխաւոր ներկայացուցիչները, Կան նաեւ սարիչ աղերսներ: Իսկ երկրորդ Հայացքով կը տեսնենք Քաֆքայի ընտրուած ատաղապարտութիւններէն մէկը այդ շրջանի կարեւոր ղէժժերէն մէկուն՝ Լահանէն Բ. Պէլեքի կապակցութեամբ:

«Ձեւ հասկնար այս փրքաւածնայը: Տիրականը հոս աղմուկն է եւ բառերու հրմուշակը (...) քառերը չեն վերածախիր կամուրջներու, այլ՝ բարձրաբարձր, ամանցանիլի պատերու: Բառերը չեն խոսումք եւ չեն դառնար խզուանի մը կայ, արիւ շլիճը»:

Արտայայտուածները կը դիմէին գրգռիչ մտեցման՝ աշխարհը փոխելու նպատակով, Հաւատարմով, որ բառերով կարելի է փոխել աշխարհի ընթացքը: Քաֆքան նման տեսակէտի մը երբեք չէ Հաւատացած: Իր գրականութիւնը կը վիտայ Հրեան Հակասութիւններով, իր վէպերուն գործողութեան վայրը անունն է, որ Հակասակ այս իրողութեան ճնշիչ է՝ նեղ խոցի մը պէս: Իսկ արտայայտուածները կը ձգտէին փոխել ղէպի առաջ:

Աւելի լուրջ են Քաֆքան իբրեւ գերբնապաշտ գրականութեան ողակներէն մէկը նկատելու միտող փորձերը: Իրօք, «Նաստվարուք իւրը» նախ եւ առաջ Ֆրանսայի մէջ գիտատուեցաւ գերբնապաշտ գրականութեան ռասիֆիւրաներէն մէկուն: Անտրէ Պրըթոնի կողմէ:

Անտարակոյս, Քաֆքայի գրականութեան մէջ կան այդ գրականութեան նշմարները, — ըմբոստութիւնը, յուսահատութիւնը, անտրամաբանական զիպուածները: Բայց ասիկա չի նշանակեր, որ Քաֆքա գերբնապաշտ գրող մը եղած է: Վերոյիշեալ երանդները Քաֆքայի պարագային ունին վերաբրապաշտներուն անձանօթ նշանակութիւններ: Աւելին՝ այս վերջիններուն Հետաքրքրութիւնները չ'իմնովին տարբեր էին Քաֆքայի Հետաքրքրութիւններէն:

Քաֆքայի մօտ մասնաւոր անհիթլթը բոլորովին ուրիշ, զրացականին սահմանները անցնելու ծառայող միջոց մը եղած է: Իսկ վերբնապաշտները անհիթլթին միջոցով ասանդական արժէքները կ'ուզէին քանդել: Վերջիններէն մասնաւոր տատախտներուն անիմաստ գրութիւնները աշխարհի ոչնչութիւնը մերկացնելու կը ծառայէին: Անոնց ընդմիջումը Հետեւանքն էր անհիթլթին: Իրենց ըմբոստութիւնը կը անտէր քանդելու մտրուցքէն եւ քսոսին պատճառած թաքուն Հաճոյքէն: Քանդելով Հանդերձ՝ ունէին մարդաբանական եղբ մը, որ չէր անտեսեր աղալան: Քաֆքայի ըմբոստութիւնը չէր ձգտեր անկարգութեան, ընդհակառակն, կարգ ու կանոնի պակասը դիմք ան-

հանդիստ կ'ընէր: Ան բացարձակ հեղինակութիւնը կը փնտռէր եւ չէր հաւատար բացարձակ ազատութեան, ինչպէս գերբնականները կ'ընէին:

Այսպէս, կարելի է ժամերով շարունակել եւ Քաֆքան զիտել պրիս-մակի մը զանազան կողմերով եւ իւրաքանչիւր անգամ տեսնել զանազան երանգներ: Արդեօք ան գերազնահատուած գրող մըն է: Ամերիկացի յայտնի ջենազատ քննադատ Ուիլյամ Վեյնթրոփը կարծիք մը Քաֆքայի մասին յօդուածին մէջ (Վերնագիր մը, որ ինքնին արդէն չատ խօսուած է), ի մէջ այլոց կ'ըսէ.

«... Ճշայտի, Փրուստի եւ կամ Տալքէի, անհատականութեան այս մեծ ու իրապաշտ վարպետներում հեռա Քաֆքան բազմաթիւ բոլորովին անհեթեթ է (...) բայց Քաֆքան եթէ մոյմիակ դրուի ա՛յն գրողներում կողքին, որոնց հետ հասնումովը պատշաճ է, արդիւնքը ամնպատ պիտի ըլլայ իրեն համար. կակու եւ Փօ իրեն պէս ներքոյի կ'ին եւ զժրախտ (...) իր ժառանգը մնշուող եւ տարակուսող հագիի մը արտաբերած անբոշ միջին է: Ինծի համար անհասկնալի է, թէ մարդ ինչպէս գիտէ մեծ արուեստագետ մը կամ բարոյական գեղանի վրայ ազդուելու ցոյց տուող մէկը կրնայ համարել»:

Աւելորդի կարծիքները թերեւս չարագանցուած ըլլան: Ամէն պարագայի, անոնք տեսակ մը հակազդեցութիւն են բոլոր անոնց դէմ, որոնք Քաֆքայի գրականութիւնը մէկդի գնելով՝ կը փնտռեն չես զիտել ո՛ր տեսութեան փաստերը: Ուիլյամ Վեյնթրոփը Քաֆքայի ներկերը նախ եւ առաջ իբրեւ զբաղանջ տեսողութեան եւ մնայուն կոթող նկատելու լուրջ հրաւեր մըն է:

ԲԱՃՃԻ ՔԷՊԱԳՃԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԵՆՆՈՒԹԻՒՆ

Erich Heiler: Die Welt Franz Kafka, in «Hamburger Akademische Rundschau», Heft 2, 1948/49

Edmund Wilson: Eine Ketznerische Ansicht über Franz Kafka, in «Classics and Commercials. A Literary Chronicle of the Forties», Ferrar, Straus and Giroux, 1950, New-York

Heinz Politzer: Problematik und Probleme der Kafka-Forschung, in «Monatshefte: A Journal Devoted to the Study of German Languages and Literature, Vol. XLII», 1950

Maja Goth: Der Surrealismus und Franz Kafka, in «Franz Kafka et les Lettres Françaises (1928-1950)», Paris, 1956

Albert Camus: Die Hoffnung und das Absurde im Werk von Franz Kafka, in «Le Mythe de Sisyphe», Gallimard, 1942

Eduard Goldstücker: Über Franz Kafka aus der Prager Perspektive 1963, Prag 1965

Paul Raabe: Franz Kafka und der Expressionismus, in «Zeitschrift für deutsche Philologie», Heft 2, 1967


Klaus Wagenbach: Franz Kafka-Bilder aus seinem Leben, Verlag Klaus Wagenbach, Berlin, 1983

Գ. Զ Ա Ն Ի Կ Ն Ա Ն



Այսպիսով մենք այս գրքի մեջ կ'ապագիտենք Հայաստանի երիտասարդական արձակիչ ներկայացուցիչներին յաջողիցի կայրելի խումբ մը ստեղծարձակիցիներ, որոնց մէջ արդէն վաստակի աէր են վահագն Գրիգորեան, Էդրայրը՝ Վահան Գրիգորեան, Վահէ Պօղոսեան, Արեւշատ Պետրոսեան, Վահո Արարիկեան, Մերուժան Տէր-Գոսյանեան և զոյ՛ի յօղումը ստորադրող Գրիգոր Զանկի-տան: Վէ՛լքն երկուրը, ստեղծարձակիցն էջբոս կողքին՝ յաճախ ներկայ են Հայաստանի մասունին մէջ՝ Հրուարակագրական, ակնարկային ին օրայային թույթ կրող գրութեաններով, այդ սեւերուն պահանջում թարմ ու անեղ արժանեքնելով, տանելու, ծառայելու ու կամ հաղորդելու կարողակներովեանք:

Նիւնտոս քաղաքին ննչեան 100ամեակին աւիթիմ մեր անշատած գրութեաններին երկրորդն է ընկղնտակիան Հայաստանց ամսագրերին մէջ ստույայած Զանկեանի ներկայ գրութեանը, որ միտմանեան, և ուղղակի ու անուղղակի մեամ մը կը պատմուի մեն թանասեղծին երկուսեանը-տող փառն ու ողբերգութեանը:



Ճիշդ է, ճիշդ, աշխարհի բայրը գաւակներն իրենց ծնողներէ շիրմներին են ուխտի դնում, բայց ի՞նչ անէր Հայիկ Վասուժանը: Հայրը գերեզման չունէր:

...1915 թուականի Ապրիլին տիկին Արարոյն Հինգ ամսուայ յղէ էր: Գոսան-շորսի երեկոյեան իրենց տուն հիւր եկան Սահակ Մեղրոյն ու Հրուարակագիր Յովհաննէս Պօղոսեանը: Մինչև ուշ գիշեր մնացին: Նրանց գնալուց յետոյ, երբ Վարուժանը արդէն ճիշտ հանուած էր,

դրան ուժեղ թակուց լսուեց: Տիկին Արաք- սին ինքը զնայ բացելու: Ներս խուժեցին երեք ոստիկան ու Վարուժանի ձեռազրե- րը հաւաքելով, ասացին.

— Էֆենդին պէտք է զայ մեզ հետ, որովհետք հաստատի, թէ այս թղթերն ի- րենն են:

...1915 թուականի Յունիսին տիկին Արաքօին եօթ ամուսյ յղի էր: Պուրից օտմանեան բռնապետութեան գաւառներն էին աքսորուել կրկու հարիւր հայ մտա- ւորականներ: Արեւմտահայաստան ընտ- րանին, նրանցից ոչ մէկը չզիտէր, մըա- քով անգամ չէր կարող անցկացնել, որ իթ- թիւհատական կառավարութիւնը տեղա- կան իշխանութիւններին զազտի հրաման է ուղարկել. «Վերջնական հաշտեյարդար տեսնել անխտիր քոյր հայերի հետ»: Ո՛վ նման ննկութիւն կը սպասէր: Գրիգոր Զօհրապի պէս փորձուած դիւանադէտն անգամ Զուէն պատրիարքի եւ Պուսում մնացած մի քանի երեւելի ազգայինների հետ միտնախմբուած վարչապետ Սաիդ Հալիմ փոշալի սուքէ կը զնայեց ու խելո- րում էր մեղմ լինել հայերի հանդէպ:

Պուսում Լուպար փաշան հետադէր էր յղում իսպանիայի Ալֆոնս 12րդ արքա- յին, նրան յորդորում տէր կանգնել ան- տէր մնացած հայ ժողովրդին: Եւ միայն Վարուժանը՝ չըջապատից վերացած, ինքն իր մէջ մեկուսացած, անփոփոխած, ըս- տեղծագործում էր, անբնական գրում:

Չանդըրըում նա սենեակ վարձեց մի թրքացած հայի՝ Բերազիմի տանը: Նըս- ասում էր բակի ընկուզենու ստուերում, կողքին նստեցնում տանտիրոջ փոքր աղ- ջըկան՝ Մանուշակին, ու մօտալուս ժահն արհամարհելով գրում բանաստեղծու- թիւններ, որոնք փառաբանում էին կեան- քը, Հողի արգասաւորութիւնը, բնու- թեան յաւերժութիւնը: Այդպէս նա վեց տետր սպասեց: Երեւի զեւ շատ գրելէք ունէր, որովհետեւ բացիկ ուղարկեց տուն, կնոջը խնդրեց շտապ իրենց հասցնել «Լ- իակնանք»: Ընկերներին զամացրել էր նը- ման անտփոք աշխատասիրութիւնը, լա- ւատեսութիւնը: Մի անգամ, երբ հրապա- րակապիր Միքայէլ Եամանեանը հարց-

րեց շարժապիթը, Վարուժանը պատաս- խանեց.

— Իմ հանդարտամտութիւնս ես կը քաղեմ այն հաւատաքէն, զոր ունիմ հա- յուն ապագայի վրայ:

...1915 թուականի Օգոստոսի քսան- վեցին տիկին Արաքօին երկուքի ցաւերի մէջ էր: Չանդըրըում մնացած եօթանա- սուն հայ աքսորականներից ՚իկին՝ Թու- բէն Սեւակին, Դանիէլ Վարուժանին, կազմարար Օննիկ Մաղազանեանին, զար- րին Վահան Քեհայեանին եւ հացթուխ Յարութիւնին կառք նստեցրին: Միւս վաթսունհինգը մինչեւ Չանդըրը կա- մուրն ուղեկցեցին նրանց: Գայլում էին լուռ ու կառքի բաց պատուահեղ լսում մեկնողների ձայները.

— Մնաք բարով, մենք մեռնելու կ'երթանք...

— Հայ սուրբեր, աղօթեցէք մեզի համար...

— Մեր որբերուն տէր եղէք...

(Տիկին Արաքօու երկուքի ցաւերը շարունակում էին):

Կառքերը ուղղութիւն վերցրեցին դէ- սի Այալ: Սակայն Գալէյնը զիւղը նոր էին անցել, երբ թագաւորներից զուրբ թրան ու կառքի առաջը կտրեցին զարան մտած քորդ Ալոն, Թեքէ Հասանը, Իս- մայիլը, յատուկ այդ օրուայ համար բան- տից բաց թողնուած երեք այլ սնրադործ- ներ: Նրանք իբր զինաթափեցին ուղեկցող ստաիկաններին, կատապանին հրամայեցին տեղից չշարժուել ու աքսորականները ձեռքերը կապտուելով, դրամները, թան- կարժէք իրերը, անգամ ծխախոտները խը- լելով՝ քշեցին ձոր: Երբ գիմացի անտա- րակը մտան, բոլորին մերկացրեցին, ջը- շուկով իրար մէջ բաժանեցին շորերը: Յե- տոյ իւրաքանչիւրին մի ծառի կապելով դանդաղ սկսեցին ձորթել: Աքսորակա- ններից միայն Վարուժանը գիմապրութեան իտրծ արեց. կատաղած դահեճը դաշտին մի հարուածով՝ ճեղքեց, դուրս թափեց նրա որովայնը, մէկ-մէկ աչքերը հանեց:

Արգէն միջնաղ էր, որ տեղ հասան բարձրատիւնան պաշտօնեաները: Նրանք սեփական աչքերով՝ կամողեցին, որ

հիշքն էլ դիտակ են, հրամայեցին վրանները մի թեթեւ հող ցնել ու ինքնարաւ ջրը՝ քիչով անզարուեցին կառքերի մէջ, հեռացան :

Տիկին Արաքոյի ցաւերը աւարտուեցին : Ծնուեց Հայկը . . .

Ես յաճախ եմ փորձել պատկերացնել, թէ ի՞նչ կ'անէր Վարուժանը, եթէ հրաշքով ողջ մնար, Անսար բարեկամների ու երկրպագուների՝ Մկրտիչ Պարտիզեանի, Անայեւի, Յակոբ Սիրունու, այլոց յարգորհներն, մեկնէր Եւրոպա : Ձէ՞ որ անհաստեաները վկայում են՝ Վարուժանը չէր ուզում մենեւի (ո՞ր երեսունմէկ տարեկան բանաստեղծը մեռնել կ'ուզի) :

«Սարսուղներ»ի, «Հարմ»ի, «Ծիր կըռուկ»ի («ՄԼԻ բանաստեղծութեան անմահ մէկ էջի»), — ինչպէս կոչել է թէքեանը), վերջապէս «Հացին երգ»ի հեղինակին թուում էր, թէ դեռ չի գրել իր ժողովրդի մեծութեանը արժանի մի գործ, չէ՞ մարել որդիական պարտքը : Նրա նւաճական երազները միշտ էլ եղել էր «...Ապագային մարդերուն նուիրել այնպիսի հզօր երգ մը, որ Հայրենիքը ինծի պէս արարած մը ծնած ըլլալուն գոնէ չզղջայ» :

Դանիէլ Վարուժանը մեծ բանաստեղծ էր, ուստի աւելորդ է աւելացնելը, որ մեծ հայրենասէր էր : Ողորդուելուց առաջ նա վերջին անգամ աչքերը երկինք յարեց ու սասց .

— Պիտի մեռնիմ Հայաստանին պատկերը բերբերում մէջ . . .

Ահա թէ ինչու ինձ հաստատ թուում է, որ եթէ նա կենդանի մնար, անպայման պիտի Հայաստան գար : Ո՛չ, ես նրան շատ էլ նրեանում չեմ պատկերացնում : Վարուժանն արդէն «ճշակակամ» բանաստեղծութիւններ էր գրում եւ հաւանաբար պիտի նախընտրէր գիւղական, ասեմք Արտաշատին ժօտիկ մի բնակավայր, ուր իր երգած կալերի «ոսկիփողին» կայ, «կապոյտ ծուխով» թռնիրներն ու հեթանոսական աստուածների թափառող ուղիները : Եւ, ամենակարեւորը, նա պիտի ծանօթանար, ընկերութիւն անէր Նդիլէ Չարենցի հետ, այն էլ մի չըմանում, երբ գրում

էր «Ես իմ անուշ Հայաստանին . . . Դրժւար է, չէ՞», նրանց կողք-կողքի պատկերացնելն անգամ : Միաժամանակ երկու այդպիսի՝ «անճար» այսպիսի մի փոքրիկ երկրում :

Սակայն դա տեղի չունեցաւ : Վարուժանը չկարողացաւ Հայաստան դալ, եւ նրա մահից ուղիղ եօթանասուն տարի անց եկել է որդին, որ հանդիպի . . . հօրը :

Ու ահա հանդիպել է : Հայր ու տղայ զարմացած, անակնկալ եկած կանգնել, նայում են իրար ու ինձ թուում է, թէ պող արձանը աստիճանաբար կենդանանում է, շերտ-թեւեւ ցլում : Նրանց ախր առաջին անգամ են տեսնում իրար : Հայիչը չկարողացաւ զօպիլ արցունքները : «Հայրս ինչ երեոսասա՛րդ է մնացել» : Այո՛, դա շատ տարօրինակ հանդիպում էր : Հայրն առաւելագոյնը երեսունմէկ տարեկան էր, որդին՝ եօթանասուն : Բայց, չնայած այդ տարբերութեանը, նրանք այնքան նման են միմեանց : Որդին հօր ճակատը ունի, սուր հայեացքը, դասուկան քիթը : Միայն բեղերն են կրճատուած, «ամերիկանացուած» : Բայց ինչո՞ւ անունը Վարուժան չէ, չէ՞ որ նախաձեռնելուց մէկ օր առաջ հայրը լուր էր ուղարկել Պոլիս .

— Նոր զաւակիս անունը թող Վարուժան դնեն :

— Իմ երկրորդ անունս Վարուժան է, — հպարտ ասաց որդին, — մեր բոլոր ընտանիքին երկրորդ անունը Վարուժան է : Հիմա Ամերիկայի մէջ քանի Վարուժան կայ :

— Ձեր ընտանիքը Պոլիս՞ց Ամերիկա հասաւ :

Հայիկ Վարուժանը մոռցուեց .

— Ձե՞մ գիտեր, ես Պոլիս չեմ յիշեր : Չկարողացաւ ասել, որ չեմ ուզեր յիշել : Այսինքն, ի՞նչ յիշելու բան էր, որ . . .

Ջարդն ու տեղահանութիւնը դեռ լէ՛ին աւարտուելի, Վարուժանի բարեկամներից մէկը՝ բժիշկ Ջարեանը մի զարմանալի խիզախ ճամբորդութիւն կատարեց : Գընաց Ջանդըրը, դասու այն կառապանին, որը Վարուժանին ու ընկերներին նահապետական վայրէջք էր հասցրել : Եւ պատեհե-

բացնում էք, կատապանը շամաչեց, մի քանի ոսկով տարաւ, տեղը ցոյց տուեց։
 — Վարուժան էֆենդին շա՛տ դըժ-
 ւար հոգին աւանդեց, — ձորում արդէն
 քաջատեղեակութիւնը ցուցադրեց նա, —
 անընդհատ խօսեց, խօսեց, բայց չհասկա-
 ցայ, ինչ էր ասում։ Ես հայերէն չգիտեմ։
 Մինչ կատապանը ոսկիները զնգզնո-
 ւացնելով շաղակրատում էր, բօխն ար-
 լազարազ հոնի էր քանդում։ Շատ չար-
 չարուեց, փնտռեց, ուրիշ չգտաւ։
 — Զկա՛յ, էֆենդիս, չկա՛յ, — ի վեր-
 ջոյ նրա մտադրութիւնը հասկացաւ կա-
 տապանը, — քեզից ասա՛յ էլի հայեր ե-
 կան, փնտռեցին, չգտան, բայց ես լաւ եմ
 յիշում, ա՛յ, այստեղ էր...

Բժիշկը բարձրացրեց հայեացքը։
 Ողջ ձորը աչք ծակող կանաչով էր
 պատած։ Հիռուում մի դորջ ժայռաբեկոր
 այնպէս էր փոռ ընկել, որ գիշատիչ գա-
 վանի երախ էր թռւում, իսկ նրա դիմաց
 մատղաշ, նոր անած ուտենին գողգողում
 էր, սրթորթում։
 — Զկա՛յ, էֆենդիս, չկա՛յ...

Կանցնեն տարիներ, Վարուժանի ու-
 սանդական ընկերը՝ վաղուց արդէն
 պատմութեան պրոֆեսոր, Բեյդիսի ուր-
 քայական ակադեմիայի անդամ կամ ժաջ
 Փրէքնը կ'իմանայ կատարուածի մասին
 ու մորմոցով կը գրի։

«Շատ լաւ էի ձանաչում Գանիէլ Վա-
 րուժանին։ Բացառիկ հմայքի տէր անձ-
 նաւորութիւն էր, հին ու աղնուազոյն քա-
 ղաքակրթութեան շատաւել, որն անթը-
 ւարկելի անձնական բարեմասնութիւններ
 ունէր։ Մարտափիլի է անկամ մտածել, որ
 նա զոհ է զնացել այն նողկալի նախնիքին,
 որն այդքան կեանքեր իւրեց ձեռնից։
 «Նուշայիսի՛ ածօթ մարդկութեան հա-
 մար»։

Բժիշկը Զարեանը Պոլիս վերադար-
 ձաւ, պատմեց տեսածները, եւ արկին Ա-
 րաքսին որոշեց՝ ինքն այդ երկրում այլ-
 եւս անելիք չունի։ Էլ ո՞ւմ համար մտայ,
 երբ նոյնիսկ ամուսնու անիւնն են տոե-
 ւանդել։

Բայց նա շատ լաւ էր յիշում Ապրիլի
 քսանչորսի դիւերը, իրենց տուն խուժած

ուտիկաններին, որոնք հաւաքեցին, ան-
 պէտք իրերի նման տոպրակի մէջ լցրե-
 ցին ամուսնու ձեռագրերը։ Տիկին Վա-
 րուժանը զիտէր, թէ ի՞նչ տառապանքով
 են դրուել այդ քանտասեղծութիւններին
 իւրաքանչիւր տո՛ղը, բա՛ռը։ Գիշերները,
 ինքնամոտաց ոգևորութեան պահերին
 Գանիէլը բարձրաձայն կարգացել էր մէկ-
 երկու հնչեակ, եւ ինքը համոզուած ասել
 էր՝ դրանք պոլիս-դործոցներ են։ (Ախր,
 արկին Արաքսին էլ էր մի քիչ բանաս-
 տեղծ)։ Նա սրան-նրան կաշտելով կա-
 րողացաւ մուտք գործել այն նկուղները,
 ուր փոռում էին հայ գրողներից բունա-
 գրաւուած ձեռագրերը եւ մի անձրեւտ
 երկնոյ տուն բերեց «Հացին երգը»։

Գոնէ յետոյ Հայաստան չեկաւ, որ մի
 ողջ ժողովրդի երախտէք խօսքը լսէր։
 Սերաստացի մեծաւարուստի տանը ծըն-
 ւած, բարձրաշխարհիկ բարբերով մեծա-
 ցած այդ զեղեցկուհին, որ ասանց այն էլ
 երեք որբի բեռ ունէր վտիտ ուտերին,
 ինչպէ՛ս կարողացաւ նման վճարկան,
 յանդուգն քայլ ձեռնարկել։ Զդա՞ց արդ-
 եօք, թէ ի՞նչ արեց Հայ դրակահոթեան
 համար։ Զէ՛ որ հայ լափածոն ասանց
 «Հացին երգի» նոյնն է, թէ ճարտարագե-
 տութիւնը ասանց կարճաւորի, երաժշ-
 տութիւնը՝ «Բեյլէ-Ֆիլհոն»...

«Հացին երգը» փրկուած էր, երիտա-
 սարդ այրին սկսեց մտածել զաւակներին
 փրկելու մասին։ Նա երեքին էլ շփոթա-
 թական որքանոց տեղաւորեց։

— Որքանոցը յիշո՞ւմ ես։
 — Շատ լաւ, այն ժամանակ արդէն
 չորս տարեկան էի։ Մեր տնօրէնը՝ Անտոնի
 կրաֆտ Բոննարը հայտնէր, բարի մարդ
 էր։ Որչա՛փ որբ փրկեց, Շփոցարիս տա-
 րու։ Ծիչը է, հարուստ չէր, բայց իր խը-
 նայոցութիւններով Բէնիլինի մէջ աղուոր
 որքանոց հիմնեց եւ կը ստիպէր, որ հա-
 յերէն սորվէր, հայերէն խօսիւք։ Քոյրս,
 Էդրայիս, որ ինձմէ մեծ էին, ժընեւ դըպ-
 րոց կ'ելնէին ու կը քնանային որքանու-
 ցի գիշերօթիկը։ Հոն իմացանք, որ մա-
 րդս մեծաւարուստ փրկար Արիկանին
 հետ ամուսնացեր, Ամերիկա անցեր է։
 Դասնա՞ղ, զժուար է խօսում Հայկը։

Մինք Վարուժանի անուան դպրոցից վերադառնում էինք ուղղով, աւելի ճիշդ, ցեմում էինք Սեբաստիա փողոցում, ու հենց որ հայեացքն ընկնում էր հայերէն ցուցանակի, խօսքը կէս էր թողնում, երկար, հեզելով կարգում: Հետաքրքիր է, զիտի՞ ի՞նչ հուտոր է եղել հայրը, լսել է, թէ նրա ելոյթները Սեբաստիայի Արամեան, Եւզոկիայի Ազգային, Պոլսի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, Պէրպէրեան, Դպրոցասիրոց վարժարաններում ինչպիսի ներդրում ութին են ունեցել ունկնդիրներին վրայ: Իսկ հայ դերու զիւտի 1500-ամեայ յորհեանի ժամանակ նրա արտասանած ճառը համարուել է զլայնաշունչ և բարձրաթիւղ գերթուած մը:

Ի՞նչ երանելի ժամանակներ են եղել: Էսայեան սանուց միութեան կազմակերպած այդ հանդիսութեանը բանախօսել է Դանիէլ Վարուժանը, Սիմեանթոն արտասանել է «Առաք Մեարապ» պոեմը, զեղարուեստական բաժնում երգչախումբը ղեկավարել ու մենեդիներով հանդէս է եկել Կոմիտասը:

— 1929ին, — դժուարութեամբ սկըսում է յիշել Հայկը, որովհետեւ պարզուում է, որ մինչև այժմ ոչ ոք չի հետաքրքրուել իր կեանքով, — մայրս, խորթ հայրս արդէն նիւ Ենթը հաստատուած, սուենի, ունեցուածքի տէք դարձած էին: Անկէ յետոյ իրենց առաջին դործը եղած էր մեզի որբանոցէն հանել, քովերին բերելը: Երբ քոյրս, եղբայրս, ես Ամերիկա հասանք, անգլիէն բառ մը չէինք զիտեր: Խորթ հայրս մեզի աղուոր դպրոց գրաւ, լեզու սորվեցուց և մեր ապագային համար ամէն ջանք թափեց:

Իս էլ մի միջիթարութիւն է: Վարուժանի բոլոր զաւակները՝ Վերոնը, Արմէնը, Հայկը, երախտագիտութեամբ են յիշում իրենց խորթ հորը: Նա մասնագիտութեամբ ինձններ է եղել, բայց սիրել է գրականութիւնը, պաշտամունք է ունեցել Վարուժանի բանաստեղծութեան հանդէպ: Ո՞վ զիտէ, ներքուստ չի՞ որոշել կեանքը, բոլոր միջոցները նուիրաբերել նրա ընտանիքի փրկութեանը: Թերեւս զրա համար ի՞ր երեխաները չի ունեցել:

Ու այդ հեռաւոր, օտար ափերում երջանիկ է եղել, երբ ընտանիքով հաւաքուել են ընթրիքի սեղանի շուրջը և փոքրիկ Վերոնին աթոռի վրայ կանգնեցնելով, արտասանել է տուել ազնւակի ծննդեան առթիւ հօր գրած բանաստեղծութիւնը.

Աղու՛ր, աղու՛ր, աղու՛ր վարդն իմ Գարունիս՛

Որ սրբոյն վրայ բացուեցար,
Եւ քեզի հետ բացիր հոգիս վըշտանեղծ
Նոր երազի մը պայծառ:

Ձի ես անդունդ եմ՝ որ կ'ըլլայ երջանիկ
Փոսուտայի մը լոյսով:

Անապա՛ում եմ, որ երկինքին կը ժըպտի
Իր ծըլարակ մե՛կ բոյսով:

— Ե՞րբ առաջին անգամ զգացիր, որ քո հայրը մեծ բանաստեղծ է, Հայկ:

— Եստ ուշ, — խոստովանում է նա, — սկզբները կը զարմանայի նոյնիսկ, որ Ամերիկայի մէջ, ուր ամէն մարդ այդքան նրաչուած է, հայերն իրենց զործը կը ձգեն, հօրս նուիրումս երեկոյթներ կը կազմակերպեն և զեռ կու գան մայրիկիս ալ կ'առնեն—կը տանին:

Արդէն այդ երեկոյթներէն մէկը պատճառ եղաւ, որ ես ամուսնանամ:

Հայկ Վարուժանը վերջապէս անգրադաոնում է, որ ինձ պէտք է ծանօթագնի իրեն թեւանցուկ արած, իր կողքից յուշիկ ու համարեա՛ անկատ քայլող կնոջը:

Ձեռքած առաջացած տարիքին, հմայել է Ալիս Վարուժանը: Այլքերը փայլում են սեւ թուշի փայլով, նուրբ չըրթունքներէ անկրկններում ու այսի փոսիկներէ մէջ մի ամօթխած, առինքնող ժպիտ կայ:

- Սեբաստացի՞ էք:
- Ինչէ՞ն ի՞մացաք:
- Սեբաստացիներն են սիրում զաւակներին Ալիս կոչել, որ իրենց հարազատ գետի կարօտը մեղմեն, յիշատակը պահպանեն:

— Այո՛, բայց ծնողներս ջարդէն առաջ Ամերիկա անցած են: Սեբաստիա

մայրս եւ տիկին Արաքսի Վարուժանը ընկերուհիներ են եղեր: Կը յիշե՞մ, որ մը Նիւ Եորքի մէջ մայրս յայտարարութիւն կուրաց, թէ Վարուժանին նուիրուած հանդիսութիւն կայ: Վերթամ, — լսաւ, կարելի է սերաստացիի կը հանդիպե՞մ: Կ'երթայ եւ կը զարմանայ, երբ բեմին վրայ տիկին Արաքսին կը տեսնէ: Երկու ընկերուհիներ կը փաթթուին եւ այդպէս ընտանիքներով սկսանք երթալ-գալ: Ես ու Հայկի ալ իրար տեսանք եւ...

— Զեք ամուսնութիւնն էլ Վարուժանի եւ տիկին Արաքսիի նման դժուար զուգի՞ եկաւ:

— Օ՛, այո, — քառասուն տարուայ յուշերից շտապունեց տիկին Ալիսը, — Հարսանեաց հանգէսին օրն արդէն որոշուած եւ հրաւիրատուները բաժնուած էին, երբ սկսաւ Երկրորդ աշխարհամարտը: Հայկին անմիջապէս բանակ տարին: Բարեբախտաբար ան իր ծառայութիւնը Նահանգներուն մէջ անցուց: Ամիս մը ետքը կրցաւ արձակուրդ խնդրել եւ իր պատկի, Հարսանեաց հանգէսի տարադասութիւններին ներկայ ըլլալ:

Տիկին Ալիսը կանգնուած է բանակ մայրի մէջտեղում եւ պայտասակը բացելով, խնամքով փաթաթուած լուսանկարներ հանում:

— Սա մեր աւագ որդին է՝ Դանիէլ Վարուժան Երկրորդը, սա ալ մեր թոռն է՝ Դանիէլ Վարուժան Երրորդը՝ այս տարի, Ապրիլ քսանչորսի նախօրէին ծնաւ: Այո՛, այո՛, զարմացած մի նայի՛ք, իրենց ծննդականներուն մէջ ալ այդպէս զբւանած է՝ Դանիէլ Վարուժան Երկրորդ, Դանիէլ Վարուժան Երրորդ:

Տիկին Ալիսը համարում է որդու, թոռան լուսանկարները, նորից տեղաւորում պայտասակի մէջ:

— Տասնհինգ օր է Ամերիկայէն եկած եմ, կարօտցած եմ, — ներդաժտութիւն հայցող ժպիտով ժպտում է նա:

Ես, ի հարկէ, շատ լաւ եմ հասկանում նրան: Վարուժաններին տունում սէրը՝ օջախի, կնոջ, երեխաների հանգէպ միշտ էլ պաշտամունքի է հասել: Ընտանիքի հոգսերը Հոգաւոր Հոգմար չէ՞ր, որ

Վարուժանի հայրը Բրգնիկի նման զեղեցիկ պիղը թողցց, պանդխտութեան մեկնեց Գոլիս: Հենց ինքը՝ Վարուժանը, ամուսնանալուց յետոյ զուտուց պաւառ ուսուցչութեան չէ՞ր գնում եւ Գոլում անգամ, երբ արդէն մեծ բանաստեղծի համբաւ ունէր, մի քանի վարժարաններում դաս չէ՞ր տալիս: Զուր չէ, որ տիկին Արաքսին մինչեւ մահ կրկնել է.

«Ընտանեկան յարկի տակ Վարուժան անհուն սէր, խանդաղատանք կը տանէր իր զուակներուն հանգէպ: Երբ ծնունց Վարուժանի անդրանիկ երեխան՝ Վարուժանակը, ինչպէս սիրում էր ինքը պոչել, Երկրորդը հայրն աշխարհի մեծ երջանկութիւն ապրեց, որ նամակ գրեց անգամ Բելլիս՝ ուսանողական ընկերոջը.

«Այրելի Պիեռ, երկու տարի է, որ ամուսնացել եմ, կիսա՝ Արաքսին, մի շիկանի գեղեցկուհի է. ես մրտն սիրում եմ ռամանիկ սիրով: Արդէն մէկ տարեկան պղիկ ունեմ, որն արտասովոր քնդուկուկութիւններ է ի յայտ բերում: Նա մոռնիկ կարողանում է շախմատ անել, եւ այդ մի հատիկ բարբ իմ հոգիմ լցնում է տեղաբարեկի յուզումով: Ես ճրամ «Վարուժանիկ» խորագրով մի բանաստեղծութիւն եմ նուիրել զա հրեշտակիս մականունն է...: Ես պաշտում եմ մրամ օգր հոգով»:

Վարուժանն իր երկրորդ զուակին՝ անդրանիկ որդուն, հայրական ինքնազոհ Հրեոսանքով զաւհատանուց էր կուրում, իսկ երրորդը զուակին, որի հետ քայլում ենք կողք-կողքի, նա չհասցըրեց տեսնել:

— Վերոնը, Արմէնը, դու յաճախ էք հանդիպում իրար, ընտանիքներով մօտ է՞ք:

— Առաջ, երբ մայրս ողջ էր, երբեմ մըն, երբեմն կը հանդիպէինք, հիմա զբոսով է չենք տեսնուիր:

Տիկին Արաքսին կհանքի վերջին տարիներին դոնէ երջանիկ եղաւ:

— Օ՛, ինչո՞ կինը շատ քաշեց, — խոնաւացան հարսի աչքերը, — կարծես 1915 թիւի Ապրիլ քսանչորսի վախը դեռ մէջն էր: Զէք ուզիր Վարուժանին կամ

Պոլիս ապրած տարիներու ժամին խօսիլ։ Որպէսզի քիչ մը փոխուի, երկրորդ ամուսինը՝ փերայր Ափիկեանը, մինչև Մարտիկո՝ կազարանկա տորաւ։ Շատ երկար մնացին, բայց օգուտ չըրաւ, նորէն յետ եկան։ Կետուրս արքան կը մտածէր, որ վերջը ուղիղի կաթուած ստացաւ, խօսելու կարողութիւնը կորսնցուց։ Ափիկեանը անոր երեխայի պէս նայեցաւ, մինչև անգամ յատուկ ուսուցիչ վարձեց, որ նորէն խօսելու վարժեցնէ։ Բայց երկրորդ ամուսինին մահէն յետոյ բոլորովին միտակ մնաց տիկին Վարուժանը։ Քանի մը ամիս անգլա-կանները, ետքը ծերանոց դրինք։ Հոն ալ մահացաւ։

Հուսթիւն տիրեց։

— Մենք Ամերիկայի մէջ ամէնքս ալ կ'աշխատեինք, — այդ լուսեան դէմ ըմբոստացաւ Հայի Վարուժանը, — ամէնքս ալ զբաղուած ենք։ Ես Ծրեզնոյի ամենամեծ լրագրին՝ «Ճրեզնո քիչին լուսանկար յայտածողներէն եմ եւ երբեմն շաբաթ օրերն ալ զործի կ'ըթամ, որ ապրուիմ։ Հիմա, օրինակ, Հայաստան դալու համար, մաս մըն ալ զալիք տարուայ արձակուրդէն վերցուցած եմ։ Մեր զուտկներուն իսկ, որոնք մեզմէ տասնչորս ժամ միայն հետու կ'ապրին, տարուայ մէջ մէկ-երկու անգամ կրնանք տեսնուիլ։

— Ի՞նչ մասնագիտութիւն ունի Դանիէլ Վարուժան Երկրորդը։

— Բնութեան պահպանութեան պրոֆեսոր է։ Ովկիանոսի շուրերի մաքրութիւնով կը զբաղի։ Համայնարանը աւարտելէն ետքը քանի՞ տարի անգործ մնաց։ Այս-այն զապաքը նմակ զրեց, զորո՞ւ ուզեց, վերջը Օրէկոնէն հրաւէր ստացաւ։ Ան ալ մեծ հայրիկին պէս իր աշակերտուհին սիրած եւ Հեար ամուսնացած է։

— Դանիէլ Վարուժան Երկրորդը պապի զբածոներին ծանօթ է, կարգո՞ւմ է։

— Ո՛ր, երկու տղաքս ալ հայերէն չեն զիտեր։ Երբ պղտիկ էին, Ծրեզնո կիրակնօրեայ դպրոց զրկեցինք, բայց թէ՛ տեղը հետու էր, եւ թէ՛ շատ բան չէին սորվեցներ։ Ատկէ զատ, Օրէկոն, ուր հիմա կ'ապրին, ոչ մէկ հայ կայ։ Բայց ես ի՞նչ

ընց համար քանի մը գործ թարգմանած եմ, — կարծես արդարանում է Հայիլը, — քանի մը թարգմանութիւն ալ թերթերու մէջ կարդացած եւ շատ հաւանած են։ Մինչև անգամ Դանիէլ Վարուժան Երկրորդը մեծ հօրմէն խանդավառուած, սկսած է զբաղանութիւն ընել, բայց արձա՞կ է դուրածը, թէ՛ շափածոյ, չեմ կրնար հասկընալ։

— Ուրեմն նրա որդին՝ Դանիէլ Վարուժան Երրորդը, առաւել եւս, ոչ հայերէն կ'իմանայ, ոչ պապին։

— Կ'իմանայ, անպայման կ'իմանայ, — շշտես ինչու ձայնը բարձրացրեց տիկին Ալիթը, — հիմա Միացեալ Նահանգներու մէջ հայ ժողովուրդը նոր շունչ առած է. ամէն տեղ եկեղեցիներ, ամէնօրեայ դպրոցներ, մշակութային սրահներ կը բացուին։ Մեր երկրորդ տղային՝ Վարուժանին կինն անգամ, որ ամերիկուհի մըն է, երեկոները համայնարան դնաց, հայոց պատմութիւն սորվեցաւ, որ իմանայ ամուսինը ո՞վ է, ի՞նչ ազգի զաւակ է։ Ընչէ՞, որ երկու հարստ ալ ամերիկուհի են, բայց հայերուն շատ կը սիրեն, կ'ուզեն, որ իրենց զաւակները մեր լեզուն սորվին։ Հիմա, երբ վերադառնամ, պիտի Ծրեզնոյին անոնց յատուկ ձայնատապալէնները լսիմ, որով ամէն ուզող կրնայ միջակը հայերէն սորվիլ, եթէ անգամ քովը լեզու պիտոցը չկայ։

Ի՞նչ հետատես մարդ է եղել Դանիէլ Վարուժանը։ Ընչէ՞ է, նա իր թոռներին տեսնելու բախտը չունեցաւ, բայց նրանց ճակատագիրը կարծես կանխագագաց։ Ու դեռեւս եօթանասուն տարի առաջ աւանդեց։

«...Ո՞վ պիտի կրնայ զբել մեր տոներուն պատմութիւնը. անոնք հրաշքի դամբրու նման ցեղին գոյութիւնը հաստատեցին մապաղաքներու յաւերժական հաստատութեանց վրայ։ Աստուածային «Աճէն սկսեալ, որ ազօթողի մը նման բազուկները վեր կարկուտած դարերու ընթացքին մէջ երկինքը հաստատ բունց հայութեան զլիտուն վրայ, մինչև ինքնամփոփ «Ճ»-ը՝ որ յոյսի քղամիդին փաթթը

դէպի Արշալոյսները գալիք օրերուն...
 «Անհատները կրնան ուժացուիլ, նրժ-
 դեհութեան, պաժուփրսմ մատնուիլ, բայց
 երբ հաստատուն պահուած է սրտերու մէջ
 տոտերուն բեհուը, շեղուին անշիջիխ ճա-
 ուպայթը, կը բաւէ այդ ճառագայթը ի-
 բարու բերելու, իրարու միացնելու հա-
 մար անհատները՝ իբրեւ ժողովուրդ, ժո-
 ղովուրդը՝ իբրեւ ազգ, ազգը՝ իբրեւ հայ-
 կականութիւն»:

Ձրուցելով մենք չզգացինք, թէ ինչ-
 պէս յետ եկանք, նորից կանգ առանք Դա-
 նիէլ Վարուժանի արձանի մօտ:

— Մենք ալ միայն հոս պալերնիս,
 լաւ չէինք դիտեր, թէ ինչ է հայն ու Հա-
 յաստանը, — անպատեւիտէն անկեղծա-
 ցու. Հայկ Վարուժանը, — կը զարմանա-
 յինք, որ ասորի դրացիները մեզի կ'ը-
 սէին՝ երանի ձեզի, որ հայրենիք ունիք,
 հոն ուխտի կ'երթաք, մենք այդ մեծ
 բախտաւորութենէն զրկուած ենք:

— Իսկապէս ալ ուրիշ խորհուրդ ու-
 նի ելիք Հայրենիքը, — արձագանդեց ակ-
 կին Ալիսը, — երբ ես շուրջս կը նայիմ,
 կարծես երազի մէջ ըլլամ: Քիչ առաջ մենք
 Սերաստիա փողոցէն ելանք Մայրթիա
 փողոց մտանք, հիմա նորէն Սերաստիա
 վերադարձանք: Թրամվային վրայ, որ ա-
 հա անցաւ, հայերէն գրուած էր, թէ Մա-

լաթիայէն Ձէյթուն կ'երթայ: Ձարմանա-
 լի է, շատ զարմանալի:

Հայկը չլսեց կնոջ խօսքերը, Դանդաղ
 մօտեցաւ արձանին:

— Վերջին անգամ կը տեսնեմ հօրս,
 — մրմնաց ու զղածիկ՝ ձեռքի ափով լը-
 փեց դէմքը:

Ի՞նչ կարող էի ասել ես: Նրանք մէկ-
 քերկու օրից պնուժ էին օտարութիւն: Ինչ
 ասէի, հնարաւոր է, իսկապէս, որ որդին
 է՛լ չտեսնի հօրը: Այդ պահին ինձ շփու-
 րանց ճիշդ էր թւում Ֆրանսիացի քննա-
 դատ ու հրատարակիչ Փան Բալլարը, որը
 Վարուժանին կոչել էր «Բանաստեղծ-Բը-
 ղիտտոս»: Բայց ոչ, ինչո՞ւ, մենք կանք,
 մենք այստեղ ենք ու նրան մի՛շտ կը տես-
 նենք: Ձէ՞ որ Վարուժանը մի բանաստեղծ
 է, որի վրձինը թէեւ վեհափոփեան թովիչ
 զոյներն ու Փլամանդական «բարբարոս
 իրապաշտութիւնը ստեղծեցին», բայց նա
 որդու հաւատարմութեամբ այն թաթա-
 խեց զմիայն հայրենի հողին որդան կար-
 միբին ու նսկածուկ տրեան մէջ: Հենց
 դրա համար էլ նա այսօր ամենակենդանի
 հայ բանաստեղծներից է: Վարուժանը
 ազրում է մեր մէջ, մեր կողքին մաքու-
 առ:Մ գոլո՞ր նուիրական երազներէ հա-
 մար: Աւ մեզ հետ միասին անվարած դը-
 նում է դէպի այդ երազները...

ԳՐԻԳՈՐ ԶԱԼԿԵԱՆ



Յ. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

Ռ Ո Ւ Բ Է Ն

Ս Ե Ի Ա Կ

ԱՐՁԱԿԱԳԻՐԸ

ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐԲԷՆ ՓՐՅՈՒԱԾ ԷՋԵՐ

Քերթողական արուեստի մէջ ցուցարերած շնորհներու զուգահեռ, Սեւակ արձակի մէջ եւս յայնանգործեց դրական որոշ արժանիք մը:

Արդարեւ, «Արևիկիան մամուլ»ի մէջ, 1907ին, ստորագրած էր արդէն «Տարի մը վերջ» խորագրով պատմուածք մը եւ «հետագային հրատարակած «Ազգակ» շարաթաթերթին մէջ «Ուսանողի նամակներ» խորագրին տակ արձակ գործ մը:

Սակայն, 1913-1914 տարիներուն միայն Սեւակ տիրացաւ լայն ժողովրդականութեան, երբ «Ազատամարտ»ի մէջ սկսաւ լոյս ընծայել «Բժիշկի» գիրքէն փրցուած էջեր» ծանօթ անունով շարք մը պատմուածքներ, որոնց մատուցած նիւթերը կը բերէին նորութիւն մը ժամանակակից պոլտանայ գրականութեան: Իրմէ առաջ ոչ ոք փորձած էր դեղագիտական ճաշակով մը ներկայացնել ախտաբան երևութներու անդրադարձող կենսապաշտ ապրումներ:

Եթէ Զօհրապ Իրաւարանի իր հանգամանքով կրցաւ իրապաշտօրէն պատկերացնել իր զգացական գաշտանկարը՝ Ճէյրաններու, Մարապետներու եւ այլ տիպար հերոսուհիներու գլուս ցաւերուն ընդմէջէն Սեւակ եւս, իր կալուածին մէջ, կրցաւ նոյնքան իրապաշտ սեւեռումով թափանցել մարդկային կեանքի աստաղանջին եւ գալին վիսաբադրել զարմանատուններու մէջ բժշկական իր խնամքին յանձնուած ախտափոխակ պարագաներու ընդմէջէն:

«Բժիշկի» գիրքէն փրցուած էջերուն մաս կազմող պատմուածքները կը ներկայանան «Նտեւեալ խորագրերով»։ «Կէս խնձր»։ «Մանչերում գերեզմանը»։ «Տէր պորմեա»։ «Գիմալին աղիկը»։ «Կառնկը»։ «Փոխան հար-

digitised by A.R.A.R.@

սանիֆի», «Հրաշալի բժշկութիւն», «Անուոր տարակոյտ», «Անթուած գանձը», «Ատամաբոն գանք», «Տաւի միտք», «Մեղանկու իրաւունք», «Տէլիփիւսի Քրիստոս», «Մեղիքի պտուղ», «Զմեռնելու ետմար», «Այլասերութիւն», «Աղբիւրի կամփր», «Վեցերորդ գայլաբանէն», «Մեռնի մը ետմար», «Մարա մարդը», «Հարսնելու գաղտնիք», «Նախդեմի մտեր», «Մարեմիք», «Տոքթ. Գոգոգ» եւ այլ գրութիւններ:

Վերջինիւ գործերով, Սեւակ կը շողագործէ բժշկագիտական աւելանքներով հարուստ հիմնովին նոր իրականութիւն մը, յայտնաբերելով ինքզինք ժամանակակից իր ասպարէզին հմուտ եւ հանրածուէր առաջնութեան կուտած իրքեւ հասարակութիւնը, որ դիտել ձեռնհասօրէն կատարել տխրահեղ յանձնարարական գործունէութիւնը ցուցին վիճակին: Աւելին. տխրահեղ յանձնարարական գործունէութիւնը հասարակ ձեւեւ այն նշանաբաններ, թէ ժողովրդի գահերն են երկրաւորական շրջանին իրենց գործունէութիւնը մէկ արտաքին կամ ներքինը կողմէ գործունէութեան անդամակերպ օրհաներու:

Այս արեւելութեամբ, յատկանշական է ՎԿԵ ԽԵՆՔԻՆՆԵՐԻ արտաբերութեամբ յայտնաբերուած պոլիտակայ թարեկեցիկ ընտանիքի մը գուկին խելագարութեան պարտազան, որ ծնողքին կարգադրութեամբ, հոգեպէս կարգադրուելու նպատակով կու գայ Մոնթէ Քարլո, իրենց խելագարութեան մէջ: Ծնողքին գրաւոր խելագարութեան վրայ, Սեւակ Լոգանէն շարեւորութեամբ Մոնթէ Քարլո կ'երթայ, ուր հանգամանօրէն կը զննէ յիշեալ երկրաւորական գործունէութեան ներքին իրականութիւնը: Կը զննէ արտաբերութեան ընտրուած կարգ մը տխրահեղ յանձնարարական հիման վրայ, կը վերադառնա նոր խելագարութեան պատճառը եւ ըրտապարզ տարիքին սիֆիլիսի վարակուած ըլլալուն անհուն ախտաբանութիւնը: Թէ նման հիւանդներ կ'ընդհանրուին, որոնք յայտնաբերուած իր ընտանիքի փոխանակուած մէկ է. միշտն որ ոճիք մը չգործեն՝ չեն նմանիք յիշարանոց:

Սեւակ կը կատարէ այն յատկանշական նախադասութիւնը, թէ նման տխրահեղ արտաբերութեան ուղի կանուխ կը գիտնան անհասկանալիութեան:

Այս իրաւամբ, խելագար երկրաւորական, տակն մը կազմուած վերադարձին, վերջ կու տայ անհասկանալի իր վիճակին, ջրհոր նետելով ինքզինք, որ զարացնելով իր մասին Սեւակի կողմէ կատարուած կանխազգուշացումները:

Ողբերգական այլ կացութիւն մը կը պարզուի նաեւ «Տէր պարմառ պատմութեամբ», ուր Սեւակ կը ներկայացնէ կովկասական մը, որ երեք քաղաքներով Լոգան կու գայ, անոնց խելագարութեան տառաջը առնելու աստուածային յայտով: Պատկանելի երկրորդ լիակցի հայ մը, որ արեւելի տառաջ, շահական արարքով մը թուանորոշուած է իր արիւնքը եւ, հետագային, ամուսնանալէ ետք, իր ախար փոխանցած է կնոջը, որ երեք հոգեհատարներու ծնունդ տալէ ետք, մեռած է դեռատի հասակին:

Սեւակ իրապաշտ պատկերացումով կը կատարէ տխրահեղ յանձնարարական երեք որբերուն խաթարուած լսողութեան, որ հետեւեալ է իրենց հօր երկրաւորական արարքին ստացած ժողովրդական անդամակերպ հիւանդութեան:

Թելագրելէ ետք կովկասական, որ հայրենիք վերադառնայ եւ իր երեք որբերուն աստղական հարցով ալ չմտնարիչ նիւթական անգուստ նախաձեռնութեանց՝ Սեւակ կ'երթափակէ այն պատմութեամբ, որ իրաւի երեկոյց մը, այդ վշտահար ընտանիքին իր կատարած այցելութեամբ, երբ ծայր աստիճան յուսահատութեան մասնուած լիակցի հայը, ապուխտելով Աստուածային փրկարար գորութեան՝ կը թելագրէ զուսակներուն, որ երգեն Տէր պարմառ:

Այս խելագար արարքով մը կը կենդանացնէ այն գահը, երբ երեք հայ որբուկներ թախանձանքով աստղութիւն կը հայցեն Աստուածէ:

«Այս ի՞նչ երգ, այս ի՞նչ երգ, Աստուած: Ու քանի՞ տարի է չէի լսեր այս բարի ու ահաւոր մեղեդիք», *կր գրէ Սեւակ ու կը յարէ*. «Վերէն ի վար սարսուտ մը անցու վրայէս, մարմինս փուշ-փուշ եղաւ: Ի՞նչ տարօրինակ համագուստով կ'երգէիք այդ բբջայտս բերանները: Բայց այս բարի, այս ազաչաւար, այս գայարուն, այս ահաւոր երգը մե՛ր երգն էր, «Կառուկնիմ պէս, ցեղի՛նն ու եռլի՛նն երգը, գերագո՛յն տառապանքին ու գերագո՛յն յոյսին երգը» (30):

Եւ խորհրդածելով ի տես այս երեւոյթին, ամէնէն ահաւորը, կը գրէ Սեւակ, կովկասահայուն անկէջ տառապանքն է, որ զիշերային լուսեթեան մէջ, յուշիկ-յուշիկ քնացող իր սրբերուն քով, «Իր խղճին վրայ պիտի հսկէ» մինչեւ այգարաց, սպրելով զըջու՛մը իր գործած անդարձանելի արարքին...

Սեւակ կը ծանրանայ նաեւ գինեմոլութեան գործած աւերներուն վըրայ, որոնց անմիջական մէկ անդրադարձն է «Տէլիբիում Թրէմէնս» պատմըւածքով պարզուած հոգեկան տառապանքը այն զինսօգին, որ զիշեր մը խոհանոցին մէջ ինքզինք կացինահարած պահուն, իր արձակած ահաւոր աղաղակներով անեցիններու ուշադրութիւնը կը գրաւէ, որոնք իսկոյն կը ձերբազարկեն զինք եւ կը փոխադրեն հիւանդանոց:

Սեւակ յիշեալ պարագան կը վերագրէ «Տէլիբիում Թրէմէնս» անունով հիւանդութեան, որ կը յառաջանայ, երբ ալքուր իր շափազանցուած գործածութեամբ կը ներգործէ շարապէտ ազդեցութիւն ո՛ւր միայն մարմնական զգաստութիւն, այլեւ՝ մարդու հոգեկան աշխարհին վրայ: Ըստ իրեն, սոյն հիւանդութենէն վարակուած իւրաքանչիւր գինով կ'ապրի անբնական այնպիսի պահեր, երբ հոգեպէս կը փոթորկի եւ կ'ընդլզի իր իսկ անձին դէմ: Երաց աչքով մղձաւացի մըն է այս, որ ոչ թէ գիշեր մը կը տեսէ, այլ շարքաք մը կը յաւերժանայ, կը գրէ Սեւակ ու կը յարէ. «Ու տառապանքն այնքան մեծ է, ու հիւանդն այնպէս համազուած է իր մղձաւացիին իրականութեամբ, որ նախամեծար կը համարի անմիջապէս մահամալ: Եստ մը անբացատրելի կարծուած անճանապատուութիւններ՝ ուրիշ պատճառ մը չունին բժշկներուն համար»(31):

Արդարեւ, մէջբերուած տողերով Ռ. Սեւակ կը հաստատէ, թէ նման հիւանդներ հազիւ դարձանուած եւ հեռացած հիւանդանոցէն՝ դարձեալ կը խոճեն եւ դարձեալ կը մտանուին մղձաւացիին նոյն աշխիտումներուն, Հակասակ զայն հապէս հոգեփոխուած տեսնելու իր բուռն բաղձանքին՝ Ռ. Սեւակ խորապէս կը ցաւի, թէ յիշեալ գինովը նոյն գիշերն իսկ, հոգեկան տաղանապախի մէկ պահուն, վերջ տուած է իր կեանքին, զառնալով զո՛րք իր հոգեկան անբացատրելի տառապանքին:

«Իննովին աղջիկը» պատմուածքով, Ռ. Սեւակ կը քողազերծէ գինեմոլութեան պատճառած մէկ այլ ողբերգութիւնը, նկարագրելով լուսնոտ աղջիկ մը, որ ջղային մէկ նուախի պահուն, կրակի վրայ ինչաչով՝ մահամեծի միտակի մէջ կը փոխադրուի հիւանդանոց: Տասնօթամեայ գեղեցիկ, կտակատաշեայ, այլ զժրախտ այդ աղջկան սերագործը իր հա՛յրն է, գինով Սիմոնը, որ օրն ի բուն գինովնալով՝ «լուսնոտներու, այստեղաներու, պապատարներու, նգովուաններու սերունդ մը կը հասցնէր...»: Ռ. Սեւակ մերթ կը կարեկցի հօրը ախտածէտ մոլութեան զո՛հը դարձած այդ դեռատի աղ-

(30) Ռուբէն Սեւակ, (Ռ. Չիլիմիլիտան), *Եթէ չէիք զերբն փրցուած էջեր եւ զերթուաններ», Փարիզ, 1946, էջ 37:*

(31) Ռուբէն Սեւակ, (Ռ. Չիլիմիլիտան), *Եթէ չէիք զերբն փրցուած էջեր եւ զերթուաններ», Փարիզ, 1946, էջ 102-108:*

ըրկան եւ մերթ ընդունելով հանդերձ, թէ ամէն գինով լուսնոս զուակներու ծնունդ չի տար, այսուհանդերձ, լուսորձակի տակ աննկով վերոյնշեալ պատահարը իր ամբողջ եղերականութեամբ, կը պարսակ բոլոր գինովները։

«Բժիշկին գիրքէն փրցուած էշերուն կարգ մը բաժիններով՝ Թ. Սեւակ կը ներբողէ բարոյական օկղորունքներ եւ կը ներկայանայ իբրեւ շփոթակիրը Արդարութեան։

Ան կը հաւատայ, թէ ապօրէն եւ բռնի միջոցներով մեծագուծար պանծնք կուտակած անհատը կ'ենթարկուի տեպալման ժամանակի ահեղ դատատանին եւ կը կրէ իր արարքին հետեւանքները։

Այս երեւոյթը կը պարզուի «Անիծուած զանձը պատժուածքով, ուր Սեւակ կը նկարագրէ թոքախտաւոր մանկամարդուն մը, որ, իր ախտին զարժան մը զսնեթու յոյսով՝ ափ կ'առնէ մինչեւ հետաւոր մէկ զիւրը Ալզեաններու, ընկերակցութեամբ իր ամուսնին եւ հօրը։

Թ. Սեւակ, հիւժախտաւոր այդ կնոջ՝ Արմինէին դժբախտութիւնը կը վերագրէ այն իրողութեան, թէ անոր ծերունի հայրը, երկար տարիներէ ի վեր, Պոլսէն մինչեւ Ամերիկաներ երթալով, խարէութեամբ զիգած էր անհամար ոսկիներ։ «Այս զանձին մէջ, — կ'ըսէ Սեւակ, — իրենց անձեքը չէի՞ն մետած ահո՞նք որ արիւն ու արցունք կալ լային։ Այդ սուկ-գործերում լեռը, որով ծերունին իր նիւանդ աղջիկը ծածկած էր՝ քանի՞ քարտրու գլուխէն, քանի՞ այրիներու ձեռքէն խլուած էր...»(32)։

Չուակներուն ապագային արեւութեամբ հակառակ իր սնուցած յուսադրիչ նախատեսութիւններուն՝ ծերունին չէր կրցած արդիւնաւէտ իրադրո՞ւմի մը վերածել այդ անիծեալ զանձը, որ տարուէ տարի մտածած էր զինք հանրուանային ոգրերգական կացութիւններու։ Մնաց որ, իր վեց զուակները չէին կրցած օգտագործել այդ անիծեալ ոսկիները, այլ ապրելով շուսայ կ'ըսէր մը՝ հիւանդացած եւ զիրար վարակելով մեռած էին՝ մէկը միւսին հետեւէն։ Հետագային, իրենց մայրն այլ ենթարկուած էր նոյն ճակատագրին։

Իսկ Արմինէն, այդ անիծեալ զանձին միակ ժառանգորդուհին, իր հիւժախտաւոր գոյութեամբ կը մղէր արդէն անհաւասար պայքար մը մահուան դէմ, մինչ իր ամուսինը, այդ զանձին իբրեւ իրաւական ժառանգորդը, օր առաջ իր կնոջ մահը կը բաղձար տեսնել...

Եղբարիակելով՝ Թ. Սեւակ կը յայտնէ, թէ անիծեալ զանձին ժառանգութեան գծով ստեղծուած լուս պայքարը պիտի շարունակուէր այլ ագիբու վրայ եւ որուն վերջնական ճակատագիրը պիտի տնօրինուէր Արմինէին մահէն ետք, ամուսնոյն եւ ծերունի հօրը միջեւ ծայր առան անխուսափելի բախումով...

Բարոյագիտական նոյն արաջարքանքին ձգտող արտագին այլ երեւոյթ մը կը պարզուի «Մարա մարգը» պատժուածքով, ուր Թ. Սեւակ կը ներկայացնէ Լոզանի «Լա փէ» դարեջրատան մէջ, պատահարաբար իր ուշադրութիւնը պրտւած երիտասարդ մը, որ ժամեր դիտելէ հտէ իր ապագրած զուաթ մը պարեջրուրը՝ կը մեկնի խորհրդաւոր լուսութեամբ, առանց նոյնիսկ ուժով մը առնելու անկէ։

Երիտասարդին այս անքնական ընթացքը կը ստեղծէ խոր շահագրգռութիւն արձակագիրին մօտ, որ օր մը, պատեհ առիթով մը կը ծանօթանայ եւ կը դառնայ իրազեկ անոր հիւանդութեան։

(32) Թուրք Սեւակ, (Թ. Զիլիսիլիմսի), «Բժիշկին գիրքէն փրցուած էշեր եւ շփոթակիրներ», Փարիզ, 1940 թ.։

Այսպէս, կը յայտնուի, թէ պոլսական այդ Հարուստ երիտասարդը, վաղ աստիճանի, տառապած է ազգային խանդարումէ եւ Պոլսոյ բժիշկները, շահագործական նկատումներէ թելադրուած՝ զայն փոխանակ ենթարկելու խղճամբոս եւ գործնական դարձանումի՝ Հակասական գեղազիւներով բարդացուցած են անոր Հիւանդութիւնը եւ, մանաւանդ՝ շափազանցուած ծոմապահութեամբ նուազազոյնի իլեցուցած անոր սննդանիւթերուն քանակը, որով տարիներու ընթացքին, ստամոքսին Հետ հետզհետէ մաշեր եւ քարակցեք են աղիքները: Եւ Հիմա, երեսունհինգամեայ այդ երիտասարդը, զրկուած ընտանի մարդոց պէս ուսեցու եւ խմելու տարրական Հանոյքէն՝ կ'ապրէր տնտանեղէ վիճակ մը:

Հիւանդ երիտասարդը վերջապէս Համոզուելէ ետք, թէ անհնար է դունել դարձան մը իր ցաւին եւ զգալով, որ իր առողջութիւնը տակաւ կը խոնդարուէր, մանաւանդ՝ որ օրըստօրէ յայտնուող կարմիր փորճարութիւնը ժտարուստ մահուան մը նախանշանը զոյց կու տար, Հակասակ բժիշկի թելադրանքին՝ ճարահատ սրտով կը ձեռնարկէ տուն դարձի երկար ճամբորդութեան:

Ռուբէն Սեւակ, տառապակոծ այս տղուն պարագային եւս, տեսնելով արդարութեան նախախնամական վէճիւր՝ կը գրէ.

«Ի՞նչ ճակատագիր այս տղուն ճակատագիրը...»:

«Իր հայրը ամբողջ կեանքով աշխատել, ալէն ու ձախէն փրցուցեր, ազատներու ակռայէն եւ բանուորներու ձեռքէն խլեր էր, դիզեր օւ դիզեր, արդէսգի օր մը իր տղան ու իր տղուն տղաքները տունց աշխատելու հա՛ց ունենան տաք, յիսուն, հարիւր տարի...»:

«Եւ սակայն — դուք ի՞նչ կ'ուզէք ըսէք, ես կը հաւատամ գերագոյն արդարութեամ մը — իր տղուն տղաքները երբեք պիտի չծնէին, ու իր տղան պիտի մեռնէր անօրի...» (33):

Եւ իրապէս, տարաբախտ այդ երիտասարդը պիտի մեռնէր շոգնակի մը ճեմէրին մէջ զեռ Հայրենիք չհասած եւ նաւաստիներ ծով պիտի նետէին մշտնջենապէս այդ ծարաւ մարդը, ժանտախտի առհասարակ արեւէ վտանգ կանխարգիլելու մասնագութեամբ:

«Թիշկիմ գիրքէն փրցուած էջերով՝ Ռ. Սեւակ կը ներկայանայ նաեւ մասնագիտական իր աշխատանքին Հմուտ իրքեւ Հողերան բժիշկ եւ այս Հանդամներով, ան կը գրուտա՛ն այն մտածումը, որ Հիւանդի մը բուժման պարզան արտաւերջար կախում ունի անոր հոգեկան արամադրութիւնէն եւ ասպելու կաւէքէն: «Վա՛յ մարմնի բժիշկիմ որ հոգիէն չի հասկնար, — կ'որո՛ն ան, — ի՞նչ հոգեկան ցաւեր կան, որ հիւանդին ցաւերը կը բիրտապատկան, կը բաւաւարեմ, մահացու կը դարձնեն, այլեւ կը բացատրե՛մ այդ ցաւերը»(34): Այս աբընյութեամբ, «Անիծուած զանձր»ին Հիւանդասաւոր Հերոսուհին՝ Արմինէն, ակնատես ըլլալէ ետք իրենց տան թոքախտաւոր անդամներուն տակաւ մահացումին եւ Հակասակ իր առողջական վիճակին գծով բժիշկին Հաւատարմացուցած յուսադրիչ խօսքերուն՝ կը Հաւատար իր մօտաշուստ մահուան անխուսափելիութեան:

Ահա թէ ինչու Ռ. Սեւակ կը խորացնէ այն Համոզումը, թէ բժիշկե-

(33) Ռուբէն Սեւակ, (Ռ. Զիլիկիթեան), «Թիշկիմ գիրքէն փրցուած էջեր եւ զերթուածներ», Փարիզ, 1946, էջ 157:

(34) Ռուբէն Սեւակ, (Ռ. Զիլիկիթեան), «Թիշկիմ գիրքէն փրցուած էջեր եւ զերթուածներ», Փարիզ, 1946, էջ 157:

բուհի մասկան առաջնությունը կը կայանայ իրենց հիւանդներուն բարոյական կորով ներշնչելու տարրական կենսափորձին մէջ:

Քէ ի՛նչ բարեբար եւ հրաշագորգեր կրնայ խաղալ հաւատքի ներշնչուածը՝ դրազէտ բժիշկը կը վկայակոչէ «Ազատամարտ»ի մէջ լոյս տեսած «Ազարիլը յաղթել է» խորագրով եւ հոգեկան առողջ մթնոլորտ ստեղծող իր յոգւածը եւ անոր բերած գրական անդրադարձը դուրեցիբական դարձանատան մը մէջ թողախոտ տառապող հայագէթ կնոջ մը ընդհանուր տրամագրութեան վրայ, որով այս վերջինը կարգալէ հոգ վերոյիշեալ գրութիւնը, հոգեփոխուած զգալով ինքզինք՝ կը գրէ բժիշկին.

«Հիւանդի բնական յուսահատութեամբ, անկողնիս մէջ պառկած կը սպասէի ես ալ չեմ գիտեր թէ ինչա՛ն... Մահուա՛ն՝ որ չէր գար, կեանքի՛ն՝ որ կ'աշխարհայ զիս վերականգնելու: Երկար ամիսներու հիւանդութիւնը արդէն մաշել, հայեցուցեր էր կորստիս ու համբարութեանս մեծ մասը, ու մնացած էի չովը դեռ կը տանջուէի:

«Անս՛ կը ստանամ «Ազատամարտ»ը: Մեծ ուրախութեամբ կը կորդում հայերէն բերքերը. հայ գիրը տեսնելով կարծես կարօտը կ'առնեմ հայրենիքիս:

«Ազարիլը յաղթել է»- շտկուեցայ անկողնիս մէջ- սկսայ կարգալ յօրւածը, եւ մինչեւ վերջացնելու բոլորովին առողջ կը գգայի զիս: Ա՛յ կարծիքս տակ հիւանդ թո՛ք մը չի կար, երակներուս մէջ թարմ արիւն կը հասէր. յաջորդ օրն իսկ ելայ անկողնէս:

«Եթէ բժիշկները յաճախ գիտնան հիւանդին հոգիք բուժել՝ երեւի անիլ շատ պիտի յաջողին մահուան ճամկերէն ազատել մարմինը:

«Ուրեմն ձեր յօդուածը միշտ լինան վայրկեաններուս կարգացի եւ ամէն անգամ նորագուտ ռոժերով սկսայ կռուիլ նիւանդութեանս դէմ:

«Կոս՛նէկը»... Բնծի համար ալ պիտի երգէ՛ք այդ կռուակը...: Բայց չէ՛. ես պիտի լաւանամ...»(35):

Արդարեւ, ըստ Ռ. Սեւակի, ո՛չ միայն ճարպիկ եւ սովորի բաղադրութեամբ կազմուած, այլեւ խոհական եւ զգայական զգայարաններով օժտուած կրտսարեալ եւ ամբողջական էակն է մարդը, որուն հոգեկան կամ բարոյական տազնասպիւրը առաւել խոր են եւ գերակշիռ, քան անոր մարմնական ցանկերը: Մարդ անհատը խորհրդապատկերն ըլլալով աստուածային բարեմասնութիւններով բնորոշ արեւն եւ վսեմ զգացումներու՝ կը կրէ գործը Աստուծոյ:

Հետեւաբար, ըստ Ռ. Սեւակի, բժիշկները պէտք չէ անտեսեն մարդու ֆիզիքական ատորգելիներուն հետ շղկակուած հոգեկան այն միւս բնագաւառը, որ կը բերէ բախտորո՛շ ներգործութիւն անոր կենցաղական ընդհանուր նկարագրին վրայ:

Ըստ Ռ. Սեւակի, հաւատքը հիմնական առանձնատուրութիւնն է մարդու բարոյական գիտակցութեան, որուն շնորհիւ անբուժելի նկատուած բազում հիւանդներ եւ հաշմանդամներ ուխտատեղի մը երթալով կը մաքրալըրւեն իրենց մարմնական ախտերէն: Եւ սակայն համոզում կը յայտնէ նաեւ, թէ հիւանդներ, փոխանակ խաչափայտի մը, սրբապատկերի մը կամ սուրբի մը շիրիմին վրայ հաստատելու իրենց հաւատքը՝ կթէ կրքէ զայն խարսխելին դիտութեան վրայ՝ այլազան ախտերէ բժշկուողներու թիւը աննախընթաց համեմատութիւն մը պիտի արձանագրէր:

(35) Բուրձ Սեւակ, (Ռ. Զիլիկիրեան), «Բժիշկն զերէն փրկուած էջը եւ թերութեանը», Փարիզ, էջ 95-97:

Միևս կողմէ՝ բժիշկներու ուղղուած իր պատուէրով, Ռ. Սևակ կը փոխանցէ այն մասնումը, թէ Հիմնականը հիանդներուն փրկութիւնն է, զոր իրազործելու համար հարկ է դիմել հնարաւոր ամէն միջոցի :

Ըստ իրեն՝ աստիճանափակ ու այլամերժ բժշկութիւն մը գիտակից անբազործութիւն մըն է(36) : Հետեւաբար, հարկ է դիմել զիանալ զեղն ու Նշդրակը, կիկտրականութիւնն ու մագնիսականութիւնը, զիտութիւնն ու հաւատաբը նոյն փրկարար նպատակին ծառայեցնելու արուեստը : Այս դժով, կարելի է զիտական ըմբռնումներու կարգին զասել նաև հրաշքը, որքան ալ հերքուի անոր գոյութիւնը զիտականներու կողմէ :

Ըստ իրեն, գերբնական նկատուած ամէն հրաշք բնական երեւոյթ մըն է պարզապէս եւ ի՞նչ հրաշագործութեան օրէնքները ցարդ յեն ուսումնասիրուած դիտումներու կողմէ, հրաշքի ըմբռնումը, սակայն, կը գիտակցուի այն պարզ սկզբունքով, որ ինչպէս ձանձրոյթի գաղափարը մեզ կը մղէ յորանջելու, նոյնպէս եւ բժշկութեան գաղափարը՝ բուժուելու : Այս իմաստով, այն հիւանդները, որ առողջանալու բացարձակ համոզում մը կը գոյացնեն իրենց մէջ՝ անսո՛ք միայն կ'ազատագրուին մահուան տիրակալութենէն :

Աւելի՛ն. հոգիի եւ մարմնի յարակցութիւնը այնքան զօրեղ է, որ հոգեկան յուզում մը կրնայ անղամալուծել մարմինը, եւ թէ՛ նոյնքան ուժգնութեամբ ալ յուզում մը կրնայ բժշկել այդ կազմալուծ վիճակը :

Իոչոր դեղագործները եւ բժիշկէ բժիշկ անվերջ թափառումները կը պատճառեն ժամանակի լոկ յաւելեալ կորուստ, մինչ հիւանդը զեղերէն աւելի՛ կարիք ունի յոյս եւ կորով ներշնչող վարակիչ խօսքերու : Այլ բարեբրով՝ Հիմնականը այն է, կ'ըսէ Ռ. Սևակ, որ «Ամէն քան իսխում անի» բժշկութեան գաղափարը հիւանդին մէջ ցերեւեցելու արուեստն է(37) :

Արդարեւ, անդրադառնալէ ետք Ֆիդիբեական հիւանդութեան վրայ հոգեկանին ընձեռած բուժիչ ներգործութեան՝ Սևակ կը ներբողէ նաև ապրելու կամքը, իրրեւ բարերար մէկ գրեւորումը ներքին այն արութեան, որ կը մղէ հիւանդը կենսագործ նախաձեռնութիւններու :

Այսպէս, ապրելու կամքով ըմբռնուած սոյն երեւոյթը, իր լայն արուստով, իրազործուած կը դունենք Ռ. Սևակի նկարագրած թոքախտաւոր երիտասարդ բանաստեղծին՝ Ատոմ Եարնանեանի անձին մէջ, որ, 1904ի մմբան, ցաւազեօրէն կը տատայի Լէյզնի բուժարանի հականեխուած պատերազմ միջեւ :

Ռուբէն Սևակ ակնատես բժիշկի իր հանդամանքով, կ'ոգեկողէ այն պահը, երբ տարագիր ու հիւանդ բանաստեղծը մահուան սնարին մէջ, կը յառէ իր մշուշոտ հայեացքը ծննդավայրի օճախին, յիշելով այնտեղ ծերունի ծնողքն ու դեռափթիթ քոյրերը :

Մերթ կարտով կը նայի Հետուն, դէպի հայրենական բարձրալանջերը, կարծես ականջ տալով Եփրատի ահեղամիջ ջրերուն... :

Սև մերթ կը սարսոսայ՝ մտածելով համիտեան արքայաներուն ենթակայ հայ ժողովուրդի զժրպխտ ճակատագրին մասին :

Ռուբէն Սևակ կը վերակողէ տալնապալի այն պահերը, երբ մահամերձ այդ բանաստեղծը, սաստիկ ջերմութենէ մը բռնուած՝ կը զատանցէ

(36) Ռուբէն Սևակ, (Ռ. Ձիլիկիւրեան), «Բժիշկին զերթն փրկուած էջեր եւ քերթուաներ», Փարիզ, 1948, էջ 88 :

(37) Ռուբէն Սևակ, (Ռ. Ձիլիկիւրեան), «Բժիշկին զերթն փրկուած էջեր եւ քերթուաներ», Փարիզ, 1948, էջ 85 :

յանգաւոր զգացումներ, որոնք կը վերաբերին հայ ազգի ստոապանքին եւ հայոց հողի սիրաւ տրորոյ արեան հեղեղումներուն...

Եւ կը պատկերացնէ, թէ ինչ ահաւոր պայմաններու տակ, հայոց ստոապանքին տննչաւար այդ երգիչը կը յղանայ «Յիշատակ» քերթուածով ներտոնայ հիմնական բաժինները քերթողաշունչ այն երկին, որ հետագային ըստ տեսաւ Վեգիլիարքի նւ յոյսի րաներ» խորագրին տակ:

Ռուբէն Սեւակ կը շնորհակալ իր յորդուածները, որ շնորհել ապրելու իր կամքին՝ «Ինչպե՞ս զնորհակալութեան հեղինակը պիտի շնորհէր, այլ՝ պայքարէր մահուան դէմ:

Եւ կողմանի հետաւոր տախտիկն անձնօթ զնորհակալ մը կողմէ առաջաւած ծաղկեփունջը ո՛չ միայն պիտի յատկացնէր իր մէջ նորայայտ սերոյ մը զգոյնութիւնը, այլեւ՝ արշալուստային ճոտագայթներով ցողաւած այդ ծաղկեփունջին թելադրականութեամբ՝ հողեպէտ պիտի փոխազրուէր Կովկաս, զար զարաւտը ու այնտեղ գեղունի մը կը յոշտելին, Մայր Հայաստանը...»:

Եւ դեռ՝ անշնչ վճռակամութեամբ մը արհամարհելով հողեպէտային իր բոլոր ցաւերը, սաղմաշունչ յարութեամբ տն պիտի սուտունէր Ալպեաններու զաւաթէն մինչեւ Արարատի ստորտը, երկնելու համար կոթողական իր փառքը լատտակերտող հայրենաշունչ քերթուածներէն՝ «Ձա՛րկ, կովկաս...»:

«Բն կամբի տարօրինակ օւժով մը՝ բծիկներու պատուէրին անսպառ համար՝ այդ ջրաւու ու անհանդարտ երիտասարդը, — կըզրէ Ռ. Սեւակ, — ամբողջ երկու տարի, ամէ՛ն օր, ամէ՛ն ցերեկէ վերջ, երկար երկար ժամերով, բաց օդին մէջ փոնց, անշարժացոյց, բարացուց իր վտիտ մարմնը, արիւտն տակ անմահութեան համար հասունցող մտանայի մը պէտ...»(38):

Եւ, վերջապէս, շնորհել իր բարոյական կորովին, կէյտէնի հիւնարտաւոր բանաստեղծը, Աստմ Եարճանեան, ապրեցաւ եւ զործեց տասնամեակ մը եւս, նորաշունչ երկերով հարստացնելով Արեւմտահայ զեղպալաւու զրտականութիւնը...

Ռուբէն Սեւակ, «Ապրիլու կամբը» խորագրով այլ զրտութեամբ, հիւտանդութեան դէմ հաւատքով մաքտուելու բարոյական վերոյիշեալ սկզբունքը ստուակ եւս բացայայտելու դիտաւորութեամբ՝ կը դիմէ Փրանսական մշակութի մատուցելուն մէկը հանդիսացող Վոլթերի յատկանշական տիպարին, որ որդեգրելով մտային առողջ դիտակցութիւն՝ ո՛չ միայն բոլորած է երկարատեւ կեանք մը, այլեւ կըցած է իր ապրած դարը կոշիչ տայ Վոլթերի դար...»:

Այս կապակցութեամբ, մտնրամասնորէն կատարելէ հոք թուարկումը այն րազմաթիւ հիւտանդութիւններուն, որոնց հանպազօրեայ յանդիտնքը մղձաւանջի մը վերածած են Վոլթերի կեանքը, Ռ. Սեւակ կը զրէ, թէ Փրանսացի իմաստասէր-զրադէտը զրաւթխախտութեամբ կը հայէր կեանքին եւ, մահուանդ՝ խանդավառ եւ կենսունակ կը պահէր իր սիրտը: Թէ՛ միայն ստամոքսի՝ հիւտանդութիւնն էր, որ ո՛չ միայն մարմնապէս, այլեւ հողեպէտ կը տանջէր զայն: Այլապէս, եթէ ինտյուէր իրեն միայն այդ հիւտանդութիւնը, ան պիտի դատարար առաւել վտեմ եւ լաւատես Վոլթեր մը:

Ըստ Ռ. Սեւակի, Փրանսացի զրադէտին երկարակեցութեան զաղտնիքը կը վերագրուի բարոյական այն կարգ մը աղլաններուն, որոնց շնորհելուան կըցաւ կանգնիլ կեանքի պատանջին վրայ:

(38) Ռուբէն Սեւակ, (Ռ. Ձիլիկիրեան), «Երկերն զերգն» փրոտած էջեր եւ զերթուածներ, Փարիզ, 1940, էջ 122:

Այսպէս, ան Հաւատաց, թէ առողջ մնալու նախապայմանն է չափաւոր ըլլալ: Այս պատճառաւ, մինչեւ խոր ձերութիւնն հետու մնաց որկրամտութենէ եւ քաջքայիչ այլ ժողովիւններէ, ծայր աստիճան հոգ տարաւ մաքրութեան, վերածելով լողանքը մինչեւ խկ ծխական վայելքի, Փիղիքական հիւանդութիւնները մոռնալու համար, օրական աստուծոթէն մինչեւ քօսն ժամ նուիրուեցու մտաւորական աշխատանքի եւ գրեց եօթանասուն հատոր գիրք: Գիտցաւ մանաւանդ հակակշռել իմացական իր յոգնութիւնը՝ մարմնակիրթական կարգ մը առօրեայ գրողութեանը, ինչպէս՝ պարտիզպանութիւն, այդեզործութիւն եւ ծաղկամշակութիւն:

Այսպէսով՝ Վոյթէր այն տիպար անձն է, որ իր կեանքով կը փոխանցէ փորձառական ա՛յն ճշմարտութիւնը, որ մարդ ցաւի ղէժ արհամարհական իր կեցուածքով կրնայ գոյատեւել եւ բերել համապատասխան նպաստ մը՝ համամարդկային ժշակոյթի պատմութեան:

Թուրէն Մեւակ, չափաւորութեան, մաքրութեան եւ աշխատութեան էրբեակ ըմբռնումներով պայմանաւորելով ձերունագրող գրադէտին երկարակեցութեան գաղտնիքը՝ կը գրէ.

«Այդ եռասնամիւս վրայ կանգնած էր Վոյթէր իր վտիտ հասակին ամբողջ բարձրաքիւնովը: Բայց իր յեմարանը չափազանց անկայուն ըլլալուն՝ վայրկեանէ վայրկեան շիջելու համար մէջքին փաթաժ էր պարանոցներէն է՛ն անուրբ, Ապրիլու կամքը...»:

«Այո՛, ո՛վ որ կեանքին հաւատքն ունի՝ երկնէն բաժնուիլի չուամ մ՛ուսնի: Ո՛վ որ Յաղթութեան յոյսն ու երջանկութեան սէրն ունի՝ ան իր ուսերուն վրայ երկու թուեր ունի, ան հոգին չի վախճար...» (39):

Ջատագործը ըլլալով հանդերձ ապրելու կամքով կենսագործուած երկարակեցութեան ձգտումին՝ Թ. Մեւակ կը գիտակցի նաեւ այն միւս ճշմարտութեան, որ գոյութիւն ունին ժառանգական կամ ընդոժին որոշ ախտեր, զորս կարելի չէ յաղթահարել միայն հաւատքով: Թէ՛ մարդիկ կամոյժին գործած իրենց մեղաւոր արարքներուն պատասխանատուութիւնը կրելով հանդերձ, զո՛ւն են միթաժանակ այն տխուր պատահականութեան, որ կարգ մը պարագաներու, կը վերադրուի ճակատագրի քմահաճ տնօրինութեան: Թէ՛ այն իմաստով, որքան ալ բուռն ըլլայ ապրելու իր ցանկութիւնը՝ մահուան սաղմը կրող անձը անխուսափելիորէն պիտի գատապարտուի դամբանին:

Եթէ ապրելու կամքը հրաշափառ խորհուրդի մը կրցաւ յանդիլ Աստծ ճարճանձակի եւ Վոյթէրի կենցաղական վերոյշնալ օրինակներով, ապրելու նոյն ցանկութիւնը, հակոտնեայ իրողութեամբ մը, սակայն, անդրազարժուած կը գտնենք Թ. Մեւակի «Մեռելի մը նամակը» խորագրով պատմուածքին մէջ, ուր դեռատի հայուհի մը, գրադէտին ուղղուած նամակով մը կը պարզէ իր կեանքին տխուր օղբականը, յայտնելով, թէ ինչպէս ծնողքին պարտազրանքով կ'ամուսնանայ եղիպտական հարուստ եւ ազէտ ազգականին հետ, հոկոսակ թփռելի մը կողմէ իրեն զազանարար թելադրուած այն խիտ յանձնարարութեան, թէ ամուսնանալու պարագային պիտի թողախտաւորուի...:

Մանկամարդուհին կը յայտնէ նաեւ, թէ երկու վիժած զաւակներու ծնունդ տուէ հոգ կը վարակուի թողախտէ եւ կը փոխադրուի գուեցեքառ կան բուժարան մը:

Եւ, վերջապէս, նամակի աւարտին, ապրելու իր անզուսպ փափաքը կ'արտայայտէ անամոք ցաւով եւ խոր հիասթափութեամբ:

(39) Թուրէն Մեւակ, (Թ. Արիմիլիքեան), «Երեւնի գրքէն իրցուած էջեր եւ թերթուածներ», Փարիզ, 1968, էջ 137:

Իսկ յետ-դրութիւն բաժինով՝ մահամերձ մանկամարդուհին կը խոտովանի, թէ երկու ամիս առաջ զբուսած էր նամակը նոր կ'ուզէ յանձնել թղթատարին, զիջալով մօտայուս իր վախճանը:

Եւ կը յայտնէ, թէ այսօր էր տասնութերորդ տարեդարձն է եւ զարմանալի զուգազուգութեամբ մը, այդ օր, բուժարանի շիւրասրահին մէջ սարքուած է պարանցիկ-էրեկոյթ մը:

Իր առողջական վիճակը վատթարացած ըլլալով՝ բժիշկներ յանձնարարած են գինք, որ չհեռանայ անկողնէն, մինչ ինք: Իր կեանքի վերջին րոպէները լուսատւիկս պահելով երջանկացնելու ձգտումով տարուած՝ կը դրէ՝ «Բայց հագիւ թէ անկողնու վար նետուած՝ արտակարգ սարսուռ մը, յանկարծակի յուզում մը կուրծքս կը սեղմէ: Բերնիս մէջ տա՛մ հեղուկ մը, արիւնի համ մը կայ...»

«Մարմինս փուշ-փուշ, ծունկերս կտրուած, հագիւ ուժը կ'ունենամ մինչեւ հայիլիս առաջը վագիլով բերանս քանալու... մարբուած ազատնի արիւնաքաթախ բերան մը...»

«Սարսափանալ անկողնի կը նետուիմ: Կ'ուզեմ բնամալ, մեանիլ, շտեմնի, չգգալ:

«Բայց այժեքս շին գոցուի: Վարի դահլիճներէն, դրամ ճեղքերէն օրորոզ երածշառքեան մը հետք կը հասնի... կարագի ե՛րբը...»

«Այս վայրկեանս՝ երեկոյթիմ մէջ կը պարեմ, կ'արտախանան, կը սիրեն...»

«Ես անկողնիս մէջ կ'ծկուած, խղճուկ-խղճուկ կալ լամ, կարմիր կալ լամ, արիւն կալ լամ...»

«Կ'ուզեմ ապրի՛լ, կ'ուզեմ ապրի՛լ, Տոքթօր...»(40):

Մանկամարդուհին հոգեվարքային ազրուճներուն դժով, ճակատագրապաշտ կրօնարականութեամբ մը ընդունելէ ետք մահուան առեղծուածային խորհուրդը՝ հոգեկան նոր իրողութիւն մը կը ստեղծուի Ռ. Սեւակի մէջ, երբ Պոլսէն ուղարկուած բարեկամի մը անակնկալ նամակով, կ'իմանայ եղբորը՝ Հայկին հիւանդութիւնը:

Շարաթ մը հաջ, Ռուբէն Սեւակ կը ստանայ նոյն կացութիւնը պարզով նամակ մը հօրմէն եւ նոյն պահարանին մէջ զետեղուած եւ հիւանդ եղբորը կողմէ ձեռադրուած այլ նամակ մը, ուր այս վերջինս կը հաստատէ, թէ ինք ապագիւնման մէջ է արդէն, եւ շուտով պիտի վերադանէ իր նախկին առողջութիւնը:

Սակայն երեք օր ետք, եղբորը թաղման կարգն ու յուղարկատեղութիւնը իմացնող վերջին նամակ մը յանկարծ կը յղաշըջ Սեւակի ամբողջ ուրիշարհայնացքը, որով տարակույսով ան կը տրամադրուի հանդէպ քաղաքակրթութեան զարուար նուաճումներուն եւ մինչեւ իսկ կեանքի գոյութեանական ըմբռումին:

Պորագիտ զգացուած եղբորը վերահաս մահով՝ ան կը նկատէ կեանքի առօրեայ հեղք իրբեւ անհեթեթ մահաբաշտ: Եւ որպէսզի չկրի իր ցուերուն տակ՝ կը կատարէ ելեկտրական սիւնի մը եւ, հետեւելով մարդոց սենդոս աշխատանքին եւ կենցաղական ոգեւորութեան՝ կը զարմանայ, թէ երբեւեցէ իստանբուլի եւ կենցաղական ոգեւորութեան՝ կը զարմանայ, թէ երբեւեցէ շե՛ն ապրած անոնք հարազատի մը կորուստը արդեօք եւ շե՛ն թափանցած մահուան դժնահայեաց խորհուրդին: Այլապէս, էթէ հաստատային կեանքի ու

(40) Ռուբէն Սեւակ, (Ռ. Զիլիկիրեան), «Բժիշկին գէլ ժն փոքուած էջեր եւ գերբուսանք», Փարիզ, 1946, էջեր 117-148:

նայնութեան՝ պիտի շնորհակցին անխմատ սխրագործութեանց յորձանուտ-
նէրուն եւ սեփական իրենց ցաւերէն շնորհակցու համար, իրենք եւս գուցէ
կարիքը զգային էլեկտրական սիւնի մը հովանաւորութեան:

Եւ խորացնելով կեանքի հանդէպ հետզհետէ ծաւալող իր տարակու-
սանքը՝ Ռ. Սեւակ հարց կու տայ, թէ ո՞ւր է արդեօք իր ներքողած պարելու՞
կամքը եւ յաւերժութեան իմացումը: Միթէ Գիտութիւնը խորտակած է իր
մէջ այն դերադոյն զրացումը, որ կը ներդրծուի հաւատքի քորութեամբ:

Կը զգայ, թէ ներանձնապէս կը տառապի եւ կը տարտաքրի ընդմէջ Գի-
տութեան եւ կրօնական ճշմարտութեան. «— Գիտութիւն մը՝ որ փաստեր աւ-
Յի ու իտէպլ չունի, ու կրօնք մը՝ որ իտէպլ ունի ու փաստեր չունի...»(41):

Եւ սակայն, որքան հետեւի Գիտութեան՝ նոյնքան աւելի կը ժտանայ
մահուան դարպասներուն եւ որքան փարի կրօնաշունչ հաւատալիքներու՝
նոյնքան եւ հաղորդ կը մնայ յուսամտաներուն յախտներով: Բայց ո՞չ
դիտութիւնը եւ ոչ կրօնքը մահուան եւ կեանքի նկատմամբ իրենց հանգանա-
կած դարտուր խոստումներով կը յաջողին ձերբազատել զինք իր մղձաւան-
ջային տարակուսէն: Որով, տարաբախա իր եղբոր անկարեկիր վիշաք սըր-
տին՝ բանաստեղծը, իր հերթին, կ'արձագանդէ ունայնութեան վիճերուն
հեռարձակուած շամէթի եղերահոսել նոյն հարցականը. «Լինե՞լ, թէ չի-
նել... մեռե՞լ, քնանա՞լ... քնանա՞լ, երազե՞լ թերեւ...»:

Ներքելով մտը եւ մահուամբ մակերնթացուած ժխտական ամէն իրա-
դարձութիւն՝ Ռ. Սեւակ խորապէս կը սիրէ կեանքը:

Այս կապակցութեամբ, հետամուտ է այն գաղափարին, թէ ո՞չ մէկ քը-
միչէկ իրաւասութիւնը ունի թունաւոր հեղուկի մը ներարկումով վերջ տալու
հիւանդի կեանքին, զայն հողեմարգային իր տանջանքէն զերկելու առաջա-
դրութեամբ: Ըստ իրեն, այդ իրաւասութիւնը կը պատկանի ո՞չ բժիշկին եւ
ոչ ալ հիւանդին, այլ՝ միմիայն Աստուծոյ:

Սոյն ըմբռնումը կը բացայայտուի «Ցաւի միսը» խորագրով պատմե-
ւածքով, ուր Ռ. Սեւակ կը նկարագրէ դուրսերիսցի գեղջուկ մը, որ, որբու-
հի մը հետ ամուսնանալով եւ երեք զաւակներու հայր ըլլալէ ետք՝ կը վա-
րակուի քաղցկեղէ:

Ողբերգականը այն երևույթն է, կ'ըսէ Ռ. Սեւակ, որ քաղցկեղը ան-
բնշէկ իր գրոյմը ձգած է այդ դժբախտ մարդուն աղիքին ճիշդ ծայրը եւ
ժամանակին հետ հինցած ըլլալուն՝ տնկնար էր զայն դարձանել:

Մինչ հիւանդը, ա՛լ ճարահատ իր երկարատեւ եւ արիւնճառ տառա-
պանքէն՝ կը թախանձէ բժիշկին, որ վերջ տայ իր հողեմարգին, շիթթահար
կացութեան մը մատնուած բժիշկ-դրագէտը, անկարելի առաքելութենէ մը
յառաջացած իր դառն ափսոսանքը կը բարեխառնէ հետեւեալ խորհրդա-
ծութեամբ.

«Որո՞ւն կը պատկանի Ցաւի Միսը, որո՞ւն կը պատկանի նիւազոյն կեան-
քը, ընտանիքի՞ն, քէ Օրէնքի՞ն, բժիշկի՞ն, քէ Աստուծոյ...»

«Լեռնոյձուածայի՞ն այնտ, որուն ո՞չ դարմանը, ո՞չ պատմանը, ո՞չ
մանրէն, ո՞չ ծագումը յայտնի է:

«Ինձիմիւ անկարող, ու մեղքներու անընթացակ, վերջին գեճ մը կը
մնար սեպիս մէջ՝ մորֆիւնը: Ա՛յո, եթէ միայն այս դեղն ըլլար բժշկութեան

(41) Ռուբէն Սեւակ, (Ռ. Ձիլիկիթեան), «Բժիշկին գերութիւնը քորուած էր եւ քոր-
թուածներ», Փարիզ, 1940, էջ 73:
digitised by A.R.A.R.®

մէջ՝ եւ դարձեալ պիտի սիրէի իմ արուեստո՛ւ՝ հագնվարբին վերջին ժամերը
նսկեգոծելու համար...»(42) :

Նոյն գրացումը կը գործանցէ Ռ. Սեւակ «Մանչերում գերեզմանը» պատ-
մըւածքով, ուր յուղիչ արտածներով կը կենդանագրէ իր վաղեմի ընկերոջ՝
Արամին եւ եղբայրներուն ընտանեկան ողբերգութիւնը, թէ սղալական աժան
կերպերով դո՛ւնացում տալով քնարիտական իրենց պահանջներուն՝ կը հասնին
Թոքախտաւոր վիճակի եւ մատաղաւ տարիքին կը յանձնուին ցուրտ հողին...

Անդրադարձնալով Արամի հոգեվարքային պահերուն՝ Ռ. Սեւակ գու-
ղահետ մը կը գծէ հիւանդին ճակատագրին կապակցութեամբ բժիշկին եւ ծը-
խտուէր քահանային ներհակ մտեցումներուն միջեւ :

Այսպէս, մինչ այցելու բժիշկը, յետ-քննութեան, գիտական մարդու
վճահական եւ կտրուկ շարժումով մը կը յայտնէ Արամին մտաւուրտ մահը,
միւս կողմէ՝ ծխատէր քահանան, ձեռքին խաչ եւ Աւետարան, երկնային
խոստումներով կը յուսադրէ մահամերձ հիւանդը.

«Ես չեի գիտեր, թէ մարդիկ ինչպէս կը մեռնին, — կ'ըսէ Սեւակ, —
գիտէի միայն, թէ մեր բուժաւորած շունըը իյնալով, գալարուելով, կրկին
կանգնելով եւ պազատելով կ'ըսէին իրենց վերջին շունըը: Բայց ընկերոջս՝
Արամին հագնվարբով ետ'ը ըմբռնեցի, թէ մարդիկ չեն մեռնիր անասուններու
պէտք: Եւ այս առիթով, վկայակոչելով ծխատէր քահանային օրհնահունչ
խոսքերը՝ կ'ըսէ.

«Ես այն ատեն գեռ չէի տեսեր թէ մարդ մը ինչպէ՛ս կը մեռնի. սա-
կայն յանախ օտակումով դիտեր էի թէ ի՞նչպէս կը մեռնէին մեր բուժաւո-
րած շունըը՝ աւայատակները խածնելով, կանգնելով ու իյնալով, դադարով
ու պազատելով...» :

«Սակայն այդ օրը սարվեցայ ինչ որ բարձր բժշկական կանաւները չու-
գեցին արվեցանել՝ թէ մարդ մը անասունի մը պէս չի՛ մեռնիր...» :

«Ես կարծեմ, թէ իրականութիւն, չի՛մ գիտեր: Սակայն այդ օրէն ի վեր
համոզուեցայ, թէ սրբան ստեղծ, որ մարդերը պիտի մեռնին՝ այնքան ատեն
Գիտութեան կողմէն պիտի ապրի նաեւ կրօնքը...» :

«Արդարեւ, քահանային մեկնելէն վերջ, անմիաբանեմ շնորհ մը իբր
էր արդէն երկունքիս դէմքին վրայ: Անկողնիս մէջ նստաւ, ձեռքը ձեռքերուս
մէջ դրաւ, ու խօսեցամք իրարու հետ՝ եի՛ն օրերու պէտք(43) :

«Բժիշկին գիրքէն փրցուած էջերուն մէջ, յատկապէս, «Գիմովիմ աղ-
ջիկը» եւ «Մեռնելու իրաւունքը» պատմութիւններով, դրսեւորելով կենքի
հանդէպ իր խորհուրդն զգացումները՝ Ռ. Սեւակ մէկ կողմէ կը զատապարտէ
ուսումնական ճաշակներ օնոցանոց այն բոլոր քաղաքաչափները, որոնք վստա-
նակ խաղաղատենչ միջոցներով լուծելու գիւտնագիտական իրենց միջին հա-
շիւները՝ քերական երկասարդներ կը զոհարենք ուսումնական նպատակներու
համար, միւս կողմէ՝ կը մեղադրէ բարոյական գիտակցութենէ գուրկ այն բու-
լոր մարդերը, որոնք բահած եւ հնչողութեան ցանկութիւններէ թիւադը-
ւած՝ կը ստեղծեն անբուժելիօրէն արտադրին կացութիւններ եւ կը պարտա-
դրեն, որ բժիշկներ ամէն ճիւղ ի դարձ դնեն բուժելու անկարելի պարագաներ :
Խորացնելով հիւանդագրէ երեւոյթներու անդրադարձով իր բարոյագի-
տական սենեուները՝ Ռ. Սեւակ, մերթ կը հաստատէ, թէ մարդիկ անդե-

(42) Թուրք Սեւակ, (Ռ. Զիլիմկիրեան), «Բժիշկին գիրքէն վերջուած էջեր եւ քեր-
ականներ», Փարիզ, 1940, էջ 90 :

(43) Թուրք Սեւակ, (Ռ. Զիլիմկիրեան), «Բժիշկին գիրքէն վերջուած էջեր եւ քեր-
ականներ», Փարիզ, 1940, էջ 29-30 :

տակից զրհերն են կոյր ճակատադրի մը եւ մերթ կը դատապարտէ նաեւ կան-
խապէս ծրագրուած ոճրային այն բոլոր մգտումները, որ կողուած են վիժե-
ցընելու աշուպէս կոչուած «Մեղքի պտուղ» մը:

Հատ իրեն, ոեւէ նորածին, ի՛նչ պայմաններու տակ ալ աշխարհ գայ,
արժանի է խնամքի եւ հոգածութեան, եւ թէ՛ մարդկութիւնը պէտք է ըմբռու-
նէ, որ չկան մեղքի տղամեր, այլ կան յաւատ օրհնեալ նորաթիթէ կակներ,
որոնցմէ խրաքանչիւրը իր սեփական գոյութեամբ կրնայ շնորհ մը աւելցնել
կեանքի բարելորման արշալոյսին...

Հեղաբնակչւոյ ախտաբանական իր մտորումներուն շրջապէս՝ Թ. Սեւ-
ւակ կ'անդրադառնայ նաեւ ընկերային բնոյթ ունեցող կարգ մը ախտաժէտ
եքեւոյթներու:

Այս յղացքով, սահաղագ կը հնչեցնէ քաղաքակրթութեան հնազոյն ախ-
տերէն դիտաւորագոյնը համարուող այլասերման վտանդին դէմ, որ ո՛չ միայն
կը խեղաթիւրէ անհատին իմացական եւ մարմնական կազմաւորումը, այլեւ
ճակատագրական ողբերգութիւններու կը վերածէ ազգի մը բարոյական են-
թակառոյցները:

Նկատելով դիմեմտութիւնը իրրեւ մէկ բնորոշ ախտանիշը այլասերման
վտանդին, Թ. Սեւակ կը հաւատայ, թէ միայն ժողովրդութեամբ կարելի է
ծնունդ տալ մարմնապէս առողջ եւ հոգեպէս կենսունակ երեխաներու, որոնք
պիտի դոյաւունեն եւ գործին իրրեւ առաքելագործ դարբինները հայութեան
վաղուան երազներուն:

Իրողութիւն է, սակայն, որ մենք, ծնունդ տալով ջլագար երեխանե-
րու՝ կանխորոշ եւ կողմնակալ դիտաւորութեամբ մը կը մշակենք, կը դա-
տարակենք գանձեր, մինչեւ իսկ ընծայելով անոնց բարձրագոյն ուսման մը
նախանձելի կարելիութիւնները, հետագային պարգեւատրելով գանձք իմա-
ցական դասու համապատասխան պաշտօններով:

Անո՞ք են, որ հիւանդկախ եւ պանդուխտ ուսանողի իրենց ճակատա-
գրով, կը թաղուին օտար ու ցուրտ հորիզոններու տակ, կը գործեն առեւտու-
րական գրասենեակներու մէջ եւ կը շարունակեն իրենց հիւնախտաւոր գո-
յութիւնը՝ հիւանդանոցի մը շիրմաքոյր սենեակներուն ներքեւ:

Մինչ անդին, կամովին կը զրկենք կենսատողջ, պայքարող եւ բանիմաց
երրասարգները կրթական կեանքի բարեքներէն եւ լծելով գանձք ապրուս-
տի սպառել աշխատանքին՝ կը խեղդենք իրենց մէջ խոստումնազոյ տարբեր
ապագայ առաջնորդներու:

Ահա թէ ինչու դեղձուկ եւ աշխատող դասակարգը առաւել խելահաս է,
քան այսպէս կոչուած մտաւարակամ դասը, ընթերցող առաւել գիտակից է,
քան դրողը եւ, վերջապէս, մարմինը առաւել զօրեղ է, քան ուղեղը...

Հիմնաւորելով իր մտածումները բնախօսական այն օրէնքին վրայ, թէ
ինչպէս մարմինը սակաւ կը շնորհակցի ինչ որ օտար է իր մէջ եւ այլասե-
րած, նոյնպէս եւ հայ ազգը, իրրեւ կենսունակ մարմին, նոյն օրէնքի կի-
բարկմամբ կը վտարէ իրմէ այլասերման բոլոր տարրերը: Թէ՛ հայ ազգի գլու-
խը խորհրդանշող մտաւորականութիւնը, եթէ երբեք չազատադէ ինքզինք
այլասերման իր ախտէն, պիտի գայ օրը, երբ մեր մտաւորականութիւնը հե-
տզենտէ ուծանալով ինք իր մէջ եւ հեռանալով հայ ժողովուրդին հոգեպէս
եւ իմացապէս ծառայելու իր պարտքէն՝ պիտի դառնայ անմարմին գլուխ մը,
իսկ հայ ազգը՝ անդուխտ մարմին մը:

Ռուբէն Սեւակ կը թելադրէ, որ հայ գրագէտները գրեն ժողովուրդին
համար, ժողովրդական մատչելի՝ բարբառով եւ թուղթին շանձենն անըմբռ-
նելի եւ իրթին մտածումներ:

Հստ բանաստեղծին, մենք, իբրև աղային զոյութիւն, կարիքը ունինք ողջամիտ մտաւարկաններու, որոնք փոխանակ յուսահատութեան մատնելու մեզ, դառնան հողենորդ եւ մղիչ ուժը մեր դրական եւ մշակութային տուաքելութեան: Եւ թէ՛ տոնոց առողջ եւ կենսախիբ իմացակառնութեան, մարմինը, որքան ալ զորեղ ըլլայ եւ կայտառ՝ դասապարտուած է կատարելութեանը պահանջներ:

Ահա թէ ինչու մենք իբրև ազգ, երկու հաղարածակներու ընթացքին արձանագրած չենք յառաջընթաց քանի մը նուաճում եւ ժամանակի հետադարձ ծովերու վրայ, մեր զոյութեան տուաքաստները դեռ լայն բացուած չեն, հակառակ ցանկալի հանդրուաններու հասնելու մեր դարաւոր ձգտումներուն:

Եւ Ռ. Սեւակ այս երեւոյթին հիմնական պատճառը կը վերագրէ այն իրողութեան, որ մտաւարկան կենսից դեկը ստանձնած են անոնք, որ ի ծնէ հիւանդ են, պատեհապաշտ եւ այսպէս: Հետեւաբար, հարկ է, որ հասկալիք անոնց՝ իմացական նոր ըմբռնումներով մակերարք մը կերտելով...

Արդարեւ, Ռ. Սեւակի մտապահերած Վերածնունդը բարոյական իր մասնաճանաչմանը, պիտի բերէ ո՛չ միայն արդիւնաւէտ ներգործութիւն մը մեր ազգային իրականութեան մէջ, այլեւ գոյակերտէ նաեւ իսկալ կառուցելու ընտանեկան այն մարտը մթնոլորտին, որուն քնարանը պիտի ըլլայ դրոշմի կրեխայի արտին մէջ սիրոյ անարատ զգացումը եւ կրթիւ զայն սեռային առողջ դաստիարակութեամբ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Իր չափածոյ թէ արձակ գործերուն առնչուած վերոյիշեալ ակնարկութիւններով փորձեցինք մերակսովել հասկալազոր նահատակ գրադէտին տասնամեայ գրական գործունէութեան:

Մեակի երկերուն զեղարուեստական արժանիքը կը յատկանշուի այն նորութեամբ, որ արդիւնք է ո՛րքան իրայատուկ խառնուածքին, նոյնքան իր ապրած հերոսական այն միջավայրին, որուն ձեռնտու պայմաններուն տակ կազմաւորուեցաւ իր միտքը եւ զարդացաւ արեւմտեան քաղաքակրթութեան հոգեմտաւոր հարստութեամբ: Հո՛ն կերտեց իր արուեստի ճաշակը ո՛չ միայն ծանոթանալով օտար գրականութեանց, այլեւ կատարելով իր նախադրած հեղինակներու կարգ մը գործերին թարգմանչական որոշ աշխատանքներ: Եւ գործնապէս ալ, բժշկական փորձառութեան առնթիւ, հաղորդ դարձաւ ընկերային այն երեւոյթներուն, որոնց դրսեւորած տաղնապները հիմնովին նո՛ր էին պոլստեայ մտաւարկանութեան մտածողութեան եւ առօրեայ բարոյական:

Անդրադառնալով իր քերթողական նկարագրին, կ'ուզէինք ընդգծել այն իրողութիւնը, որ քնարական շնորհներով օժտուած բանաստեղծն է Սեւակ, որուն բնութեանապաշտ թէ սիրաշունչ, հայրենախոհ թէ համամարդկային ապրումները կը փոխանցեն քաղցրութիւնը ներքոր յուզականութեան մը:

Անկեղծութիւնը կը կազմէ հիմնական տանձնայատկութիւնը Սեւակի քնարաշունչ զգողմանը եւ շնորհիւ արտաւ խոստովանութիւններու՝ իր վիպապաշտ զգողմանը կը դառնան վարակիչ եւ հաղորդական:

Սեւակ ունի նաեւ վատ երեւակայութիւն մը, կեանքն ու բնութիւնը ընկալելու իրայատուկ դիտակէտ: Իր քերթուածները ի՛նչ հոգեխառնութեամբ ալ շեշտուած ըլլան՝ բնութեան իրաքանչիւր զոյնին եւ զիծին մէջ կը զբոստանայ:

նեն իրենց պատկերաւոր արտայայտութիւնը: Իր գրչին տակ, գոյ թէ անգոյ, անցաւոր թէ անանց, տեսանելի թէ անյայտ եւ, վերջապէս, անձնական թէ անանձնական ամէն մէկ երևոյթ՝ կը պարզէ յատուկ նշանակութիւն եւ կը ներկայանայ խորհրդանիշը զպայական որոշ իրականութեան մը:

Ճկուն է իր ոճը եւ անխառն է լեզուն: Ենթոյն իրենց նախնական պարզութեան եւ մատչելի բառամթերքին՝ Սեւակի շտփածոյ գործերը կը թողան շերտ տպաւորութիւն մը:

Տաղաչափական օրէնքներուն հմուտ բանաստեղծն է Սեւակ, որ կրնայ մտածումներ մարմնակերտել՝ առանց դիմելու անարուեստ եւ բռնազօս ձեւերու:

Ուշագրաւ է իր որդեգրած այն գրելակերպը, որով քերթուածի մը իւրաքանչիւր համարին առաջին եւ վերջին տողերու կրկնութեամբ կ'ընծայէ ճարտական որոշ դրաւչութիւն մը այդ քերթուածին ընդհանուր կառոյցին:

Եւ երբեմն կը սիրէ շարահիւսել միեւնոյն սկզբնադասերով բառակազմում նախադասութիւններ, որոնք կը նպաստեն արտաբերում խօսքի մը երաժշտական յղացքին:

Անկախ քնարերգակ բանաստեղծի իր հանգամանքէն, Սեւակ կը ներկայանայ իրրեւ այն տիպար արուեստագէտը, որ կը սիրէ խոհական դիտանկիւնէ մը մտնելով ո՛չ միայն կեանքի հասարակական կամ ընդհանրական երևոյթներուն, այլեւ կենսափիլիսոփայական երանգ մըն ալ տալ մինչև իսկ ճարտական իր յոյզերուն: Եւ այս յատկութեամբ, «Սիրոյ գիրքը» գործին սիրային խոհական ապրումները, Սեւակի անդրիլիլիմեան մտորումներով բացայայտած մարդասիրական զգացումներուն հետ պիտի մնան յարակից մէկ ապրումը հայ դրականութեան իմացապաշտ ժառանգութեան:

Եղբորակելով նաև իր արձակ գործերուն կապակցութեամբ վերոյիշուող բնութագրումները, պիտի ուզէինք հաստատել, թէ «Բժիշկն» գիրքէն վերջըլած էջերը կը խտացնէ հիմնական արժանիքները գեղարուեստական երկի մը:

Այս պարագային եւս, վճիտ է Ռուբէն Սեւակի լեզուն, որ տեղ-տեղ կը յայտնաբերուի բանաստեղծական շունչով եւ զաշնակչոյթ դրաւչութեամբ: Սոյն երեւոյթը կարելի է նկատել իրրեւ բնական ազդեցութիւնը իր արձակ գրութիւններուն վրայ անդրադարձուած Սեւակի քերթողական լայն փորձառութեան:

Իրրեւ արձակագիր ան կը ձգտի նկարագրել տուեալ վիճակ մը՝ պատկերաւոր զգացումներով եւ այս յղացքով, իւրաքանչիւր դրուագ ողբերգական ինչ հանգամանք ալ ունենայ՝ կը յայտնաբերուի տպաւորապաշտ գեղեցկութեամբ:

Ռուբէն Սեւակ ո՛չ միայն կրնայ իրենց բնական բարեմասնութիւններով կենդանագրել իր տիպարները, այլևս դիտէ հոգեկան բարդ կացութիւններ իրենց համապատասխան իրապաշտութեամբ նկարագրելու կերպերը:

Ահա թէ ինչո՞ւ իր թորախաւոր հերոսները, իրենց պարագայական վիճակներէն անգին անցնելով՝ կը վերածուին հասարակաց դժբախտութիւն մը յատկանշող համարազգային կերպարներու:

Առհասարակ անբուժելի հիւանդներ են իր տիպարները, որոնք աշխարհի հետաւոր ծագրէն կու գան Լոզան՝ դարմանուելու յոյսով, ինչպէս, շնական իր արարքին զուր դարձած կովկասահայ չերքէզը, «Աօրնուս» գամձըյին անիծապարտ հերոսուհին՝ Արմինէն կամ «Մարաւ մարդը» պատմուածքին պոլսահայ հիւնախաւոր երեսասարդը:

Մեծաւ մասամբ Հայ եւ Թաղամով այդ Հիւանդները եւ այս պարագան
կը բացայայտէ ազգայնաշունչ նկարագիրը այն կարգ մը պատմութեան
(օրինակ, «Կոռնիլի», «Տէր Ողորմեա» եւ «Զմեռնիլու համար»), ուր Հայ ժողովուրդէ
զարատը նրազնեը իրենց բովանդակ հակատագրով կը ստանան
նոր շունչ եւ նոր Թաւալ եւ կը տպաւորեն մեզ ողբունչ յուզականութեամբ:

Իբրեւ Հոգեբոյժ-գրագէտ, Մեակ Հիւանդներուն կեանքէն քաղած ա-
կանատեսի իր վկայութիւնները կը կենդանազրէ արուեստի բացայայտ մտա-
հոգութեամբ: Այս պատճառաւ, Հոգեկան ախտերու հետեւանքներուն եւ ա-
նոնց դարմանումին վերաբերող բժշկագիտական իր կարգ մը գրութիւնները,
հակառակ իրենց յորդորաշունչ բնոյթին՝ չեն դադրիր գրական որոշ արժա-
նիք մը կերպարելէ:

Ռուբէն Սեակի բարոյագիտական ըմբռումներուն հանգանակն է «Բը-
միշկի գիրքէն» փրկուած էջերը որոնք, ուր բժիշկ-գրագէտը, Զարդարեանի
բնորոշումով՝ «հիւանդութիւններու հանդէպ դարչանքի եւ վախի զգացում
մը» ներշնչելով՝ կը ձգտի խորացնել մարդ անհատի մէջ կենցաղական առողջ
գիտակցութիւն մը:

Մնաց որ, Ռ. Սեակ, իր պատմութեան զգալի մէկ բաժնով, կըր-
ցած է ստեղծել յատկանշական տիպարներ, որոնք Հոգեկան համապատասխան
ցաւերով եւ կեանքին կտրչելու ցաւազին տենչանքներով կ'ապրին եւ կը տազ-
նապին դարաշրջանէ կարաշրջան՝ իրեւ կենդանի վիաները մարդկային մը-
տանորոգ ողորդութեան...:

Արդարեւ, նոր էս թեւեթիած իր գործունէութեան բեղմնաւոր շր-
ջանը, նոր եղբրական պայմաններու տակ ողջունեց իր կեանքի վաղահաս վեր-
ջաւայտը: Եթէ արուէր իրեն ապրելու, գործելու եւ արուեստով վերանաշունչ
մարդկային տարրական իրաւունքը՝ տասնամեայ շանգրուան մը նուաճած
ստեղծագործ իր ուղին պիտի բացուէր նոր յղացումներու ազգաբացին եւ հա-
րըտանար նորայայտ իրագործումներով: Եւ թէպէտ Ռ. Սեակ բոլորեց
կեանքի կարճատեւ բնթաց մը, բայց այդ հանդամանքովն իսկ կտակեց կարգ
մը որակաւոր գործեր, որոնք, անկասկած, պիտի հանդիսանան քնարաշունչ
մէկ վկայութիւնը նախա-եղեոնեան զեզապաշտական ձգտումներուն...:

ՅԱԿՈՒՄ ՄԱՆՈՒԿԵԱՆ

(Շար. 3 եւ վերջ)

ՌՈՒՐԷՆ ՍԵՒԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԻ ԳՈՐԾԵՐԸ

- 1.- «ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ», Ռ. Սեակ, Էնթուսիստիկ հասար, Կ. Պոլիս, 1910, 71 էջ:
- 2.- «ԲԺՇԿԻՆ ԳԻՐՔԻՆ ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐ» (Ռ. Սեակ), Տաք. Ռուբէն Զիլիմիիթեան, Կրատ. «Գաղթան» զրատամ, Սեյմիկ, 1926, 128 էջ:
- 3.- «ԲԺՇԿԻՆ ԳԻՐՔԻՆ ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐ», Ռուբէն Սեակ, (Տաք. Ռ. Զիլիմիիթեան), տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1943, 191 էջ:
- 4.- «ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒ ՀԱՒԱՔԱԾՈՅ», Ռուբէն Սեակ, «ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ», «ՄԻՐՈՑ ԳԻՐՔԸ» եւ «ՄԻՐԻ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ» քաժիմեարով, տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1944, 160 էջ:

- 5.- «Բժիշկերն Գիրֆէն փոփոխութեան Էճեր Ե՛ր Քերթնուցներն», Ռուբէն Սեւակ (Ռ. Ձիլիմկիրեան), Փարիզ, 1946, 239 էջ:
- 6.- «Երկեր», Ռուբէն Սեւակ, Հայպետհրատ, Երևան, 1955. Քեֆաքի պատրաստութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ Եղիշէ Պետրոսեանի:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻ ԿԵԱՆՔԻՆ ԵՒ ԳՈՐԾԵՐՈՒՆ ՆՈՒՐՈՒՐԱԾ
ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ ԳՐՈՒԱԾՔՆԵՐԸ

- 1.- «ՏԱՂԱՆՎԱԿՈՐ ՀԱՅ ԲԺԻՇԿ ԼՐԸ ԼԵՐ ԼԵՐ ԼԵՐ», Ռ. Ջարդարեան, «Ամէն-նուն տարեցոյցը», 1915, էջ 324:
- 2.- «Ռ. Սեւակ», Նազարեանց-Պարսամեան, «Մուրճանկ», Տ. Ա. ի, 1906, թիւ 52:
- 3.- «Ռ. Սեւակ», «Ամէնուն տարեցոյցը», 1911, էջ 264:
- 4.- «ՀԱՆՁՆՈՒՐ ԳԵՄՔԵՐ. ՏՌՔԹ. ՌՈՒԲԷՆ ՁԻԼԻՄԿԻՐԵԱՆ», «Ժամանակ», 1916, բացառիկ թիւ, կազմուած Թէոդիկէ:
- 7.- «Ռ. Սեւակ», «ԼԵՐ ԱԶԳ. ՎԵՐՁԻՆ ՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՆԵՐԸ», Մերուծան Պարսամեան, «Շանթ» 1918, թիւ 2:
- 6.- «ՆԱՀԱՏԱԿ ԳՐՈՂՆԵՐ, ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ» (Իր կեանքն ու գրականութիւնը), Արմեն Սեւակ, «Հայրենիք» ամսագիր, 1930 Նոյեմբերի եւ Դեկտեմբերի թիւերում մէջ:
- 7.- «ԶԱՆՂՐԻԷՆ ՎԵՐՁԻՇՈՒՄՆԵՐ», Լ. Շամտամեան, «Յուշարժան ասպարիլ տասըժէկի», 1920, Կ. Պալիս:
- 8.- «ԿԱՌԱՊԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ», «Հայկաջէն տարեդէրք», 1922, էջ 319:
- 9.- «ՎԵՐԱՄՈՒՆԻՆ», Ջ. Սուրէնեան, Գ. տարի, թիւ 31, Փարիզ:
- 10.- «ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ», Եղ. Ջրբաշեան, «Միտք» հրատարակչութիւն, Երևան, 1965:
- 11.- «ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵԳՐԸ», կարծիքներով,
 Բ. տարի, 1955, Պէյրուս
 Զ. տարի, 1959, Պէյրուս
 Ե. տարի, 1960, Պէյրուս
 Ը. տարի, 1961, Պէյրուս
 Թ. տարի, 1962, Պէյրուս
 Ժ. տարի, 1963, Պէյրուս
 ԺԲ. տարի, 1965, Պէյրուս
 ԺԳ. տարի, 1967-1968, Պէյրուս
- 12.- «ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ», Թ. Կառապ, 6. Օ-շահան, «Մուրճանկ Ձիլիմկիրեան, (Ռ. Սեւակ)», Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիայ, Ամբիլիս, 1980, էջ 7-80:

Ենեզ էջ մըմ է զհուսկերս, ուր ցուկրուծ անհուն երիտասարդը կը գարնէ, տարիներով դարձակալ սպասելէ ետք. իր աստեղը աւարտած ու ճայրեմի՜ք վերագտնեալու պատրաստուող համալսարանականը: Հագիւ շամի մը գոյն, գորիւքըմէի այն հիւանդութիւնը քնկարելու ծախար անհրաժեշտ, սակայն: Մնացածը հոգիմ է այն ճիւղասարգիմ, անոր արեան անճահանց ծայմերը, անոր ողբերգական ժայշայտեց: Ձեմ պատմել վիզակը, քայց կը զրկեմ ընթերցողը այն շամի մը էջը յանցնող գլուխ-գործոցիմ, որուն մէջ, անբող ժողովուրդի մը գորաւոր փորձասութիւնը, անցնող քայտուէն սպասելու ինչ որ գետիմը պիտի իր այժերը գոցելու հարկադրուած պանդուխտիմ, Բուիկը՝ սա ետք փորձասութեան, որ մեր գրականութեան ամենէն մեծ շամի մը անհունները արիւնատուտ պարտադրեց մեր հիացման ու սիրոյն, կը գտնեն իրենց անհուն յուզիչ կերպարանքը: Սեւակ գրագետ մըմ է ետք:

Թ. ՕՏԱԿԱՆ

Ահա զկանակն պատմութեան՝ ճեղքուող հարստական երկնքի սակ հոգին աւանդող հայ ուսանողի պատմութիւնը, որը ճանկց ասով միայն մի բան է խնդրում՝ երգել պանդուխտ հողիներէ սրտի թարգման գրանակը: Վի. ես երգեցի իրեն. ո՞վ չի գիտեր զհուսկերս, բոլորն աւերն նսին մնացած ուղեւորներուն կռուիլը... ու անգին բոլոր ճիւղ ծած, անվեր ճամբաներուն սպասողներուն կռուիլը...: Ու ինձի այնպէս քուեցաւ, որ իր հոգիմ հովստու, գովստու, լոջաւ...: Ից սրտիմ բոլոր լուրերը յանձնը էր ծաւալուրիմ կռուիլիմ...: Անտեսթ երիտասարդի պատմութիւնը վերածուած է մի բնորոշ խորհրդանշանի, ընդլայնուած է պատմութեան սահմանները միմէն հայ ժողովուրդի անհեղին ու ներկայի տխուր երգութիւնները, որոնց ծնարկան գեղեցիկ բնուիլագիւն է արուած պատմութեան եզրագիւնէ սողերում...

Է. ԲԱՐԱՆՆԵԱՆ

Բ. Ս Ե Ի Ա Կ

Կ Ռ Ո Ւ Ն Կ Ը

Յուրա-մեծն օր մըն էր: Դուրսը ասուած հովը մտրակներու պէս կը լալէր անցորդներու երեսին: Զիւնն ըսեա՛ աչքերը կուրցնելու աստիճան:

Հայրենակցի մը սենեակին մէջ կըմկրտեր էինք մենք. Քանի մը ընկերներ, ամէնքս ալ պանդուխտ: Դուրսը ճառց, ցուրտ հով մը խուսեց սենեակէն ներս: Կարոն էր, գերեզմանէն կու գար:

— Պը՛ս՛ն, ըսաւ, լա՛ն օդ. ասանկ օրով մարդ կը մեռնի՛...:

Քիչ վերջը, դուռը անգամ մըն ալ բացուեցաւ. քանի մը յետամնաց ընկերներ ալ ներս մտան: Այս միւսին տակ ըստպասած էին որ դիակը ամբողջովին ծածկուէր, նոյնիսկ մէկը՝ մեր բոլորին կողմէ՛ յետին հրատեղուի Քանի մը խոսքեր ալ բսած էր այդ մեղաւոր գերեզմանատան մէջ, այդ անծանօթ մեռելին վրայ:

Ո՛վ կը ճանչնար, ո՛վ պիտի ճանչնար երբեք հազար ու մէկ թղկտուած էջերը կհանրի ու Մահուան այն տրամին՝ որ այսօր միւսներու տակ թաղեցինք, օտարներու փոսին մէջ: Առանց անունի, թընուշուշի դիակի մը պէս...:

— Ե՛ս ալ չէի ճանչնար ան, ըսաւ մէջերէն մէկը. քայց պանդուխտ մարդերը հասկցեր էին որ այդ օտարական հիւանդը Հայ մըն է ու հայ բռնիկ մը կ'ուզէ

իր մաս, Եսրաֆ մը յետոյ միայն կըր-
ցան զիս գտնել: Երբ իր սենեակէն ներս
մտայ՝ պատուհանին փեղկերը կոցուած
էին: Սակայն փէլ-փէլ այդ մթութեան
մէջ զէմք մը զնագրուեցաւ, երկար, ան-
կրկնաւոր, կանաչի գարնոյ դեղնութիւ-
նով մը. խաւարով ու լոյսով շինուած
աամսրանքեան պոռխ մը:

Երկրորդ քանը որ տեսայ այդ սեւու-
թեան մէջ ոսկորի զոյն մաքներ էին, որ
ինծի երկարեցան իս ձեռքերս սեղմեցին՝
կալով խոնաւութիւնով մը: Կարծես թէ
ա՛յլ կաթիլ մը արին մտացած չըլլար իր
մարմինին մէջ: Աչքերը իրենց փայլը ար-
դէն կորսնցուցեր էին. սեւութեան մէջ
սեւ՝ չէին երեւար:

Երբ աւելի վարժուեցայ այդ կէս-մը-
թութեան՝ տեսայ որ ձորուքին վրայ տեղ-
տեղ կարմիր արիւնը փակեր, թանձրա-
ցեր, լեղացեր էր: Մորթուած անասու-
նի տաք շունչ մը կ'ելլէր իր քերծէն, դան-
դաղ ու խորունկ: Կարծես անտեսանելի
՝ դանակ մը ներսէն, վերէն է վար ճեղքեր
էր իր թոզերը:

Այ նիթական ի՛նչ դարման կարելի
էր քաշ այս մարմինին որ գրեթէ մեռեր
էր արդէն: Բայց ան խօսելու հիշ մը ը-
րաւ, հաղջ խեղդեց իր խօսքը. խոկացող,
խապոտ հատաչիւրէն թա՛ս մը հասկցայ.
— Կոո՛ւնկը...

Ու նս հրեղեղի իրեն. ս'վ չի գիտեր
կոունկը, բոլոր աչերն ետին մնացած ու-
կեորնորուն կոունկը... ու անդին՝ բո-
լոր ճիւղը ծռած, անվերջ ճամբաներուն
սպասողներուն կոունկը... Ու ինծի
բանակէս թուեցաւ որ իր հողին հովացաւ Վ
զովացաւ, լացաւ... Իր սրտին բոլոր
լուրերը յանձներ էր հաւատարիմ կոուն-
կին...

Այս պատմութեան վրայ ամէնքս ալ
լռեցինք: Մարտիի թան մը կար ճա-
կատարքին մէջ այս անձանթ ուսանո-
ղին՝ որ հայրենիք դատաւրտ համար
ճամբայ ինկեր, ու ճամբուն վրայ մե-
ղեր. թաղուել էր իր լախած մէկ հո-
ւզին մէջ...

Թոգախաղ որ հո՛ն էր, ի՛ր մէջ, գա-
լտանակա՛լ, տարիներէ է վեր սպասեր էր



Ռ. ՍԵՒԱՆ

որ բոլոր յոյսերը իրականանան, բոլոր
ուսումները կատարելագործուին ու բո-
լոր աշխատութիւնները աւարտին՝ ի՛նք
սկսելու համար իր անաւոր աշխատու-
թիւնը, ու գերադո՛յն մամուն առաւ հա-
մար գերազո՛յն հարուածը... Ա՛խ,
զգուհի՛, զգուհի՛՝ հիւանդութիւնը...

— Բժի՛շկ, ըսաւ մէկը, երբ գերեզ-
մանին մէջ երեսը բացինք՝ մելանի պէս
սեւ էր... ինչէ՛ն է...

Բայց բժիշկը լիտեսցաւ. մա՛րդ չիտ-
սեցաւ:

Կոութիւնը անգամ մըն ալ իջաւ մեր
վրայ՝ քարի պէս, ու այս անգամ աւելի՛
անաւոր քան արաջին անգամը: Այդ սա՛-
որ կտորելու համար՝

— Տղաքե՛նթ, ըսաւ ուրիշ մը, վաղը
Հայոց Կազանդէն է...

Բայց Կազանդին վրայ մտածողն ս'վ
էր: Մենք կը լսէինք միւսները, որ կը թը-
փըրտային սպակիին վրայ, կարծես մե-
ռելին մատները թփրտային մեր սպա-
կիին վրայ... Այս ցուրտին՝ իր գերեզ-

մանէն փախած՝ մեր մէջ մտնել կ'ուզէր
ան: Աւ չես դիտեր ի՞նչ մը ունէր սպառա-
նական այդ անտնուն ու անծանօթ մեռե-
լը. խորհրդանշան մը ու ազգարարութիւն
մըն էր ան մեզի համար...

Աւ իրա՛ւ, իրա՛ւ, այդ պահուն Մա-
հը մեր վրան էր. ա՛յն Մահը, որ ուսա-
նողին ու բանուորին, հասարակին ու
ուրացողին, բժիշկին ու բժշկուողին հա-
ւասարապէս անծանօթ ու սարսափելի
է...

Մի՛նք ալ մա՛րդ պիտի ըլլայինք,
կրթութի՛ւն պիտի ստանայինք, լո՛յս
պիտի տանէինք մեր խաւար աշխարհին.
սո՛ւտ, սո՛ւտ... Եւ մենք որո՞նք չունինք
մէջէն չէր շնչեր արդէն դարանակալ Մա-
հը... Իւրաքանչիւրն ինքն իր վրայ կը
խորհէր, ինքն իր վրայ կը կասկածէր...

Ո՛վ պիտի պատմէր ահաւոր մեծու-
թիւնը այս երիտասարդ հոգիներուն, ու-
րոնք ազօթքի մը կա՛պն ալ կը մերժէին
ողջերուն ու մեռնողներուն միջև: Այլա-
պէ՛ս, ամէն մարդ առանձնացեր էր ինքն
իր հողունի մէջ...

Մակայն, յանկարծ, մութ անկիւնէ
մը դողդո՞ղ ու ցա՞ծ, երգ մը սկսաւ,
նախ մէ՛կ բերնով, յետոյ թուր շրթունք-
ներէ. բարի ու ահաւոր երգ մը, մահերգի
մը պէս ապաշուար, ազօթքի մը պէս վե-
հափառ հրդ մը, որ ստուը կոտորեց, ար-
ցունքները հալեցուց, սրտերը տաքցուց,
բուրբ հողիները, բուրբ հողերը, բուրբ

արտունջները, բուրբ մրմունջները իրա՞ք
միացուց.

Աւրիպից սիրտն է խոց, ճիկարն է
վարամ,
Կերած հացն է լեղի, ու լարն է
հարամ...

Կո՛ւնկ, կո՛ւնկ, ամէն աշխարհի
անկիւններէ, ամէն սրտի խորշերէ, գա-
նի՛ ծանր լուրեր կապեցին ուղեբորու, ու
դուն կընա՛ս թռչիլ... Գանի՛-գանի՛
մահեր կապեցին քա թեւերուդ, կո՛ւնկ,
թեւաւո՛ր հառաչ որ կընա՛ս թռչիլ...

Աւ ելլք բժշկին նշանին վրայ՝ բոլոր
մէկ ոտքի կեցանք իբրև սուգի նշան,
մարմինս փուշ-փուշ եղած՝ ես կը խոր-
հէի, որ այդ մայրկեանին, հեռունե՛րը,
հեռունե՛րը, ծովերով ու լեռներով հե-
ռունե՛րը տեղ մը, ծիրուկ մայր մը ու ա-
լետր հայր մը, փոտնով ու յուսալով,
ճամբո՛ւն, ճամբո՛ւն կը նայէին. մինչ-
դեռ մենք դիտէինք, որ ա՛լ տղան չպիտի
զար, չպիտի դա՛ր...

Էւ այս անգամ, ամէնո՞ւն հետ, բայց
պողալով, ու կարծես մօ՛րն ալանջին
կ'երպէի ես մահահոտ երգը... Պանդըխ-
տութեան ճամբաներուն վրայ անտնուն
մեռնողներու ամբողջ ցեղ մը՝ համայն
աշխարհը թունաւորելու չափ գառնու-
թի՛ւն դրեր էր այդ երգին մէջ, ու քա-
րերը լացնելու չափ քաղցրութիւն...

Մ. Մ Ի Ն Ա Ս Ե Ա Ն

**ՀՐԱՉԵԱՅ ԱՃԱՌԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ
ՎԻԵՆՆԱՅԻ ՄԻԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒՆ**

26.

[Երևան, 9 մայիս 1931,
ըստ ՀԱ 1963, էջ 454]

Միջին բարեկամ,
Հ. Ն. Ակինեան,

Ձեր նամակը (14 մարտի) ստացայ։ Հիտամուտ էի նախ ձեռք բերելու Ձեր մասնախօսականը(1)։ Վերջնական ախտը կարողացի եւ նամակս նոյն թարմ տպաւորութեան տակ է որ կգրեմ։ — Գրած էիք թէ ցաւած եմ արդեօք Ձեր նկատողութեանց համար։ Ի՞նչպէս կարելի էր այդ տեսակ հարց տալ։ Երբեքս արտադրի եւ հոգեբուղիս արտայայտութեանց համար ի՞նչպէս կըրնայի ցաւիլ։ Ո՛րք թէ ցաւի, այլ ամօթի զգացմունքով համակուեցայ եւ աշխատեցի լեցրուեցան, երբ կարողացի Ձեր սովորականէն շատ աւելի բարձր գովասանքները, որոնց մէկ մասը կոխարարեմ Ձեր անձնական ծանօթութեան, որովհետեւ ուրի՛շ է անձնապէս ծանօթանալ մէկուն աշխատանքին, ուրի՛շ է հետուից հետու։ Դուք երկուքն ալ եզաք եւ տեսաք։ Գալով այն խումբ մը դիտողութեանց, որ ըրած էք, փոխանակ ինծի ցաւեցնելու, առիթ պիտի տան ինծի աւելի խորամուխ ըլլալու փնտրութեանց մէջ եւ հասնելու աւելի կատարեալին։ Ձկայ գործ մը որ ինք էր մէջ կատարեալ ըլլայ, եւ ես ամէնքէն աւելի լաւ գիտեմ իմ աշխատութեանս պակասները։ Բայց կատարելագոյնին հասնելու համար միայն մի միջոց կար. ըլլալ Վիեննայի Միթթարիանց Մատենադարանին առընթեր։ Եւ այս էր իմ ծրագիրս ու նպատակս 1900 թուէն ի վեր։ Միայն կուզէի ինչքան հաջողական կարեւոր կեդրոն կայ, պատիլ, տեսնել, հաւաքել եւ յետոյ անցնել Վիեննա, Հոն լրացնելու համար մտացած պակասը։ Բայց որքան որ առաջին մասը յաջողութեամբ լրացուցի, երկրորդ մասը անկարելի եղաւ։ Ձերցայ Վիեննա գալ, եւ աւելի երկար սպասել աշ-

խատուութեան տպագրութեան՝ անմիտ էր, Բարերախտարար զիրքը ապակե-
տիպ է եւ օր մը, երբ ամբողջ օրինակները կտպարին (միայն 150 օր. մնաց
ծախու), անշուշտ աւելի հմուտ մէկը պիտի գտնուի, որ նորէն մշակէ աշ-
խատութիւնը եւ թերեւս իմ ժառուտէն յետոյ տպագրութեամբ լոյս ըն-
ծայ(2) : Բոլոր հղած քննադատութիւնները (հրանի թէ անոնք աւելի եւ
աւելի շատ ըլլային) պիտի նպաստեն այդ կատարելութեան հասնելու հաս-
մար : Այս պատճառով Ձեր այդ քննադատութեանց համար ալ շնորհակալ եմ,
եւ ամէնէն առաջ ե՛ս շնորհակալ եմ : Կան կէտեր Ձեր բացատրութեանց մէջ,
որ ես անշուշտ յաւելուածիս մէջ կմտցնեմ, բայց կան կէտեր՝ որ ճիշտ չեն,
որոնց մասին նոյնպէս կիսօտմ(3) : Գիրքս վերջացնելու համար մնաց մի տա-
րի : Հիմայ շատ աւելի արագ տեմպով(4) կտպուի, եւ շատ աւելի մաքուր :
Տպագրական թերութիւնները (քծրատիպ ասուեր) միայն Առաջին հատորնե-
րուն մէջ կգտնուին, հիմայ այլեւս վերացած են(5) :

Ելիշէի մասին Ձեր տուած բացատրութիւնը, ինչպէս ինքներդ ալ ըսած
էիք, անհաւատալի երեւցաւ ինձ եւ ամէն անոնց, որոնք կարդացին Ձեր նա-
մակը : Ենթադրեմք թէ Վարդան Բ եւ Վարդան Ա շփոթուած ըլլան իրար հետ.
բայց Խոսրովը ի՞նչպէս Յազկերտ դարձաւ, Յուսափիննոսը ի՞նչպէս Թէոդո-
զարձաւ եւն եւն : Այս բոլորը փաստերով հաստատել կարծեմ թէ շատ դժու-
ար պիտի ըլլայ Ձեզի(6) : Հոս ալ առանին հետ պիտի բռնեք. Աստ արկեր
զւազիւ զիրկս, թէ ժողովիլ կարացես, մեծ զարմանք իցնն :

Կպասեմ դեռ Եղիայի(7) ապագրութեան : Ասիկա փորձ մը պիտի ըլ-
լայ Ձեր տպարանին վրայ կորսնցուցած հաւատքս վերականգնելու : Եթէ յա-
ջողութեամբ դուրս դայ, ուրիշ գործ մ'ալ անպատեալ եւ անմիջապէս պիտի
յալորդէ : Կպասեմ : Միայն զարմանալի թուեցաւ ինձ Ձեր այն խօսքը թէ
ճառակաւին չեմ տեսած վրիպակները, դատելու անոնց որակը : Ի՞նչ որակի
մասին է խօսքը. երբ հին բնագիր մ'է, որ կտպուի, մանաւանդ երբ մեռողա-
կան բազմաթիւ սխալներ է՝ որ կարձանագրուին, ալ ի՞նչ որակ : Կատար-
եալ ճշտութեամբ պէտք է որ տպուին անոնք առանց որեւէ վրիպակի :

Արմատակաի բառարանի 1-1000 էջերը վերջապէս պիտի հոգամ(8) : Ար-
դէն դատեմ եմ, կմնայ միայն 16 էջ պակաս : Բայց երբ Դուք կորէք թէ կնա-
խընարէք երբորս մեւր, ես չպիտեմ թէ այդ ո՞ր մեւն է. որովհետեւ ես նա-
մակիս պատճէնը պահած չեմ եւ առաջին, երկրորդ եւ երրորդ առաջարկներս
չարքով չգիտեմ : Աւելի ճիշտ՝ զրեցէք(9) :

Մարքիարտի հեռ բանակցութեան արդիւնքին կպասենք(10) ես եւ Ս-
հանջանեանը(11) :

Գրապալարտին յայտնեցի ինչ որ ըսած էիք : Հանդէսէն ո՛չ մի օրինակ
ստացուած է : Կպասեմ իմ օրինակներու սպահովեալ առաքման Ձեր առա-
ջարկած ձեռով :

Պինդրեմ որ որեւէ ձեռով չարդարացնէք ն. Ազրալեանի հրատարակու-
թեանց անմտութիւնը(12) : Ինչպէս ժամանակին Բատրուպանի(13) յօգուած-
ները տպագրելու մէջ յանցաւոր էք եղած (եւ այդ Դուք այստեղ(14) խոստո-
ւածնեցաք) : Հիմայ ալ յանցաւոր էք Ազրալեանի ծարուսքները հրատարակե-
լու մէջ, շ. քեր < պրս. biver ստուգարանութիւնը(15) թողելով՝ ելլել
հ. անհամար բառէն անանցել, յիմարութիւն մ'է, որ ո՛չ մէկ կերպով կա-
րող է արդարանալ : Նման խոշոր յիմարութիւն մ'ալ սպիտակ բառի բնիկ հայ
լինելու մասին իր գրութիւնն է(16) : Երեք նշան միասին ունի սպիտակ բառը՝
փոխառեալ լինելու պահանջներէ(17) : Այլ, տ (բնիկ լինելու պարտադրին
պիտի ըլլար ք) եւ ակ վերջաւորութիւնը (որ միայն պահաւանկան է) : Կրնայ

ժարդի հարկէ Զեր ըսածին պէս զանազան կարծիքներ ունենալ (ինչ-Մառ, Karst, նոյն իսկ Բատրուպանի), բայց Ազրալեանինը կարծիք չէ, այլ դիտութեան բացարձակ տգիտութիւն: Karst եւ Մառ, կամ Բատրուպանի, չպիտի ըսէին թէ սպիտակ բնիկ է, որովհետեւ անոնք զիտեն բնիկի եւ փոխառեալի մասին տրուած օրէնքները: Ազրալեանը չդիտէ եւ այս լզիտնալով հանդերձ զրեւն է դատապարտելի: Աւելի դատապարտելի էք Գուք, որ այդ կարգի բաներուն լայն տեղ կուտաք Հանդէսի սուղ էջերուն մէջ:

Esquisse-ի նոր Հրատարակութեան մասին Meillet-ն ինձ գրած էր(18): Ամէն կերպ յորդորեցէք որ ընէ այդ բանը: Վիեննայի Միխիթարեանց մեծագոյն արժանիքներէն մէկը պիտի ըլլայ հայերէնի միակ համեմատական քերականութիւնը Հրատարակած ըլլալը:

Karst-ի Origines-ը ստացայ (10 տոմար)՝ գրողմանիչ փակցուած էր 2.68, ասիկա ալ տուարի վերածեցէք եւ ինծի ըսէք, որպէսզի Գիտական Ինստիտուտէն պահանջեն: Գիրքը անոնց ծախեցի:

Հիմայ ունիմ Երկու խնդիր Ձեզի: —

1) Գինդրեմ որ մէկ օրինակ գնէք եւ ուղարկէք ինձ ապահովեալ ծրարով՝ La Revue de stomatologie 1931 թիւ, յիմ-մայ. (յաջորդներն ալ ապագային կատանաք) — Հասցէն՝ Editeurs: Masson et Cie, Bould. St. Germain, 120, Paris VI.

2) Աւելի կարեւոր եւ ժարդատիրական մի խնդիր: Հոս կայ հին ուսուցիչ մը՝ Լեւոն Ռանսամանեան, պետական թոշակի արժանացած. Երկու շափահատ որդիները անֆէն մեռան. աղջիկ մը ունի, որ նոր աւարտեց համալսարանը. ամուսնական դժբախտութեամբ մը քանի մը շաբաթ առաջ մը տուար խանգարում ունեցաւ. հայրը յուսահատ դրութեան մէջ է. բժիշկը ըսած է թէ կարելի է բժշկել, եթէ սրսկուի այս ինչ դեղը, որ միայն Գերմանիա կայ: Գիտեց ինձ եւ խնդրեց որ բերել տամ: Ես նախ դիմեցի Ձեզի բժշկին եւ խորհուրդ հարցուցի: Բժիշկը բացաւ կանոնադիրքը եւ կարգաց հետեւեալը — Վորեւէ Ֆիրմա կամ գործարան իրաւունք չունի որեւէ դեղ ուղարկելու անհատի մը: Որեւէ անհատ իրաւունք չունի որեւէ դեղ ստանալու արտասահմանէն՝ վաճառելու կամ այլ նպատակով: Բայց հիւանդ մը կամ հիւանդի տէրը կարող է արտասահման քնակող որեւէ անհատ ստանալ որեւէ դեղ. դեղը կուզայ մաքսատուն, հիւանդը իր ղեկատամով կնիւրկայանայ մաքսատուն եւ ազատօրէն կտանայ ուղարկուած դեղը: — Այս օրէնքի հիման վրայ, ես հիմայ Ձեզմէ թախանաղին կիսնդրեմ, որ հող Վիեննա գնելով եւ կամ Գերմանիայէն Ձեզ ուղարկել տալով ստանաք Հետեւեալ դեղը. — Freiburg (Breisgau) Physiologisch-chemisches Laborat. Hugo Rosenberg, Pyliferstärke I, II, III, IV (ամէն մէկէն Երկու տուի) եւ V, VI, VII (ամէն մէկէն մէկ մէկ տուի):

Այս դեղերը Գուք անձամբ հող ստանալէն յետոյ, խնդրեմ ապահովեալ ձեռով ուղարկեցէք Հետեւեալ Հասցէով՝ Erivan, Rue Amirian 23, Lévon Khansaniamian. Առաքումը եւ գինը (տուարով) ինծի ծանուցէք: Եստ կիսնդրեմ որքան կարելի է շուսպ խաւրի որ հիւանդութիւնը շատտեղանայ:

Սրտադիմ եւ անձկալի բարեկեցութիւն իմ սիրելի եղբոր [...](19):

[Հ. ԱՅԱՌԵԱՆ]

(1) Ցէս համակ 25. Ծանօթագրութիւն N:

(2) Երկուսի գիտական համայնական Հրատարակութիւնը 1971-1970 թթ. ապր-

զեր՝ Վերահրատարակից Աճառանի շնորհակալ արձուագով քառարանը, ապագետից վեց եւսույլ, իր աստղը վերանկարծ չորս ապագեր հասարի, ըստ որում յուրեւանը տեղադրեալ իր տեղումս, զանազն ամսօրնայնի 1963, էջ 464-465-ում Աճառանի մասին խօսելիս է. Ն. Ազիբեանը մէջբերել է այս նամակի սկզբից մինչեւ այս ընծայէ բառը:

(3) Բառարանի յանդուարձուց. իր աստղում էր. քովակազում էր նաև աստղաբանն ու վերջուրանը. պատասխանել է Ն. Ազիբեանի դիտարկութիւններին թէ քանիսին:

(4) Տեմպ (տես:), հայ: գիտագիտ:

(5) Բառարանի ապագետիցը Աճառանի ձեռագրով էր:

(6) Պէտք է ջնարկատար պատգամը է. Ն. Ազիբեանի պատմադրական աշխատութիւնները, որովհետև նա թոյլ է տուել պատմադրական անճշտութիւններ, որի է անպատշաճիկ ենթադրութիւններ: Ըստ նրա՝ Տրդ. զարի պատմագիրը եղել է վասն վարդապետի և շայնք պատմագրիցի գործը պատկերում է 572-590ի իւրմիջ Վարդանի դիտարկում աւարտարութեան պատմութիւնը (եղիշէ վարդապետի մի քանի Գառնութիւն շայնք պատմագրիցի, հասար. Ա., 1882, հատոր Բ., 1886):

(7) Քրտագնութիւն եղիւ ճանաչելու, ունի նամակ 23, Ժանթարութիւն 4:

(8) Խոտը շնորհակալ արձուագով քառարանի Բ. հատոր 1-1000 էջերի վերաբերել է, որ Աճառանը պէտք է ուղարկէր վերնում:

(9) ՏՆ՝ նամակ 25, սկիզբը:

(10) ՏՆ՝ նամակ 26:

(11) ՏԵ՝ նամակ 23, Ժանթարութիւն 7:

(12) ՏԵ՝ նամակ 25ի Թ. Գ.:

(13) ՏԵ՝ նամակ 10, Ժանթարութիւն 10. Բիւր (շնորհակալ արձուագ), 1926, էջ 70-72):

(14) Երեւանում. է. Ն. Ազիբեանը գրել է. «Վասնիստ անտիքիս իրն հետ տեղի ունեցաւ 1924 Նոյեմբերին Երևան: Այնուհետև յոմայի կը տեղափոխուի մինչև 1928 Ապրիլը, աւրիցն՝ Ազիբեանի ձեռնարկումը (շնորհակալ արձուագ), 1953, էջ 450):

(15) շնորհակալ արձուագով քառարանում թիւրի ստուգարանութիւն է պահուած լինելու հետեւ, յանդի. պահուած էն իմը, մոնաստեր պաշտօնէն հետեւ (LIVRÉ) լինելու նամակի սկիզբ. Ն. Ազիբեանի կրթութիւնը ինչպէս ստուգարանութիւններ պատմութեան մէջ:

(16) Ն. Ազիբեան, Երևան (շնորհակալ արձուագ), 1923, 532):

(17) Ապագետ: Վշնորհակալ արձուագով քառարան՝ սոյնտակ, պահուած էն թիւրի (ըստ շնորհակալ արձուագի) «Ըստ այսմ մեր բառի նախածին է սպիտակ, որ անուշտ է լինող է գարնելի: [...] Ազիբեանի շնորհակալ արձուագը 1929, 532 համարում է թիւրի հայ (տեսը էր որովհետև այս զեպրում պետի ունեւայինք ք եւ ոչ թէ ա, շնորհակալ արձուագի վերջուրանութիւնը):

(18) Antoine Meillet, *Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique* (Ուրուագիտի գրագրական հայերէնի համեմատական էրագրութեան), Վրեան, Տրդ. թուրիքիտեան պատմագրութիւն, 1938: Մեր հարկին թարգմանութիւնը անտեղ է:

(19) Նամակի մեր արտաստեղծի մրցի մի քանի բառ, ըստ որում ստուգարանութիւնն ու թուականը լին երեւոյնի թիւրի ոչ երկը կարողուր պատմագրով. աստիքիւր: ըստ շնորհակալ արձուագի, 1953, էջ 464ի եւ Արքայութիւն Գր. Մանեանի ստուգման:

[4 Նոյ. 1936, Երևան]

Միւրեւի բարեկամ,

Ստացայ 14 մարտի Ձեր գրութիւնը եւ պատասխանեցի 19 ապրիլին. մինչեւ այսօր պատասխան ստացած չըլլալով, ենթադրեցի որ կամ նամակս կորսուած է եւ կամ նորէն Լեւոնտանի ճամբորդելու էլած էք: Պիտի կրկնեմ նամակիս բովանդակութիւնը:

1) Թեւհրանի Զեռագրաց ցուցակի վորմերը սրբագրած ուղարկեցի Ձեզ:

միայն երկու էջ կար անսխալ, միևնույնը ամէնն ալ, նոյն իսկ գերմաներէնը սխալներ ունէին: Եթէ ասոնք ուղղելու հնարք կայ, ուղղեցէք: Իսկ եթէ կարելի չէ, կարեւորները վրիպակաց ցանկ մը կազմեցի, այդ ցանկը դրէք զրէք զրգրին վերջը: Բայց զրգրին երեսը խոշորատառ մեծ սխալ մը կայ, անիկա անհրաժեշտ է ուղղել: Անուաններու ցանկն ալ նորէն կազմեցի եւ խրկեցի: Կիսնղրէի խնամով տպել, որպէսզի անոր համար ալ վրիպակաց ցանկ մը կազմել հարկ չըլլայ:

2) Ձեր ուղարկած գումարը ստացայ՝ նոր կուրսով(1):

3) Ստացայ Ձալըխեան քեր[ակահուժիւնը](2). Ի՞նչ պէտք է վճարել:

4) Meillet-ի Esquisse-ը(3) եթէ տպուեցաւ, կիսնղրէի օրինակ մը հոս-ցընէք ինձ. նոյնպէս Թեհրանի ցուցակէս մէկ օրինակ կազմեալ. աւելի պէտք չէ:

5) Եթէ հարկ ըլլար Հայոց լեզուի պատմութիւնը(4) տպել Հանդէսի մէջ, արտատպելու պայմանով, քանի՞ օրինակ կարող էիք արտոմարել հեղինակին, իբրև հօծորար(5):

6) Թէոնը(6) լուսանկարչի մը հետ զացինք քննեցինք. լուսանկարին համար պահանջեց մէկ էջին՝ ապակին ալ միասին տալով՝ 12 ռուբլի. ուրեմն verso եւ recto 24 ռ. — Եթէ Լրկու օրինակ տպուի, Վ. Բ. 26 ռուբլի. Եթէ երեք օրինակ տպուի, Վ. Բ. 28 ռուբլի: — Բայց՝

7) Տարը օր առաջ ժողովո՞ւմս(7) նախագահ ընկ. Գուլոյեանը(8) մեր գաստիօններէն ժողով մը գումարեց եւ պահանջեց որ ամէնքս ալ մէյմէկ դիտական աշխատանքի լծուինք, ուսումնասիրելով էջմիածնի եւ Երեսանի 9000 ձեռագիրները, խոստանալով կարաժարութեան կողմէ ամէն աջակցութիւն: Քանի մը դիրք որոշուեցաւ հրատարակել այս տարի որոնցմէ եւ Սեբեհ(9) (պիտի պատրաստէ Մալխասեանը) եւ Թէոնը (պիտի պատրաստէ Մանանդեանը): Վերջինս յանձն առնելով դործը իր վրայ, խոստացաւ համեմատել ամբողջ յունարէնի հետ, սխալները ուղղել եւ եւ ըստ ամենայնի դիտական հրատարակութիւն մը պատրաստել: Այս պարագային Ձեր մտադրութիւնը ընդունայն կըլլայ, որովհետեւ ինչպէս իմացայ, Ձեռագրին լուսանկարը հանել եւ երկրէն դուրս ուղարկելն ալ ասանձին արտօնութեան կարօտ է, որ այս պարագային կրնայ շփոյլատրուի:

Ընկեր Ջօրեանը կուզէ ձեռնարկել խոշոր գործի մը՝ կազմել Հիմ Հայ մատնագրութեան համարաբառը. ըսի իրեն թէ Վիեննացիք արդէն կազմած են Ռոկեզարի համարաբառը. միտք ծաղեցաւ երկուստեք փոխանակութեան: Ուստի որոշեցինք լուծել խնդիրը հետևեալ ձևով. առաջին հերթին Ջօրեան (եւ ընկերներ) կկատարեն նորոնացւոյ համարաբառը, մէկ օրինակ (ձեռագիր), կխաւրեն Ձեզ, պայմանով որ Դուք ալ խաւրէք Փաւստոսը: Այնուհետեւ կուզան ուրիշ գործեր, եւ այսպէս մինչեւ վերջ(10): Համաձայն էք: Եւ կամ եթէ չէք, ի՞նչ ձեռ կատարակէք մեզի:

8) Ջօրեանը կիսնղրէ Ձեզմէ որ առ այժմ չպատահերտ, ձեռակերտ եւ ազարակոչ բառերու բոլոր սակեղարեան օրինակները տայիք իրեն, եթէ կարելի է. պէտք չկայ անուշտ վկայութիւնները մէկ մէկ գրելու, այլ միայն գրքերու էջերը: Եթէ կուզէք այս նիւթը Հանդէսի մէջ տպեցէք, իբր ատանձին յօդուած(11):

10) Հանդիսէն ստացած եւ 1935 թ. 10-12 եւ 1936 թ. 1-3. տարին վերջանալու միայն է եւ Գուռը դեռ Հո՞ւ է ք: Հիմալ արդէն արածութիւն կայ Հաննդէս ստանալու. եւ գրադարանի մէջ ալ տղատ կարելի է կարդալ: Հաւ կըլլայ, եթէ Գուռը ալ Հրատարակութիւնը կանոնաւորէք եւ ժանաւանդ ունենաք զանազան աշխատակիցներ եւ ո՛ր թէ միայն Հ. Ակիբեանը(12):

Ձունենալով այլ ինչ է գրել, մնամ սպասող Ձեր պատասխանին՝

Յարգանաց բարենեւրով
Հ. ԱՃԱԹԵԱՆ

1936 Նոյ. 4
Երևան

(Շար. 9 եւ վերջ)

- (1) Կուրս (ոտև.), Հայ. գրնթայիկ սակարանային արժէք, սակագին:
- (2) Վ. Պարթևեան, Վերականգնութիւն հայկական լեզուի, աշխատատեղաւ է Հ. Արսէնէ Այսթրեան, Վրեննա, 1885:
- (3) Տէ՛ս եւմտի 26, Եանթարտութիւն 19:
- (4) Հր. Անտեան, Վերջոց լեզուի պատմութիւն, Ա. մաս, Երևան, 1940, Բ. մաս, 1951:
- (5) Հայ. «Վերնակին տրուող գրամական վարձատրութիւն»:
- (6) Հ. Ն. Ակիբեան, Վերանայ Յազար Յարտասանակոն կրթութեանց (Կամ Վերանայ Յարտակրթութեան) Վերանայ Մասնորոշարանի (1925 թ.) Թ. Կ70 Ձեռագրի մասին եւ ուսումնասիրութիւնը հիմնելի է ուղարկել Կատարան զուգրականներ վի աջ: Յոգանակ վերջում՝ «Վեր վաճաճն է կայելիմ բնագիրը արտադրութեանը երատարակուած տեսնել: բնագրին պատաստութիւնը սիրով պիտի ուղիմ առնել յանձն, երբ կարն: Հայաստանի Կատարակրթութիւնը կարող տրամադրել մեզի օրինակութիւնը:
- (7) Ժողովարան 12. Վերանայութեան կոմիտէներէ խորհուրդ:
- (8) Արքայապետ Կոնստանտին (1886-1936), Պարս. Հայաստանի պետական տպատո՞ղ, 1935ին ժողովարանի նախագահ:
- (9) Մար. Մայրասեան(ք), Վերանայ եպիսկոպոսի պատմութիւն, քրեական Հրատարակութիւն, Երևան, 1939:
- (10) Մի 16 տարեց է վեր Երևանում մեթոդաբան լոյս են տեսնում Հայ Հին գրականութեան էջերէ շատ արժէքաւոր Համալսարաններ: շինք կարծում, որ զբանցից առաջ կըլի են աղբիւրներ:
- (11) Վերանայ ամսորեկում աղբիւր բան լոյս չէ տեսել:
- (12) Արքայապետ Կրեանտեան եւ Կատարակութեան թիւ. Հ. Ն. Ակիբեանն էր լոյսում Վերանայ ամսորեկում:

« Բ Ա Գ Ի Ն »
1985 Ի Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ռ Թ Ի Ր Ն

<u>Հեղինակ</u>	<u>Խորագիր</u>	<u>Թիվ</u>
ԱՐՄԱՆՑ	Ազօբ-բ	1
»	Մովի հետ	1
»	Ես վերջինը չեմ	10
Փ. Հեղինակ	Իշխաա	1
»	Ազամարդու կարծիքն ներքեւ	8
»	Հիմա որ չկաա	8
»	Անկեզու երգը սիրոյ	12
Գ. ՊԵՂՏԵԱՆ	Անդաստան	2
»	Էր	6
Յ. ՊԵՂՏԵԱՆ	Ազատ գտի	2
ՎԱՐԱՆ ՈՒԺ	Նկարիչը կը հրապարակէ իր հայեացքները	2
»	Թարառ Ռուլին	6
»	Յուշարարը	10
Ե. ՉԱՐԵՆՑ	Մ. Ի յիշատակին	2
»	Բանաստեղծութիւններ	2
»	Երբորդ այգաբաց	8
»	Հնի համար	3
»	Երեւ տրիտես	8
»	Մահուան տեսիլ	4-5
Ա. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Քար շարժումներ	3
»	Ամառարտ կանչ	3
»	Հարցում	3
»	Պատարագ	3
»	Առաջարկ	3
»	Երկուսի ցատեր	7
»	Կը լուր վերէն էարին	7
»	Կապոյտ յիշողութիւն	7
»	Ազատ մտեցում	7
»	Պաստառին դիմաց	7
»	Օրենքերգ	7
Պ. ՀԵՐԵԱՆ	Տրտում երբիւմեր	8

ՀԵՂԻՆԱԿ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Ա. ԱՆԿԱԿԱՆ	Օր արթնացման	3
»	Ծնունդ	3
»	Ամօրիս է, Տէ՛ր	3
»	Ով յիշագուշտան գարդարուն մարմին	3
»	Մարմին առ, օր	3
»	Կանցման քերթը յիշատակների	3
»	Անցան օրերը	3
»	Եւ ահա անձուկ օրերի դիմաց	3
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Լոյսը	4-5
»	Աստուծոյ լույսը	4-5
»	Առաջին ծիխը	4-5
»	Les Premiers Germes	4-5
	(Traduit par Luc-André Marsel)	
»	Կալերու գիշեր	4-5
»	La Nuit Sur L'aire	4-5
	(Traduit par Vahé Godel)	
»	Առկայծ հրազ	4-5
»	Վարուժմակիս	4-5
»	Կակայենք	4-5
»	Mohnblumen	4-5
	(Aus den Armenischen von Raffi Kantian)	
»	Կարմիր հողը	4-5
»	The Red Soil	4-5
	(Translated by Diana Der Hovanesian)	
»	Հայկայանք	4-5
»	Օրհնութիւն	4-5
»	(المغزل (تمريض نظار ب. نظاريان)	4-5
»	(بهار سنابل الفصح (تمريض نظار ب. نظاريان)	4-5
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Աստղերը	4-5
Ս. ՏԱՐՕՆՑԻ	Դանիէլ վարուժան	4-5
Լ. ՄԻՆԱՍ	Ֆերբրուր մեծ	4-5
Ն. ԹԱՆՄԱՋԵԱՆ	«Առկայծ հրազ»	4-5
	(իւմբրոզ եւ երաժշտութիւն)	
»	Դանիէլ վարուժան	4-5
»	Դանիէլ վարուժան	4-5
»	Դանիէլ վարուժան	4-5
»	Յորն օրերուն	4-5
»	Վարուժանին	4-5
»	«Կերբամ աղբիւրը լոյսին»	7
»	Դեռեհական կիրակի	7
»	Խեցի	7
»	Կայան	12
»	Միբաժ	12
»	Շուկայ	12
»	Հիլլեմսի	12

Հեղինակ	Խորագիր	Թիվ
Յ. ՄԱՆՈՒԿՅԱՆ	Կախման կէտեր	8
» »	Նաւակատիք	8
» »	Հառազայրայիմ միջօրէիմ	8
» »	Յայգալուսայիմ	8
» »	Առփիա	8
ԵՒ. ՊՕՏԱՃՅԱՆ	Դիւցազեամարտը	9
Ա. ԵՐԿԱԹ	Մուսա տաղ	9
ՅՈՎ. Հ. ՇԻՐԱՋ	Մասալիեցիներին	9
Ն. ՀԱՊՐԻ	Հնգել մուսա	9
Ռ. ՍԵՒԱԿ	Հին եղամակ	10
» »	Վերջին կոչը	10
» »	Ինչու	10
» »	Երբալ	10
» »	Քանգակներ գանգակներ	11
Վ. ՔԵՔԵԱՆ	Ապահարգան	11

Ա Ր Չ Ա Կ

Ն. ՊԵՇԻԿՔԱՇԷԼԵԱՆ	Միքրոնեգիա	1
» »	Միքրոնեգիա	2
» »	Միքրոնեգիա	3
» »	Միքրոնեգիա	6
» »	Միքրոնեգիա	7
» »	Միքրոնեգիա	8
» »	Միքրոնեգիա	10
» »	Միքրոնեգիա	11
Է. ՀԵՄԻՆԿՈՒԷՅ	Մաքուր, լաւ լուսաւորուած տեղ մը (Հայացուց՝ Յ. Պէրպէրեան)	1
Պ. ՄՆԱՊԵԱՆ	Միջնարար — 4	1
Յ. ՕՇԱԿԱՆ	Շահագրը	1
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Ո՛ւր մնացին 1925 թուականի ծնուածները	2
» »	Ժամադրութիւն	7
» »	Լողիս	11
Ս. ԱՍԱՏՐԵԱՆ	Ռոյնա	2
Ա. ՊԱԼԵՆՅԱՆ	Յոյն բանաստեղծուի մը (Հայացուց՝ Յ. Պէրպէրեան)	3
Ր. ՔԷՊԱՊՅԱՆ	Սեպտեմբերի սեմին	3
» »	Դիմաց	8
ԱՆՆԷԼ	Խնկաբերակները	6
Յ. ՎԵՐՅԷԼ	Մուսա տաղի քառասուն օրերը (Յրամսերէնէ թարգմանեց՝ Տոքթ. Բ. Փափագեան)	9
Հ. ՊԵՅԷԼ	Մարտի տոնի արձանագրութիւն	10
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	(Ռուսերէնէ թարգմանեց՝ Ան. Սարգսեան) Աւագանը	10

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
ԵԳ. ՊՕՅԱՅԵԱՆ	Իմ իրականություն	12
» »	**	12
Լ. ՄԵԼԻՔԵԱՆ	Վերադարձ տուն	12
Փ. ԲԱՖԻԱ	Գիշերանքի թիշիկ մը	12
» »	Վնիտը	12
	(Հայացուց՝ Բ. Քեյսապետ)	
Ռ. ՍԵՒԱԿ	Կռուկը	12

Ի Մ Ա Յ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Ժ Ո Ւ Մ

ՍՏ. ԹՈՓՉԵԱՆ	Անհունի անգրադարձը	1
Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ	Տիրամ Ջրաճեան	1
Վ.Լ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Ինտրա	1
Գ. ԱՅԵՄԵԱՆ	Գրական բնադատութեամբ նոր եւ եզակի հղանակ	1
Մ. ՄԻՆԱՍԵԱՆ	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	1
* »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	2
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	3
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	6
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	7
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	8
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	10
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	11
» »	Հրաչեայ Անտանի նամակները Վիեննայի Միֆարեաններուն	12
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Յակոբ Յակոբեանի հետ	1
» »	Յակոբ Յակոբեանի հետ	2
» »	Յեզիմ հարազատ եւ ամբողջական ձայնը	6
Մ. ԻՇԽԱՆ	Պ. Սնայեանի «Արագիչ»ը	1
» »	Լճյալը	4-5
Յ. ՄՈՎՍԷՍ	Աշտ Աղայեան	3
Ը. ՄԿՐՏՉԵԱՆ	Երկու հրատարակութիւն	3
» »	Զեյթունովակեան գրականութեան դիմագիծն ու ընթացքը	7
» »	Քամուտը երգիծանքի մտայններ Արեւիկեան երապայից	10

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻՒ
Յ. Գեղարձ	Գանձի վարուժան՝ հայ լեզուի ու ոգիի քիրելոցումը	4-5
Ս. Պ. ՏԱՏՈՅԵԱՆ	Գանձի վարուժան՝ իմացական-գեղարվեստական դրոյթը իրեն հակաբեց համայնապաշտութեան	4-5
Ն. ԳԻՄՍԻՔՍԵԱՆ	Ազգային՝ մշակույթ, թէ մշակութային ազգ	4-5
Հ. Ա. ՄԱՐՍԵԼ	«Հացին երգը»	4-5
Յ. ՊԱՐԱՊԵՆՑ	Հացի եւ լռոյսի երգիչը	4-5
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Երգին արձագանգը	4-5
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Կնոջական դիմացատկերը վարուժանի փրքադաշտեան մէջ	4-5
> >	Բազմալար փնարականութիւնը Շիրազի գրական ժառանգութեան	6
> >	Ռուբէն Սեւակ	10
> >	Ռուբէն Սեւակ	11
> >	Ռուբէն Սեւակ	12
Վ. ԹԵՔՆԱՆ	Իրեն ողորի եւ նախահայր	4-5
> >	Ամերիկահայ գրականութեան 1960-84 շրջանի էստարներ եւ հարցեր	7
Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ	Հեքիանտարար	4-5
Ա. ՇԱՐՈՒՐԵԱՆ	վարուժանի «Տարեգրութիւն»	4-5
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Պալեոգրամի աշխարհը	3
> >	վարուժան՝ մեր դասականը	4-5
> >	Հեռակայ գրոյց Յ. Կարապետեանի հետ	11
Շ. ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆ	Գերման վիպապաշտութիւնը եւ Հոֆման	6
Օ. ՅԻԼԻՓ	Անընդհատութիւնը յաջընդոսմերով	7
> >	(Հայացուց՝ Լ. Մկրտչեան) Անընդհատութիւնը յաջընդոսմերով	8
> >	(Հայացուց՝ Լ. Մկրտչեան) Հարցադրոյց Էօժէն Եննեսէյի հետ	8
> >	(Հայացուց՝ Յ. Պերպերեան) Նշմարներ բանարուեստի մէջ յանձնառութեան հարցի մասին	8
Տ. ՏԻԻ ՏՈՒՐՆԻԷ	Մովսէս լերան հայերուն ազատագրումը	9
Կ. ՊԱԼՃԵԱՆ	Մուսա լերան հայերը	9
(վազգէն Ա. Կաթողիկոս)	Հերոսներու ոգիով	9
ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ	Ֆրանց վերփելի գիրքը	9
Ա. ՉՕՊԱՆԵԱՆ	«Մուսա տաղի քառասուն օրեր»	9
Հ. Գ. ՎԱՋԱՐԵԱՆ	անգլերէն թարգմանութիւնը	9
Գ. ԱՐԳԱՐԵԱՆ	Գանձի վարուժան եւ Ֆրանց վերփելի	9
ԱԻ. ԽՍԱՀԱԿԵԱՆ	Ֆրանց վերփելի «Մուսա տաղի քառասուն օրեր»	9
Մ. ՓԻՐՈՒՄԵԱՆ	Կամայք Ֆրանց վերփելի «Մուսա լերան քառասուն օրեր» վեպում	9
Ե. ՊԵՏՐՈՎՍԿԻ	Անգամգ, որին յանապ աշխարհը	9

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Մ. ԳՈՒԴԻՆ	Արիւսքեան բարձունից	9
«ՅՈՒՍԱՔԵՐ»	Բաց նամակ Յրանց Վերֆէլին	9
ԷՊ. ԶՐԱՄՇԵԱՆ	Ռուբէն Սեւակ	9
Յ. ՕՇԱՎԱՆ	Ռուբէն Սեւակ	9
Բ. ԳԷՊԱՊՃԵԱՆ	Մօտեցում Յրանց Քաճֆայի	12
Գ. ԶԱՆԻԿԵԱՆ	Որդին, որ սվխա էր եկել հօր արձանին	12

Խ Մ Բ Ա Պ Ի Ն Կ Ա Ն Ն Ո Ւ Ր Ե Ր

Հեղինակ	ԹԻԻ
Հրճուայի բարեշքում	1
«Քան տարուայ գործ է այս»	2
«Քան տարուայ գործ է այս» — Բ	3
Վարուժանի ընծան, մեր փառքը	4-5
Դ. Վարուժան թուականներով եւ թիւերով	4-5
Նախածանոթեան ընծան...	4-5
Դերձակուհի մը, դերձակուհիները եւ անյայտ կիներ	4-5
Թարգմանչական հարցեր	4-5
Վարուժանի հեթանոսութիւնը եւ Զարեհ	4-5
Դ. Վարուժան եւ Ե. Զարեհ	4-5
Բանին կոստանդանուք	4-5
Դ. Վարուժան՝ հիւանդի հայտնիք եւ վարարում օրենքով...	4-5
...Դէպի արարական գրականութիւն	6
Քառասուն օրերը... Յրանց Վերֆէլ (1890-1945)	9
«Քառասուն օրեր»-ու թարգմանչական պատմութիւն	9
Հայերի Պէոյլ	10
Ընտիրը, ընտիրները...	10
Թարգմանիչ մը եւ եօթը գործեր	10
Կամուսար արարելու	10
...Եւ թուրքին վկայութիւնը	10
Յակոբ Քարայեհն	11

Մ Հ Ա Վ Ո Ւ Ր Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

1, 2, 3, 6, 7, 8

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ՝

ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

«ՔԱՊԻՆ» իր 24րդ տարին կը բնակչիկ յայտը բնով: Լայս կը սնունտ տարին 12 բիւ: Բաժանորդագրութիւնները կը ներառեն օգտին քարտարին ծախսերն այլ: Ծրէ հասցէներու փոփոխութիւններ սեղի ունեցած են, կը յնարենք տեղեկացնել մեր ներկայացուցիչներուն կամ ուղղակի գրել մեր հասցէին:

Արտասահմանի մեր յարգայ բաժանորդներին կը յնարենք, որ 1980ի սկիզբը կատարեն օտարեւր կամ իրենց բաժանորդագրի վերանմանքը՝ կամ ազգային մեր հասցէին եւ կամ մեր ներկայացուցիչներուն:

Այլապէս ստիպուած պիտի ըլլանք դադարեցնելու օտարեւրները:

Իսկ արտասահմանի մեր ներկայացուցիչներին կը յնարենք, որ վարչութեան զրկեն 1980ի բոլոր հաշիւները, բաժանորդներուն ամբողջական ցանկերն ու հաշիւները՝ հզգրիտ հասցէներով:

«ՔԱՊԻՆ»ի բաժանորդագրութեան պայմանները նկատեալներն են:—

Տարեկան բաժնեկի՞»

ԼԻԲԱՆԱՆ 200 Լ. օսկի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 40 \$այսր

Հաստվածքա՞»

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. օսկի

ՍՅՈՒՄԱՆ 20 Ս. օսկի

«ՔԱՊԻՆ»ի ՆԵՐԿԱՅՈՒՑՈՒՑՆԵՐՈՒ ՀԱՍՑԷՆՆԻՔ

Mr. J. KIRAKOSSIAN
6 Government Rd. — Beacon Hill
Sidney N. S. W. 2100

AUSTRALIA

Mr. HAIG GAKAVIAN
9417 Curran Road
Silver Spring M. D. 20901

U. S. A.

ASBAREZ PUBLISHING COMPANY
419 W. Colorado Blvd.
Glendale Calif. 91204

A Z A D O R
11, Platea Mitropoleas — Athens 117
GREECE

A. MAROUKHIAN
Rilmanstr. 51, 8000 München 40
WEST GERMANY

Mr. KRIKOR HOTOYAN
c/o HEBDOMADAIRE HORIZON
3401, Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5
CANADA

Mr. MELKON SOUKIASSIAN
C. P. 239 35100 Padova
ITALY

Mr. ARTO TAVITIAN
24, Kyriacos Matsis st. (Flat 4)
Ay. Dhometios — Nicosia 102
CYPRUS

« ALIK » Armenian Daily
Jamhuri Islami Ave.
P. O. Box 422 — Teheran
IRAN

SASSOUN CHEKERCHIAN
BOOKSHOP
SHARSAN AVE
New Julfa - Isfahan
IRAN

D. R. DICKRANIAN
47, Shuttleworth Rd.
S. W. 11, 3 DH — London
ENGLAND

Mr. ANDREAS CARAMANIAN
c/o « ARMENIA »
El Salvador 4627
1414 Buenos Aires — Rep.
ARGENTINA

Առաջնութեան կատարել ներուրայ հասցէի՞»

ADMINISTRATIVE DIRECTOR
c/o PAKIN REVUE
P. O. Box 11 - 8404
BEIRUT — LEBANON



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. ՕՇԱԿԱՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԳԵԻԵԱՆ

Վ Է Պ

- Համազգայինի Վահե Սեբեան տպարան, 468 էջ, Պեյրուք, 1985:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ

ՀՐԱԶ ՏԱՄՆԱՊԵՏԵԱՆՆ

ԻՆՍՏՈՒՆԱՄԵԱՅ ՀԱԾՈՒԵԿԾԻՌ

Լաւորակ թուղթ, գեղատիպ, 128 էջ

« Դ Ր Օ Շ Ա Կ »

Օրգան Հ. Յ. Դաշնակցութեան
1905, 1906, 1907

տարիներու վերհրատարակութիւն

- Անձնանուններու, տեղանուններու եւ հաւաքական անուններու ցանկերով,
- Վերլուծական բովանդակութեամբ

692 մեծադիր էջ, Լաւորակ թուղթ, գեղակազմ

Համազգայինի Վահե Սեբեան տպարան

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ 12 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 15 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بأكيه
 مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
 المدير المسؤول
 السيد ارتين كارنيك قزنجيان

•
PAKINE
 REVUE MENSUELLE
 LITERAIRE & ARTISIQUE

Propriétaire
 Dr. A. AZANDJIAN

•
Բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԵՍԻ

Խմբագիր
 ԳՕՂՈՍ ԱՆԱԳԵԱՆ

Խմբագրության անդամներ
 ՅԱՐՈՒԹԻՐՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ
 ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Վարչական պատասխանատու
 Ս. ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒԹԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban
 Tel. 296898